

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՓՈՒԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ	
* * * — «Տո՛ւր զհամար տնտեսութեան քո»	679
ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ	
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Աստուծոյ դառնալ (Turning to God).....	684
ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ	
ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Մեկնութիւն Մատթեոս Աւետարանի (2.1-3).....	690
ՊԱՏՄԱ-ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ	
ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ — 90-ամեայ հունձքը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին	697
ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	
ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ԶԷՅԵԱԵԱՆ — Կանտի բարոյագիտութեան նորարարութիւնը	702
ՅԱՐՅԱԶՐՈՅՑ	
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Մեր ազգին ու հայրենիքին տագնապնէրը պէտք է միասնաբար դիմագրաւենք	708
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ	
ՍԵՂԱ ՄԱՐԿՈՍԵԱՆ ԽՏԸՇԵԱՆ — Երախտիքի յուշամատեան	716
ՆՈՐ ՅՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	724
ԺՈՂՈՎԱԿԱՆ ԿԵԱՆՔ	
* * * — Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր Ժողով (7-9 Դեկտեմբեր)	728
ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵՄԵՉԵԱՆ — Հայակերտումի եւ հայրենակերտումի առաքելութեան շարունակականութիւնը՝ նոր թափով	747
ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ	749
ՀԱՅ ԴԱՏ	751
ՏՕՆԱԿԱՆ	756
ԹԵՄԱԿԱՆ	759
ՊԱՐԳԵՄԱՏՐՈՒՄ	761
ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ	763
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ	769
Հ.Ե.Հ.Ո.Ս.	770
ՆԱՐԵԿԱՅԻ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ	771
ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ	773
ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԶԱՐՈՉ Ս. ԱԹՈՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ	781



ՊԱՇՏՏՈՆԱԿԱՆ ԿՄՍԱԿԻՐ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՅ
ՄԵԾԻ ՏԱՆԻ ԿԻԼԿԻՈՅ

ՂԱ. ՏԱՐԻ 2022

ՆՈՅՏԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԹԻՒ 11-12

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

«ՏՈՒՐ ԶՀԱՄԱՐ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՔՈ»*

Տնտեսի առակին ճամբով Զրիստոս այս պատգամը փոխանցեց, եւ կը փոխանցէ այսօր ու միշտ: Աստուածաշունչը լեցուն է նման յիշեցումներով: Հաշուետուութիւնը քրիստոնէական բարոյագիտութեան հիմնական սկզբունքներէն մէկն է: Արդարեւ, հաշիւ տալը կ'ենթադրէ պատասխանատուութեան մը կանչուած ըլլալ, առաքելութեան մը լծուած ըլլալ: Երբ Աստուած առաջին մարդուն պարտաւորութիւն մը տուաւ, հաշիւ պահանջեց: Հետեւաբար, նախ Աստուծոյ եւ յետոյ մեր պատկանած ազգին կամ կազմակերպութեան հաշիւ տալու գիտակցութիւնը պէտք է զսպանակիչ ոյժը դառնայ իւրաքանչիւր մարդու կեանքին ու գործին:

Նոյն պարտաւորութիւնը պէտք է ունենայ նաեւ քրիստոնէաներու համայնական կեանքը ներկայացնող եկեղեցին: Այս գիտակցութեամբ ու յանձնառութեամբ կը գործէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսու-

* Մոյն գրութիւնը խտացումն է 7-9 Դեկտեմբերին Կաթողիկոսարանի մէջ կայացած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Ընդհանուր Ժողովին առթիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի պատգամին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Կիրակի, 11 Դեկտեմբեր 2022-ին:

թիւնը, իր թեմերով ու կառոյցներով՝ պատասխանատուութիւնը, թափանցիկութիւնը ու հաշուետուութիւնը նկատելով իր կեանքին ու առաքելութեան հիմնական սկզբունքները: Կաթողիկոսութիւնը մէկ ամբողջութիւն է: Կաթողիկոսարանը վարչակազմակերպչական կեդրոնն է Կաթողիկոսութեան, որ կը ներառէ մեր թեմերը ու ժողովուրդը: Կարելիութեամբ կ'ուզենք ընդգծել, որ Կաթողիկոսութիւնը կը գործէ Ազգային Սահմանադրութեան հիմնական սկզբունքներուն վրայ պատրաստուած յատուկ կանոնագրութեամբ: Մեր բոլոր թեմերը, հետեւելով նոյն կանոնագրութեան սկզբունքներուն, ունին իրենց յատուկ կանոնագրութիւնները, իրենց ներքին դրուածքին ու միջավայրին պատշաճեցուած: Բոլոր կանոնագրութիւններուն պարագային, մեր ժողովուրդին հաշուետուութիւն կատարելու պարտաւորութիւնը առանցքային է: Թէ՛ Կաթողիկոսութեան եւ թէ՛ թեմերու կանոնագրութիւնները կը պահանջեն, որ մեզի յանձնուած առաքելութեան որոշ հանգրուաններուն հարկ է դառնալ ժողովուրդին հաշուետուութիւն կատարելու՝ բարոյական, հոգեւոր, կրթական, մշակութային, տնտեսական, վարչական ու այլ յարակից բնագաւառներէն ներս կատարուած գործին, մեր յաջողութիւններուն ու թերացումներուն մասին:

*

* *

Անցնող շաբաթ, երեք օրերու վրայ տարածուած Ազգ. Ընդհանուր Ժողով գումարուեցաւ Կաթողիկոսարանէն ներս, մասնակցութեամբ մեր թեմերը ներկայացնող Առաջնորդ Սրբազաններուն եւ աւելի քան հարիւր աշխարհական պատգամաւորներու: Չորս տարին անգամ մը գումարուող Ազգ. Ընդհանուր Ժողովին նպատակն է հաշիւ տալ մեր ժողովուրդին Կաթողիկոսութեան կողմէ կատարուած առաքելութեան մասին, եւ ապա ճշդել կատարուելիք առաքելութեան առաջնահերթ մարզերը: Արդարեւ, Ժողովի ընթացքին ներկաները համապարփակ ու իրապաշտ մօտեցումով քննեցին շուրջ 400 էջերու վրայ տարածուած Ազգ. Կեդրոնական Վարչութեան Կրօնական ու Քաղաքական Ժողովներու տեղեկագիրները: Ժողովը յատուկ գնահատանքով անդրադարձաւ այն իրողութեան, թէ հակառակ վերջին տարիներու յաջորդական տագնապներուն՝ համաճարակ, Արցախի պատերազմ, Պեյրութի նաւահանգիստի պայթում, Լիբանանի ու Սուրիոյ ընկերատնտեսական տագնապ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, Վեհափառ Հայրապետի առաջնորդութեամբ եւ Ազգ. Կեդրոնական Վարչութեան, թեմակալ Առաջնորդներու ու Ազգ. իշխանութեանց հետեւողական ու աշ-

խոյժ աշխատանքով բարձրագոյն աստիճանի պատասխանատուութեամբ կատարած է իր ծառայական առաքելութիւնը: Սա պահուն, Մեր բարձր գնահատանքն ու ջերմ շնորհակալութիւնը կ'ուզենք յայտնել բոլոր անոնց, որոնք զանազան կերպերով իրենց գործօն մասնակցութիւնը բերին մեր Ս. Աթոռին բազմատարած ու համազգային առաքելութեան:

Ազգ. Ընդհանուր Ժողովին կատարուած առաքելութեան արժեւորումին առընթեր, նաեւ լուսարձակի տակ առնուեցան մեր եկեղեցւոյ ու ժողովուրդի ներկայ կեանքին առնչուած խոր մտահոգութիւններ, լուրջ մարտահրաւերներ ու անյետաձգելի ծրագիրներ:

Առաջին հերթին, յատուկ նիստի մը ընթացքին անդրադարձանք *հայ ընտանիքին* պարզած ներկայ վիճակին: Հայ ընտանիքը, որ իր հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներով նկատուած է փոքր եկեղեցի, փոքր դպրոց ու փոքր հայրենիք, այսօր դժբախտաբար յատկապէս խառն ամուսնութիւններու ու ամուսնալուծումներու հետեւանքով սկսած է կորսնցնել իր հարազատ նկարագիրը ու նուիրական կոչումը: Արդ, հրամայական է հայ ընտանիքը հեռու պահել նման վատառողջ մթնոլորտէ: Այս գծով կարելոր կը նկատենք եկեղեցւոյ ու դպրոցին դերը:

Երկրորդ, մեր *եկեղեցւոյ բարեկարգումը* նկատեցինք անյետաձգելի: Եկեղեցին զմոռուած իրականութիւն մը չէ, ոչ ալ թանգարան, հեռու մեր կեանքէն եւ անհաղորդ մեր կեանքը յուզող խնդիրներուն: Եկեղեցին մեր հաւաքական կեանքին մէջ ապրող եւ իր միջավայրի ազդեցութիւններուն ենթակայ աստուածամարդկային կառոյց է ու միաժամանակ քրիստոսակեդրոն առաքելութիւն: Պատմութեան ընթացքին մեր եկեղեցին, պահելով իր հիմնական անհոգութիւնները, արժէքները ու մտածողութիւնը, միշտ փորձած է քայլ պահել իր շրջապատէն ներս տեղի ունեցող զարգացումներուն ու մեր ժողովուրդի սպասումներուն հետ: Նոյնը պէտք է կատարէ այսօր: Եւ որպէսզի աստուածաշնչական արժէքներու ու ճշմարտութիւններու կենսագործման ձգտող եկեղեցւոյ առաքելութիւնը դառնայ աւելի արդիւնաւետ, բարեկարգումը՝ վարչական, ծիսական եւ այլ երեսներով կը նկատենք կենսական:

Երրորդ, յատուկ ուշադրութեան առարկայ դարձաւ *երիտասարդութիւնը*, անոր տագնապները. մտահոգութիւնները եւ սպասումները: Յաճախ կը յիշեցնենք որ երիտասարդութիւնը մեր ներկան է, եւ ոչ թէ սոսկ ապագան: Մեր սպասումն է, որ մեր երիտասարդ-երիտասարդուհիները գործնապէս մասնակից դառնան մեր հաւաքական կեանքին: Հետեւաբար, անհրաժեշտ է երիտասարդութեան հետ երկխօսութիւն ունենալ, գիտնալու թէ ինչու ոմանք մեր կեանքի լուսանցքին

վրայ են, ի՞նչ է իրենց սպասումը մեր եկեղեցիէն ու կառոյցներէն: Այլ խօսքով, փոխանակ քննադատելու, թելադրելու կամ հրահանգելու, պէտք է խօսիլ երիտասարդութեան հետ, եւ երիտասարդութիւնը իր կարգին պէտք է մօտենայ մեր կառոյցներուն եւ անկեղծօրէն իր մտահոգութիւնները ու սպասումները պարզէ:

Չորրորդ, հայ դպրոցը եւս առանձին նիստի մը ընթացքին ժողովին լուրջ ուշադրութեան առարկան դարձաւ: Սփիւռքի պատմութիւնը յըստակօրէն ցոյց կու տայ, որ գաղութի մը կազմաւորման ու կազմակերպման, եւ անոր ազգային դիմագիծի պահպանման մէջ եկեղեցւոյ կողքին ճշդորոշիչ եղած է դերը հայ դպրոցին: Մեր հաւաքական կեանքէն ներս անոնց միատեղ ըլլալը պատահական գուգադիպութիւն մը չէ. իրենց առաքելութեամբ անոնք զիրար կ'ամբողջացնեն: Եկեղեցին իր արժէքներով դպրոցէն ներս ներկայութիւն պէտք է դառնայ, ինչպէս դպրոցը իր ազգային արժէքներով եկեղեցւոյ կեանքին մէջ: Այսօր նահանջի մէջ է հայ դպրոցը: Աշակերտութեան թիւի անկումը, հայ ուսուցիչներու նուազումը ու տնտեսական անցուկ վիճակը, մտահոգիչ խընդիրներ են, որոնց նկատմամբ չենք կրնար անտարբեր ըլլալ: Հաւաքական ճիգով հարկ է առաջը առնել հայ դպրոցի նահանջին:

Հինգերորդ, վերջին տարիներուն Սուրիան եւ Լիբանանը մատնուեցան ընկերատնտեսական լուրջ տագնապի, որ նաեւ իր ծանր անդրադարձը ունեցաւ մեր երկու համայնքներու կեանքին վրայ: Մեր կառոյցները ու ընտանիքները դիմագրաւեցին տնտեսական ահաւոր դժուարութիւններ: Կաթողիկոսարանը հանգանակութիւն կազմակերպեց եւ իր կարելին կատարեց երկու գաղութներու կարիքներուն օգտակար ըլլալու: Տնտեսական տագնապը տակաւին կը շարունակուի: *Լիբանանի ու Սուրիոյ գաղութներուն մեր զօրակցութիւնը* անհրաժեշտ է որ շարունակուի որպէս համահայկական առաջնահերթութիւն, որովհետեւ մեր այս երկու գաղութները կարելոր դեր ունեցած են, եւ ունի՞ն, համահայկական խեղձներու իրագործման գծով:

Վեցերորդ, ինչպէս ծանօթ է մեր ժողովուրդի գաւակներուն, հայրապետական հռչակագրով ներկայ տարին հռչակեցինք «*Սփիւռքի Տարի*»: Սփիւռքը ինքնակեդրոն ու ինքնանպատակ գոյութիւն մը չէ: Ան ամբողջական հայութեան անբաժան ու անբաժանելի մասը կը կազմէ: Հզօր Հայաստան ու հզօր Արցախ կ'ենթադրէ հզօր Սփիւռք եւ՝ փոխադարձաբար: Սա լոզունք չէ, այլ փաստացի իրականութիւն: Ազգ. Ընդհանուր ժողովը վերաշեշտեց այս իրողութիւնը, Սփիւռքի վերակազմակերպումը ու հզօրացումը նկատելով անյետաձգելի: Այս շրջագծէն ներս Մեր անմիջական հովանաւորութեամբ թեմերը շուտով պիտի լծուին գործնական աշխատանքի:

Վերջապես, եօթերորդ, *Հայաստանի ու Արցախի հզորացման* մեր Ս. Աթոռին մասնակցությունը եղած է մնայուն առաջնահերթություն: Պատասխանատուության ու յանձնառության ոգիով ըսելիք եւ ընելիք ունեցած ենք միշտ Հայաստանին ու Արցախին առնչուած տազնապաներուն, խնդիրներուն ու ծրագիրներուն նկատմամբ: Արցախի պատերազմէն յետոյ, հայ կեանքէն ներս յուսահատութիւնը, յուսախաբութիւնը ու անորոշութիւնը կը շարունակուին: Ճակատագրական կացութեան մէջ կը գտնուին Հայաստանը ու Արցախը: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը չի կրնար անտարբեր մնալ ներկայ տազնապալից պայմաններուն դիմաց: Թէ՛ Ազգ. Ընդհանուր Ժողովին ուղղած Մեր պատգամին եւ թէ՛ Ազգ. Ընդհանուր Ժողովը իր քննարկումներուն մէջ յատուկ կարեւորութեամբ անդրադառնալով Հայաստանի ու Արցախի պարզած խորապէս մտահոգիչ կացութեան, շեշտեցինք, թէ Արցախի անկախութիւնը եւ Հայաստանի հողային ամբողջականութիւնը ու անվտանգութիւնը անսակարկելի իրականութիւններ են եւ, հետեւաբար, անոնց պաշտպանութիւնը իւրաքանչիւր հայու ու ողջ հայութեան սրբազան պարտաւորութիւնն է: Այս համոզումէն մեկնած, կոչ ուղղեցինք ազգային միասնականութեան. եւ որպէս առաջին գործնական քայլ, շեշտեցինք համահայկական հաւաք մը կազմակերպելու եւ կարեւոր որոշումներ կայացնելու անյետաձգելի հրամայականը:

Մեր հայրապետական պատգամին մէջ ներկայացուած ու Ազգ. Ընդհանուր Ժողովին կողմէ քննարկուած յիշեալ խնդիրները ու մտահոգութիւնները հարկ է որ շուտով ծրագրումի ու կեանքի վերածուին թէ՛ Կաթողիկոսարանի եւ թէ՛ թեմերու կողմէ: Կ'ապրինք դժուար ժամանակներու մէջ. շրջապատուած ենք մտահոգիչ պայմաններով. կը դիմագրաւենք լուրջ տազնապաներ՝ Հայաստանի, Արցախի ու Սփիւռքի մէջ: Մեր ազգին ներուժին ու մարդուժին համախմբումը միասնականութեան ամուր հիմքի վրայ, կը նկատենք խիստի անհրաժեշտութիւն: Այս է Մեր պատգամն ու սպասումը եւ այս ուղղութեամբ մեր Ս. Աթոռը վերանորոգ հաւատքով ու հաւաքական ճիգով պիտի շարունակէ իր առաքելութիւնը:

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

ԱՍՏՈՒԾՈՅ ԴԱՌՆԱԼ (Turning to God)

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Երեֆշաբթի, 12 Մայիս 2020

20-րդ դարու վերջերը կրօնի վերաշխուժացումը իր խոր անդրադարձը ունեցավ բազմաթիվ ընկերութիւններու կեանքին վրայ, նոյնիսկ այն երկիրներուն մէջ, ուր կրօն ու պետութիւն իրարմէ անջատ են: Կրօնը հզօր ուժ է, եւ կրնայ միացնող կամ՝ բաժնող ազդակ մը ըլլալ: Ոմանց կողմէ, կրօնը նկատուած է հակադրութեան պատճառ, մինչ ուրիշներու կողմէ՝ հակադրութեանց լուծում բերող կենսական միջոց, շատերու կողմէ՝ իբրեւ ազդու միջոց բարոյական արժէքներու խթանման, մինչ ուրիշներու կողմէ՝ քաղաքագաղափարախօսական օրակարգերու գործիք:

Կը յուսամ, որ համաճարակը մարտահրաւէր մը ըլլայ, որ կրօնը յստակօրէն արտայայտէ իր վաւերական ու հարազատ ինքնութիւնը եւ վերաշէշտէ իր ճշմարիտ կոչումը արդի ընկերութիւններու կեանքին մէջ: Նոյնպէս, կը յուսամ, որ մէկ կողմէ կրօնին նկատմամբ աճող հետաքրքրութիւնը, եւ միւս կողմէ՝ գիտութեան եւ ճարտարարուեստի անկատարութեան փաստը տեղի չտան կրօնական նոր ծայրայեղական շարժումներու: Կրօններ կոչուած են մերժելու կրօնական ծայրայեղութիւնները, որոնք ծնունդ կ'առնեն որոշ գաղափարախօսութիւններէ: Կրօնները կոչուած են վերադառնալ իրենց հոգեւոր ու հարազատ արմատներուն եւ ճշմարիտ ընկերաբարոյագիտական արժէքներուն, վերատեսութեան ենթարկել կարծրատիպ ուսուցումները եւ հնամէջ մեկնաբանութիւնները եւ զանոնք պատշաճեցնեն իրենց պատկանած ընկերութիւններու կեանքին, որոնք աշխարհականացած կենցաղակերպերու հակամէտ են, ինչպէս նաեւ՝ իրենց ուսուցումներն ու արժէքները ներկայացնելու բանականութեան եւ վստահելիութեան սահմաններուն մէջ, բնականաբար առանց անտեսելու անդրանցական տարածքը:

Ես կը հաւատամ, որ կարգ մը մտքեր, ինչպէս՝ «կրօնի վախճանը», «կրօնէն անդին» եւ «պատկանիլ կամ հաւատալ», որոնք հետզհետէ նոր ուղղու-

Թիւններ կը ստանան, յատկապէս արեւմտեան ընկերութիւններու մէջ, անհրաժեշտ է որ վերատեսութեան ենթարկուին եւ գնահատուին նոր իրականութիւններու ու պայմաններու շրջագիծին մէջ: Կրօնները կոչուած են կամուրջ հաստատելու խոր խրամատով անջատուած հաւատքին եւ բանականութեան, ինչպէս նաեւ աւանդութեան եւ արդիականութեան միջեւ:

Կրօն-ընկերութիւն յարաբերութեան մէջ, երբ տարբերութիւնը իբրեւ սպառնալիք կ'ըմբռնուի՝ անհանդուրժողութեան պատճառ կը դառնայ. հաւատքը, երբ գաղափարախօսութեան վերածուի՝ կ'անտեսէ հիմնական արժէքները եւ բռնութիւն կը յառաջացնէ: Կրօնական արմատականութիւնը սպառնալիք մըն է ուղղուած բազմակարծիք ընկերութիւններուն, որոնք հիմնուած են հանդուրժողութեան եւ խաղաղ համակեցութեան վրայ: Հարկ է, որ կրօններ չափազանց զգոյշ ըլլան, որպէսզի բռնութիւնը կրօնին հետ չառնչուի: Կրօնը կարողութիւնը ունի միանգամայն կայունացման կամ ապակայունացման, ներդաշնակ միաւորման կամ մասնահատումի, հաշտեցման կամ բեւեռացման մղելու: Իր կոչումին համաձայն, կրօնը պարտաւոր է բուժողի եւ հաշտեցնողի դեր ստանձնել:

Կրօններ իրարմէ կը տարբերին բացարձակ ճշմարտութեան նկատմամբ իրենց ունեցած ընկալումներէն: Քրիստոսի եզակիութիւնն է քրիստոնէութեան էությունը: Իբրեւ աշխարհի Փրկիչը, Յիսուս Քրիստոսի մէջ Աստուծոյ յայտնութեան ճանաչումով՝ քրիստոնէութիւնը կը ներառէ ամբողջ մարդկութիւնն ու ստեղծագործութիւնը: Սակայն, բացարձակ ճշմարտութիւնը յայտարարելը ոեւէ կրօնի կողմէ պէտք չէ կրօնները այլամերժութեան առաջնորդէ, որովհետեւ այլամերժութիւնը անհանդուրժողութիւն, օտարացում եւ լարուածութիւն կը յառաջացնէ: Արդարեւ, մէկուն ինքնահասկացողութիւնը հաստատել, չի՛ նշանակեր միւսինը մերժել, ո՛չ ալ մէկուն ուսուցումներուն վաւերականութիւնը յայտարարելը՝ անարգել կամ մերժել է միւսին ուսուցումները:

Վերջին տասնամեակներուն, ամբողջ աշխարհի մէջ զարգացող միջ-եկեղեցական երկխօսութիւնները դրական եւ յուսադրիչ զարգացումներ էին: Հարկ է նշել, որ Վատիկանի Երկրորդ Ժողովը (1962) իր "The Declaration on Relations of the Church to Non-Christian Religions- Nostra Aetate" յայտարարութեամբ, եւ Եկեղեցւոյ Համաշխարհային Խորհուրդը, միջ-եկեղեցական երկխօսութեան բաժանմունքին ճամբով, խիստ հանդիսացան տարբեր կրօններու միջեւ յարաբերութեան, երկխօսութեան եւ համագործակցութեան զարգացման:

Համատեղ նախաձեռնութիւնները, աշխատանքները, յայտարարութիւնները եւ փոխադարձ այցելութիւնները՝ ազգային, շրջանային եւ միջազգային մակարդակներու վրայ, փոխադարձ վստահութեան եւ հասկացողութեան մթնոլորտ մը ստեղծեցին: Անձամբ, որպէս նախագահ կամ դասախօս, աշ-

խոյժ կերպով մասնակցեցայ այս նախաձեռնություններուն մեծ մասին: Նոյն-պէս, նման հանդիպումներ ու ձեռնարկներ կազմակերպեցի Կաթողիկոսարանէն ներս: Միջ-կրօնական երկխօսութեան մասնակցութեան ընթացքին միշտ եւ շեշտակի կերպով յայտարարեցի, որ կրօններ աստուածաբանական երկխօսութիւններէն, ընդհանուր հաստատումներէն եւ միատեղ յայտարարութիւններէն անդին՝ միասնաբար, պէտք է կեդրոնանան խաղաղութեամբ եւ ներդաշնակութեամբ ապրելու հրամայականին վրայ: Այլ խօսքով, երկխօսութիւնը պէտք է թարգմանուի հաւաքական յանձնառութեամբ ու գործակցութեամբ՝ հասարակաց հարցերու վերաբերեալ:

Կրօններ հրաւիրուած են ձեռնարկելու ինքնաքննութեան գործընթացի մը: Իրենց տարբերութիւնները պէտք է զիրենք իրարմէ հեռացնէ եւ կամ հակադրութեան առաջնորդէ: Աստուծոյ տան մէջ «շատ տեղեր կան» (ՅՎ 14.2). Աստուած կրօնները միասին ապրելու, զիրար ընդունելու եւ յարգելու կը հրաւիրէ: Իրարու հակադրուելով, անոնք զԱստուած է որ կը մերժեն: Միասին ապրիլ չի՛ նշանակեր պարզապէս գոյակցիլ, այլ՝ պահպանել իրենց տարբերութիւնները, եւ միաժամանակ խորացնել ընդհանրական գիծերը, որոնք ընկերութեան հիմքը կը կազմեն: Դարեր շարունակ մեր ժողովուրդը Հայաստանի, Կիլիկիոյ եւ Միջին Արեւելքի մէջ իսլամներու հետ ապրեցաւ, փոխադարձ վստահութեան եւ յարգանքի մթնոլորտի մէջ: Առաջնորդութեան տարիներուն, մէկ կողմէ ձեռք ձգած փորձառութիւնս Լիբանանի մէջ, որպէս գործակցութեան երկիր, միւս կողմէ՝ ունեցած գործունէութիւնս միջ-կրօնական երկխօսութեան ծիրէն ներս, մեծապէս օգտակար հանդիսացան ինծի, աւելի լաւ հասկնալու "ուրիշը" ը, միանգամայն խորացնելու ինքնահասակացութիւնս, եւ առաջնորդեցին զիս լաւագոյնս արժեւորելու միասին ապրելու զգայնութիւններն ու օգուտները:

1999-ին, Ֆրանսայի նախագահ Ժազ Ծիրակի Լիբանան այցելութեան առթիւ, քրիստոնեայ եւ իսլամ հոգեւոր պետերուն հետ հանդիպման ընթացքին խօսք առնելով յիշեցուցի նախագահին, որ այս փոքրիկ երկրին մէջ 18 կրօնական համայնքներ միասին կ'ապրին, իբրեւ մէկ ժողովուրդ, յարգելով իրենց տարբերութիւնները եւ ծրագրելով իրենց հասարակաց կեանքը ընդհանուր օրէնքներու եւ կանոններու հիման վրայ: Արդարեւ, ա՛յս է Լիբանանի մեծագոյն հարստութիւնը:

Կրօնի դերը իբրեւ արդարութիւն հետապնդող եւ խաղաղութիւն պաշտպանող, բոլոր կրօններու ուսուցումներուն ու առաքելութեան առանցքը կը կազմէ: Այս իրողութիւնը պէտք է մնայուն կերպով եւ գործնապէս վերահաստատուի բոլոր պայմաններուն եւ պարագաներուն մէջ:

Զորեֆշարքի, 13 Մայիս 2020

Քովիտ-19 համաճարակը դարձավ թէ՛ առողջապահական եւ թէ՛ տնտեսական տագնապ մը: Վիրուսը ահաւոր հարուած մը եղաւ տնտեսութեան համար: Համաշխարհային Տնտեսութեան Համախմբումը կը հաստատէ, որ միլիոնաւոր մարդիկ կրնան անգործութեան մատնուիլ Քովիտ 19-ի պատճառով, եւ թէ՛ ճարտարարուեստական մեծ երկիրներու մէջ, միլիոնաւոր փոքր արհեստանոցներ վարկ ստանալու դիմում ներկայացուցած են: Ուստի, համաճարակի ընկերա-տնտեսական ժխտական անդրադարձները կրնան շատ աւելի խորանալ գալիք ամիսներուն եւ նոյնիսկ տարիներուն: Տնտեսագէտներու համաձայն, միլիոնաւոր մարդիկ կրնան չքաւորութեան ահագանգային վիճակէն իսկ ցած մակարդակներու հասնիլ, փոքր արհեստներ կրնան կորսուիլ եւ մեծ արդիւնաբերական գործարաններ ու միջազգային ընկերութիւններ կրնան սնանկանալ:

Օրը օրին քորոնա վիրուսի գոհերու թիւին գուզահեռ կ'աճի նաեւ թիւը տնտեսական եւ ընկերային իմաստով տառապող մարդոց: Թղթակիցի մը հարցումին պատասխանելով, Ամերիկայի Միացեալ Նահանգներու քաղաքներէն մէկուն կառավարիչը ըսաւ. «արգելափակումը վստահաբար երկարատեան պիտի ազդէ տնտեսութեան վրայ. սակայն ես տնտեսութեամբ հետքերբրուած չեմ, այլ՝ ժողովուրդով»: Նոյն հարցին անդրադառնալով, նոյն երկրի նախագահը հետեւեալը հաստատեց. «չենք կրնար այսպէս շարունակել, երկիրը պէտք է շնչէ. տնտեսութիւնը կարելոր է»: Այլ ժողովուրդներու մօտ եւս նման հակասական ձայներ լսուեցան: Արգելափակումի թուլացումը եթէ կը մտահոգէ կարգ մը ղեկավարներ, մարդկային գոհերու թիւի աճման պատճառով, ուրիշներ սակայն շատ աւելի մտահոգ են անոր խստացման հետեւանքով երկրի տնտեսութեան վրայ ունենալիք ժխտական անդրադարձով: Մինչ համաճարակը կը շարունակէ մարդկային կեանքեր խլել, ազգեր իրենք գիրենք բարոյական երկընտրանքի մը դիմաց կը գտնեն՝ արգելափակում՝ կեանքեր փրկելու համար, թէ ոչ արգելափակման վերացում տնտեսութիւնը փրկելու:

Պարզուած նշաններն ու գնահատումները որոշակիօրէն ցոյց կու տան, թէ համաճարակի պատճառած տնտեսական եւ ընկերային վնասը պիտի շարունակուի յարաճուն թափով, նոյնիսկ տնտեսապէս հզօր երկիրներու մէջ: Միացեալ Ազգերու «Աշխարհի Ուտեստեղէնի Ծրագիր»ը կ'ազդարարէ, որ համաճարակին պատճառով ո՛չ միայն միլիոնաւոր մարդիկ կրնան անգործ մնալ, այլ՝ կրնան սովամահութեան դատապարտուիլ: Ըստ Միջազգային Դրամական Ֆոնտի (IMF) գնահատման, 1930-էն ասդին աշխարհը այսքան տնտեսական վատ անկում չէր տեսած եւ անոր վերականգնումը շատ անորոշ է ու դժուար:

Արդարեւ, ժողովուրդին առողջութիւնը որոշապէս աւելի թանկագին է քան երկրին տնտեսութիւնը: Նման վճռական կացութեանց դիմաց, երբ վտանգը կը սպառնայ մարդկային կեանքին, պէտք չէ տնտեսական շահը գե-

րադաս նկատուի: Անհրաժեշտ է իրապաշտ գնահատում մը եւ ծրագրուած ու հաւասարակչուած մօտեցում մը՝ առողջութեան եւ տնտեսութեան միջեւ:

Տնտեսութեան վրայ համաճարակին թողած զօրաւոր ազդեցութիւնը լուսարձակի տակ կը բերէ տնտեսութեան կարեւորութիւնը, որպէս երկրի մը բազմեւնակ: Մակայն, տնտեսութիւնը իր բնոյթով ու նպատակով, երկրի մի է: Ան գլխաւոր ազդակ է յառաջդիմութեան եւ արդարութեան խթանման, միեւնոյն ատեն, ան հզօր միջոց մըն է չքաւորութիւն, անարդարութիւն, սպառողականութիւն յառաջացնելու եւ կենսոլորտին վնասելու: Տնտեսութիւնը որոշադրիչ դեր ունի ազգերու յառաջդիմութեան մէջ. ան կը զօրացնէ անոնց աշխարհաքաղաքական դիրքը, կը ձեւաւորէ անոնց արտաքին յարաբերութիւնները եւ կ'ապահովէ անոնց անվտանգութիւնը: Ան նաեւ ծնունդ կու տայ ինքնավարութեան, յաղթապանծութեան եւ փտածութեան: Տնտեսութիւնը առանցքային դեր ունի համաշխարհայնացումի հզօրացման մէջ: Տնտեսական համաշխարհայնացումը դրական ազդեցութիւն ունի. ան կարելիութիւն կը ստեղծէ հարստութիւն ապահովելու, ինչպէս նաեւ աւելի լայն միջոցներ՝ լուծումներ գտնելու կարգ մը հիմնական հարցերու, ինչպէս օրինակ աղքատութեան, կենսոլորտի եւ բնական աղէտներու վերաբերեալ: Միւս կողմէն՝ տնտեսական համաշխարհայնացումի ճամբով ճարտարարուեստական երկիրներ կը հետապնդեն իրենց աշխարհաքաղաքական շահերը:

Կարեւոր է գանազանել աճում եւ զարգացում եզրերը: Մէկը կը հետապնդէ տնտեսական շահը, իսկ միւսը՝ կայունութիւնը: Անսահման եւ անհակաչիռ տնտեսական աճման հետեւանքները չափազանց վնասակար են: Անոնք ծնունդ կու տան ընկերային անհաւասարութեան, անարդարութեան եւ կրնան անդարմանելի վնաս հասցնել կենսոլորտին, յատկապէս "երրորդ աշխարհ" նկատուած երկիրներու մէջ, որուն հետեւանքով անհաւասարութիւնը իր բարձրագոյն աստիճանին կը հասնի չափազանց հարուստ եւ ծայրայեղ աղքատ երկիրներու միջեւ: Տնտեսական աճը պէտք է պայմանաւորուած ըլլայ առկայ կարիքներով, նպատակ ունենալով արմատախիլ ընել չքաւորութիւնն ու ընկերային անարդարութիւնը: Անձնական հարստութիւն դիզել՝ անտեսելով ուրիշները, օգտագործել աղբիւրներ՝ ի վնաս բնութեան, հարստանալ՝ աղքատացնելով ուրիշները, այս ձեւով, քաղաքական գաղութատիրութիւնը փոխարինելով տնտեսական գաղութատիրութեամբ, պարզապէս բարոյական չարիքներ են:

Տնտեսական քաղաքականութիւնը կարիք ունի բարոյագիտական ուղեգիծերու, այլապէս անիկա պիտի դառնայ ապակայունացնող, կործանող եւ անմարդացնող ուժ մը, սակաւաթիւ հարուստ ազգերու հաշւոյն:

Հիմնգշարթի, 14 Մայիս 2020

Համաճարակի մահասփիւռ աղէտին ենթակայ մարդուն համար աղօթքը դարձաւ անոր դէմ դնելու ամենահզօր միջոցը: Մարդիկ անդադար կ'աղօ-

Թեև իրենց տուններուն մէջ, ընկերային ցանցերու վրայ կրօնական արարողութիւններու ուղիղ հեռարձակման ճամբով: Մինչ կը մտածէի կրօնական առաջնորդներու «աղօթքի օր» մը կազմակերպելու մասին, որպէս միջ-կրօնական գործակցութեան շօշափելի արտայայտութիւն, նամակ մը ստացայ «Մարդկային Եղբայրակցութեան Բարձրագոյն Յանձնախումբ»-ին կողմէ, ուր կը նշուէր թէ Մայիսի 14-ը Սարդկութեան համար Աղօթքի օր որոշուած է, եւ կը հրաւիրէին զիս մասնակցելու անոր: Այս յանձնախումբը ստեղծուած էր շարունակելու համար հիմնական ուղեգիծերը «Մարդկային Եղբայրակցութեան Վաւերագիր»-ին, այն պատմական վաւերագրին, որ ստորագրուած էր Նորին Սրբութիւն Ֆրանչիսկոս Պապին եւ Ազհարի մեծ Իմամ Նորին Վսեմութիւն Ահմէդ Ալ Թայյէպի կողմէ, Ապու Տապիի մէջ, 2 Ապրիլ 2019-ին:

Վերոնշեալ աղօթքի օրուան մեր եկեղեցին մասնակցեցաւ Անթիլիասի մայրավանքին մէջ կազմակերպուած հաւաքական աղօթքով: Յուզիչ էր պահը: Արդարեւ, համայն մարդկութիւնը աղօթքի ճամբով կ'արտայայտէր իր միութիւնը: Ան նաեւ հաստատ արտայայտութիւնն էր աղօթքի կենսական դերին մարդկային կեանքին մէջ: Արարողութեան ընթացքին, այդ առիթով պատրաստած աղօթքս կարդացուեցաւ անգլերէն եւ արաբերէն լեզուներով: Աշխարհի չորս կողմը գտնուող մեր ժողովուրդի գաւազները ուղիղ հեռարձակման միջոցաւ հետեւեցան արարողութեան եւ դրական արձագանգեցին միջ-կրօնական այս բացառիկ նախաձեռնութեան: Ահաւասիկ աղօթքի բնագիրը.–

«Ամենակարող եւ ողորմած Աստուած, ստեղծողը տիեզերքին ու մարդկութեան: Կը փառաւորենք քու սուրբ անունդ եւ կ'արտայայտենք մեր խոր երախտագիտութիւնը կեանքի պարգեւիդ եւ երկնային շնորհքիդ համար: Մենք՝ քու գաւազներդ, քու պատկերովդ եւ նմանութեամբդ ստեղծուած, մահացու վիրուսով մը տագնապի մատնուած ենք: Մեր կեանքը տառապանքով, տրտմութեամբ, անգործութեամբ եւ տնտեսական խնդիրներով տիրապետուած է: Հիւանդներուն եւ մեռնողներուն թիւը օր ըստ օրէ կ'աճի, աշխարհի ամբողջ տարածքին: Ո՛վ Տէր, առանց քու հօր ներկայութեանդ, մենք անգոր ենք: Ո՛վ ողորմած Աստուած, լսէ՛ մեր աղօթքները, զօրացո՛ւր մեր հաւատքը եւ խորացո՛ւր մեր յոյսը, որպէսզի յաղթահարենք աշխարհի երեւելի թէ աներեւոյթ չարիքները: Կ'աղաչենք քեզի, ո՛վ Տէր, ազատագրէ՛ մարդկութիւնը այս համաճարակէն: Ո՛վ ողորմած Աստուած, լսէ՛ մեր աղօթքները»:

Արդարեւ, աղօթքը կրօններու եւ ազգերու միջեւ հոգեւոր շաղախ կը ստեղծէ եւ Աստուծոյ հսկող աչքին տակ մարդկային ընկերութեան միութիւնը կ'արտայայտէ:

Անգլերէնէ թարգմանեց՝
ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ

(Շար. 9)

Մ Ե Կ Ն Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ա Տ Թ Է Ո Ս Ա Բ Ե Տ Ա Ր Ա Ն Ի

(2.1-3)

«Հերովդէս քաղաքի օրերուն էր, որ Յիսուս ծնաւ Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքին մէջ: Եւ ահա արեւելիքն մոգեր եկան Երուսաղէմ» (Մտ 2.1):

1) **Գթառատ ու մարդասէր Յիսուսը ծնաւ անգութ ու մարդատեաց Հերովդէսին օրով: Մենք կրնա՞նք այս անգութ աշխարհին մէջ ըլլալ գթառատ: Կրնա՞նք մարդատեաց մարդոց մէջ ըլլալ Քրիստոսի սիրոյն արտացոլացումը:**

2) **Նոր Կտակարանին մէջ «Հերովդէս» անունով երեք անձեր ունինք: Հոս յիշուած Հերովդէսը կը կոչուի՝ Մեծն Հերովդէս. իշխած է ամբողջ Պաղեստինի վրայ Ք.Ա. 37-4 թ.: Երկրորդը Մեծն Հերովդէսի որդին էր եւ կը կոչուի՝ Հերովդէս Անտիպաս, նաեւ՝ Հերովդէս չորրորդապետ. իշխած է Գալիլեայի եւ Պերեայի վրայ Ք.Ա. 4 թ. Ք.Ե. 39 թ.: Իր օրով էր որ Յիսուս գործեց, եւ ինքն էր որ գլխատել տուաւ Յովհաննէս Մկրտիչը (Մտ 14.1-11): Երրորդը՝ Հերովդէս Ագրիպպաս Ա.ն էր. թոռնիկն էր Մեծն Հերովդէսի. իշխած է ամբողջ Պաղեստինի վրայ Ք.Ե. 41-44 թ.: Եղաւ առաջին հայածիչ թագաւորը քրիստոնեաներուն, եւ գլխատիչը Յակոբոս առաքեալին (Գրծ 12.1-3):**

3) **Յիսուս ծնաւ Մեծն Հերովդէսի թագաւորութեան վերջին տարին, Ք.Ա. 4 թուի սկիզբին, եւ նոյն թուի աւարտին՝ 3 թուականը մուտք գործելէ առաջ Հերովդէս մեռաւ եւ իրեն յաջորդեց իր որդին՝ Արքեղայոս: Բարի Թագաւորին ծնած տարին՝ չար թագաւորին մեռնիլը ցոյց կու տայ, թէ Յիսուս ծնաւ որպէսզի տապալէր Չարին թագաւորութիւնը եւ հաստատէր իր սիրոյ թագաւորութիւնը:**

4) **Ինչո՞ւ համար Մատթէոս կը շեշտէ թէ Յիսուս ծնաւ «Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքին մէջ».**—

ա) **Որպէսզի այս Բեթլեհէմը չչփոթենք Գալիլեայի մէջ գտնուող Բեթլեհէմին հետ: Երկու Բեթլեհէմներ կային: Մին Յուդայի քաղաքին մէջ (Միք 5.2), ուր կը բնակէր Յուդայի ցեղը, իսկ միւսը՝ Գալիլեայի մէջ, որ իբր ժառանգութիւն յատկացուած էր Չաբուղոնի ցեղին (Յես 19.15):**

բ) **Որպէսզի ցոյց տայ թէ ծնած մանուկը խոստացուած Մեսիան է, որովհետեւ, համաձայն Աստուածաշունչին, խոստացուած Մեսիան պիտի ծնէր**

Յուդայի սերունդէն, եւ եթէ Յուդայի սերունդէն պիտի ծնէր՝ պէտք էր որ ծնէր Յուդայի բնակած Բեթլեհէմ քաղաքին մէջ:

դ) Դաւիթ այս Բեթլեհէմ քաղաքին մէջ ծնաւ. Յիսուս ալ հոս պէտք էր ծնէր, որովհետեւ Դաւիթի սերունդէն պէտք էր գար:

5) «Արեւելք» ըսելով ո՞ր երկիրը կամ շրջանը պէտք է հասկընալ: Ներսէս Շնորհալի «արեւելք» ըսելով կը հասկնայ Պարսկաստանը: Անանիա Վրդ. Սանահնեցի զայն կը հասկնայ Բաբելոնը (Իրաքը), եւ մոգերն ալ կը կոչէ՝ «բաբելացիք»: Մխիթար Վրդ. Սեբաստացին զայն կը նկատէ Սուլտանական Արաբիան, ինչպէս նաեւ Սաբան (Եմէն): Մաղաքիա Արք. Օրմանեան մեր հին հեղինակներէն վկայակոչութիւն ընելով կը հաստատէ, թէ մոգերուն հայրենիքը կը կոչուէր՝ «Մոգուց աշխարհ»: Օրմանեան դիտել կու տայ, թէ մեր հեղինակները «Մոգուց աշխարհ»ը նոյնացուցած են Մոկաց աշխարհին հետ, եւ մոգերն ալ նկատած են Մոկացի նախարարներ, եւ նոյնիսկ անոնցմէ մէկուն՝ Գասպարին գերեզմանը կը ցուցնեն Մոկս աւանի մօտ՝ Ակնդաշտայ վանքին մէջ: Կան որ «Արեւելք» ըսելով կը հասկնան Եթովպիան:

6) Անցեալին «մոգ» կը կոչուէին Մարերու, Պարսիկներու ու Եգիպտացիներու քուրմերը, իմաստունները, փիլիսոփաներն ու աստեղաբաշխները. հետագայ դարերուն սակայն, նկատի առնելով որ աստեղաբաշխները սկսան ունայնաբանութեան մէջ մտնել եւ իրենք զիրենք կործանել առասպելաբանական ու սնամէջ խօսքերով, իրենց համար գործածուող "մոգ" անունը կորսնցուց իր գեղեցիկ իմաստը, եւ անով սկսաւ հասկցուիլ կախարդներն ու դիւթողները (Մխիթար Վրդ. Սեբաստացի):

7) Ի՞նչ պատգամներ կը քաղենք մանուկ Յիսուսին մօտ մոգերուն գալուտէն. –

ա) Մոգերը գաւառներու իշխաններ էին եւ կը կոչուէին թագաւորներ: Բարձր դիրք ունեցող մարդիկ էին, եւ սակայն խոնարհաբար փնտռեցին «Հըրեաներու նորածին թագաւորը», որպէսզի պաշտամունք մատուցէին անոր: Այսօր բարձր դիրքերու վրայ գտնուողները խոնարհաբար կը փնտռեն Յիսուս մանուկը որպէսզի հոգիով պաշտեն զայն:

բ) Մոգերը մանուկ Յիսուսին հասնելու համար՝ երկար ու դժուարին ճամբայ կտրեցին: Մենք պատրաստ ենք երկար ու դժուարին ճամբայ կտրել Յիսուսին հասնելու համար. «Ճամբան դժուարին է» (Մտ 7.14): Դիւրին ճամբաներէ քալելով չենք կրնար հասնիլ անոր որ ըսաւ՝ «Ե՛ս եմ ճամբան» (ՅՏ 14.6):

գ) Մոգերը Երուսաղէմ հասնելու համար անցան գիշերային վտանգներէ, բայց ետդարձ չկատարեցին: Մենք ի՞նչ կ'ընենք եթէ դէպի Յիսուս մեր ճանապարհորդութեան ընթացքին վտանգներէ անցնինք. կը նահանջէ՞նք, թէ՛ կը շարունակենք դէպի Յիսուս մեր հաւատքի գնացքը:

դ) Մոգերը իրենց հանգիստը թողուցին որպէսզի կարենային Յիսուս թագաւորը գտնել: Մենք պատրաստ ենք ձգելու մեր հանգիստը Յիսուսին հանգիստելու համար: Երկրաւոր հանգստաւէտ պայմաններ փնտռողը չի կրնար

երկնային հանգիստին հասնիլ:

ե) Մոգերը Յիսուս մանուկին քով հասնելու համար՝ քայեցին գիշեր ու ցերեկ: Քրիստոսի հետեւող մարդը ունի թէ՛ իր ցերեկը եւ թէ՛ իր գիշերը, այլ խօսքով՝ կեանքի իր դիւրին ու դժուարին պահերը: Պէտք է մի՛շտ հետեւիլ Քրիստոսի եւ ո՛չ թէ միայն երբ խաղաղ են մեր օրերը: Դիւրին է հետեւիլ Յիսուսի եւ ամէն վայրկեան փառք տալ Աստուծոյ, երբ ամէն ինչ հեզասահ կ'ընթանայ մեր կեանքին մէջ. ճշմարիտ հաւատացեալը, սակայն, կը շարունակէ անվարան քայլերով հետեւիլ Յիսուսին եւ անդադրում կերպով փառք տալ Աստուծոյ, նոյնիսկ երբ ամէն ինչ փակ ու մութ կ'երեւի իր առջեւ:

զ) Մոգերը գիտնական ու գիտութեան մարդիկ էին, բայց անոնք խոնարհեցան Յիսուսի առջեւ ու երկրպագեցին իրեն, սորվեցնելով մեզի, թէ գիտութիւն ունեցող ամէն մարդ, ամէն իմաստուն ու գիտնական, ամէն ուսեալ ու հանճար, պէ՛տք է ու պիտի՛ խոնարհի օր մը մանուկ Յիսուսին առջեւ ու երկրպագէ իրեն:

է) Մոգերը հարուստ էին, բայց ատիկա պատճառ չեղաւ որ անոնք չփրնտրուէն Յիսուսը: Հարստութիւնը չէ որ մեզ կը հեռացնէ Յիսուսէն, այլ՝ հարստասիրութիւնը:

ը) Յիսուս ծնաւ արեւելքի մէջ, իր աստղը երեւցաւ արեւելքի մէջ, մոգերն ալ արեւելքէն եկան: Այս բոլորը ցոյց կու տան, թէ Յիսուս աշխարհ եկաւ, մեղքով արեւմտացած մարդկութեան կեանքը արեւելքի վերածելու, մարդոց կեանքին Արեւելքը դառնալու:

«Եւ հարցուցին. "Ո՞ւր է Հրեաներու նորածին թագաւորը. մենք տեսանք անոր աստղը արեւելքի մէջ եւ եկանք երկրպագելու իրեն"» (Մտ 2.2):

1) «Եւ հարցուցին»: Մոգերը յոգնած էին երբ Երուսաղէմ հասան, բայց հանգիստ չըրին մինչեւ որ գտան նորածին թագաւորը: Անոնք սորվեցուցին մեզի, թէ պէտք չէ հանգիստ ընենք մինչեւ որ գտնենք Տէրը, մեզի հանգիստ տուողը (Մտ 11.28), երկնային հանգիստ խոստացողը (Եբր 4.9-10):

2) Մտնել բռնակալ Հերովդէսի իշխանութեան սահմանէն ներս ու հարցնել իրմէ զատ այլ թագաւորի մը մասին՝ կրնար մոգերը մահուան առաջնորդել: Այսօր, հաւատացեալներէն քանինե՞ր պիտի համարձակէին երթալ Քրիստոսամերժ տեղ մը եւ Քրիստոսը պատգամել, եթէ գիտնային թէ այդ ընելով կրնային նահատակուիլ:

3) Մոգերուն անվախութիւնը արդիւնքն էր նորածին թագաւորին հանդէպ իրենց ունեցած սիրոյն ու հաւատքին: Բոլոր անոնք որոնք կը սիրեն Յիսուսը եւ հաւատքով կառչած են անոր՝ անվախ ու համարձակ կ'ըլլան:

4) «Ո՞ւր է Հրեաներու նորածին թագաւորը»: Այս հարցումը՝ մեզի՛ ալ ուղղուած է. ո՞ւր է թագաւոր Յիսուսը մեր կեանքին մէջ: Ո՞ւր է Յիսուսի սէրը մեր սրտին մէջ՝ երբ մարդիկ մեզ կ'ատեն: Ո՞ւր է Յիսուսի ներող հոգին մեր հոգիին մէջ՝ երբ մարդիկ մեզի կը ցաւցնեն:

5) Մոզերը չհարցուցին եթէ երբեք թագաւորը ծնած էր թէ ոչ: Անոնք գիտէի՛ն ու վստահ էին որ ծնած էր: Անոնք սոսկ ուղեցին անոր տեղը գիտնալ: Մոզերուն նման մենք եւս վստահօրէն գիտե՞նք որ Յիսուս ներկայ է մեր կեանքին մէջ:

6) Աստուած զինք չճանչցող մոզերուն միջոցաւ էր որ խօսեցաւ Հրեաներուն, որոնք իրենք զիրենք զԱստուած ճանչցող ազգ կը սեպէին: Աստուած մեզի ալ կրնայ խօսիլ՝ զինք չճանչցող մարդոց միջոցաւ: Զինք չճանչցողները միայն հեթանոսները չեն. անոնք կրնան Աստուծոյ խօսքի քարոզիչները ըլլալ նաեւ:

7) «Նորածին քագաւորը»: Աստուած մոզերուն միջոցաւ յայտնեց թէ Յիսուս ծնաւ թագաւոր՝ ըլլալով: Մենք կրնա՞նք ըլլալ այնպիսի անձեր՝ որոնց միջոցաւ Աստուած իր Որդիին թագաւորական հանգամանքը հռչակէ, անոր թագաւորութիւնը տարածէ:

8) Մոզերը Յիսուսը կոչեցին «Հրեաներու քագաւոր»: Գալով մեզի, ո՞վ է Յիսուս մեզի համար: Միայն ոմանք թագաւորը, թէ նաեւ՝ մե՛ր թագաւորը: «Յիսուս քագաւոր է» ըսելը՝ զանիկա մեր թագաւորը չի դարձներ. որպէսզի ան մեր թագաւորը ըլլայ՝ պէտք է ապաշխարութեամբ մեր սիրտը յանձնենք իրեն, եւ զինք մեր սրտին ու սրտի սիրոյն թագաւորը հռչակենք ու ճանչնանք:

9) «Մենք տեսնուի՞նք անոր աստղը»: Երեւցող աստղը հրեշտակ մըն էր, կ'ըսէ Ներսէս Շնորհալի Հայրապետը: Ինչո՞ւ համար հրեշտակը աստղի կերպարանքով երեւցաւ մոզերուն.-

ա) Մոզերը աստղագէտներ էին: Տիրոջ հրեշտակը անոնց երեւցաւ՝ անոնց ծանօթ աստղի կերպարանքով, որպէսզի զիրենք Յիսուսի առաջնորդէր: Անոնց լեզուով խօսեցաւ անոնց հետ: Արդարեւ, երբ Տէրը ուզէ իր պատգամը հասցնել անձի մը՝ կ'օգտագործէ այդ անձին ծանօթ կերպ մը, միջոց մը, լեզու մը: Երբ Տէրը ուղեց մարդը փրկել՝ իրեն պէս մա՛րդ եղաւ: Երբ ուղեց մարդը Օրէնքի անէծքէն ազատել՝ իրեն պէս Օրէնքի անէծքին տակ մտաւ: Պօղոս առաքեալ շատ գեղեցիկ կերպով ցոյց կու տայ, թէ ինչպէս ամենուն հետ ամէ՛ն ինչ եղաւ, որպէսզի կարենայ ոմանք փրկել: Ան կ'ըսէ. «Ինքզինքս բոլորին ծառայ դարձուցի՝ որպէսզի շատերը սիրաշահիմ: Հրեաներուն հետ Հրեայի պէս եղայ՝ որպէսզի Հրեաները սիրաշահիմ, այսինքն՝ Մովսիսական Օրէնքին ենթակայ մարդոց հետ՝ Օրէնքին ենթակայ մարդու պէս ապրեցայ, հակառակ այլեւս այդ Օրէնքին ենթակայ չըլլալուս, որպէսզի Օրէնքին ենթակայ եղողները սիրաշահիմ: Մովսիսական Օրէնքը չճանչցող հեթանոսներուն հետ՝ հեթանոսի պէս եղայ, զանոնք եւս սիրաշահելու համար: Ո՛չ թէ Աստուծոյ Օրէնքէն դուրս եկայ, այլ՝ Քրիստոսի օրէնքին ենթարկուեցայ: Հաւատքով տկարներուն հետ՝ տկարի պէս եղայ, որպէսզի զանոնք ալ սիրաշահիմ: Մէկ խօսքով, ամենուն հետ ամէ՛ն ինչ եղայ, որպէսզի ամէն գնով կարենամ ոմանք փրկել: Եւ այս բոլորը կ'ընեմ՝ Աւետարանին սիրոյն, որպէսզի անոր տարածման մասնակցութիւնս բերած ըլլամ:

բ) Հրեշտակը երեւցաւ աստղի կերպարանքով, որովհետեւ Աստուածաշունչին մէջ հրեշտակները յաճախ կոչուած կամ նմանցուած են աստղերու (Յոբ 38.7: Յյտ 1.20, 12.4: Ես 14.13: Եւլն), իրենց լուսեղէն բնութեան համար:

գ) Հրեշտակը աստղի կերպարանքով երեւցաւ աստղապաշտ մոգերուն եւ առաջնորդեց զանոնք պաշտելու ու երկրպագելու Քրիստոսին, որպէսզի աստղապաշտող մոգերը՝ աստղէն սորվէին Քրիստոսը պաշտել (Մտ 2.11):

դ) Հրեշտակը աստղի կերպարանքով երեւցաւ, պարզելու թէ բոլոր համաստեղութեանց «կոչումն է» մեզ առաջնորդել Քրիստոսի փառքին տեսութեան:

10) Մոգերը հեթանոս աշխարհէն եկող Քրիստոսի առաջին երկրպագուները եղան: Հեթանոս աշխարհին մէջ իրենք դարձան Յիսուսի առաջին վկաները: Մենք կրնա՞նք հեթանոսացած մեր շրջապատին մէջ Յիսուսի երկրպագուները դառնալ:

11) Մոգերը աստղը կը կոչեն՝ «անոք աստղը», եւ սա կը պարզէ, թէ բոլոր հրեղէն մարմինները Տիրո՛ջ կը պատկանին, անոր հրամանին ներքեւ են:

12) «Տեսանք անոք աստղը»: Մոգերը տեսան Յիսուսի աստղը եւ թողուցին իրենց երկիրները եւ եկան անոր մօտ: Մենք տեսա՞ծ ենք մեզ Յիսուսին առաջնորդող աստղեր, այլ խօսքով՝ հանդիպա՞ծ ենք մարդոց որոնք մեզ հրաւիրած են գալու Յիսուսի: Հարցում. դեռ մեզ Յիսուսի քով առաջնորդող աստղե՞ր կը փնտռենք, թէ՛ մենք արդէն դարձեր ենք աստղեր՝ ուրիշները Յիսուսի առաջնորդող:

13) Յիսուս ծնաւ Բեթլեհէմի մէջ բայց մոգերը անոր աստղը տեսան ուրիշ երկրի մը մէջ, եւ սա կը պարզէ, թէ ժամանակ պիտի գայ երբ Յիսուսի փառքը պիտի լեցնէ աշխարհի բոլոր երկիրները. «Երկիրը Տիրոջ փառքին գիտութիւնովը պիտի լեցուի ...» (Ամբ 2.14, 3.3: Ես 11.9):

14) Յիսուսի ծնունդը երկրի վրայ եւ անոր աստղին երեւումը երկիրքի մէջ, կը պարզէ թէ ան թագաւորն է երկիրքին ու երկրին: Ան ծնաւ երկիրքի թագաւորութիւնը երկրի վրայ հաստատելու համար:

15) Յիսուսի ծնունդը երկրի վրայ եւ անոր աստղին երեւումը երկիրքի մէջ ցոյց կու տայ, թէ ան երկրի վրայ եղած ժամանակ՝ նաեւ երկիրքի մէջ էր: Ինքն իսկ այս մասին վկայեց. «Ո՛չ ոք երկիւնք ելաւ՝ բացի Մարդու Որդիէն, որ երկիւնքէն իջաւ, եւ որ երկիւնքի մէջ է» (ՅՎ 3.13): «է» կ'ըսուի եւ ոչ թէ «էր», որ ցոյց կու տայ, թէ Յիսուս երկրի վրայ եղած ժամանակ՝ միեւնոյն ատեն երկիրքի մէջ էր, եւ սա իր աստուածութեան ապացոյցներէն մին է:

«Երբ Հերովդէս թագաւոր լսեց ասիկա՝ վրդովեցաւ, եւ իրեն հետ՝ Երուսաղէմի բոլոր բնակիչները» (Մտ 2.3):

1) «Երբ Հերովդէս թագաւոր լսեց»: Հերովդէս լուր իր մարմնաւոր ականջներով լսեց Յիսուսի ծնունդին մասին: Փա՛կ էին անոր հոգիին ականջները: Այսօր քրիստոնեաներուն մեծ բաժինը միայն իրենց մարմնաւոր ականջները:

րով կը լսեն Յիսուսի մասին, իրենց հոգիի ականջները սակայն փակ են անոր ճաշին առջեւ:

2) Հերովդէս ունէր լսող ականջ բայց չուներ ընդառաջող սիրտ: Տարբեր չեն Հերովդէսէն անոնք՝ որոնք կը լսեն Յիսուսի սիրոյն մասին, եւ սակայն իրենց սիրտը չեն բանար անոր առջեւ:

3) Փրկիչին ծննդեան աւետիսը Հերովդէսին ալ ուղղուեցաւ մոգերուն միջոցաւ: Փրկուածեան աւետիսը բոլոր մարդոց համար է, ինչ մեղքերու մէջ ալ ըլլան անոնք:

4) Հերովդէս լսած էր Մեսիային գալուստին մասին, բայց չէր սպասեր անոր գալուստին: Այսօր շատեր լսած են Տիրոջ երկրորդ գալուստին մասին, բայց քանինե՞ր կը սպասեն ու կը պատրաստուին անոր գալուստին:

5) Ինչո՞ւ համար Հերովդէս «վրդովեցաւ».–

ա) Վրդովեցաւ, որովհետեւ ինքզինք յայտարարած էր խոստացեալ մեսիան իբրեւ, եւ որովհետեւ գիտցաւ որ ճշմարիտ Մեսիային յայտնութեամբ՝ ոչ միայն իր սուտ մեսիա ըլլալը պիտի յայտնուէր, այլ նաեւ կրնար իր թագաւորութիւնը կորսնցնել (Միսիթար Վրդ. Սեբաստացի):

բ) Վրդովեցաւ, որովհետեւ լսեց թէ մոգերը իրմէ զատ ուրիշի մը երկըրպագելու (խոնարհելու) եկած էին: Այսօր չկա՞ն մարդիկ որոնք կը վրդովին մեզմէ, պարզապէս որովհետեւ կ'երկրպագենք Յիսուսին:

գ) Վրդովեցաւ, որովհետեւ մոգերը Յիսուսը կոչեցին՝ «թագաւոր»: Այսօր ալ կան մարդիկ որոնք կը վրդովին երբ Յիսուսը կոչենք երկինքի ու երկրի թագաւոր:

դ) Վրդովեցաւ, որովհետեւ տեսաւ որ մոգերը զինք մեծարելու փոխարէն եւ իրեն նուէր բերելու փոխարէն՝ եկած էին մեծարելու ու նուէր տալու նորածին թագաւորին: Երբ ուրիշներ մեծարուին՝ մենք կը վրդովի՞նք:

ե) Վրդովեցաւ, որովհետեւ բռնակալ ու անարդար թագաւոր մըն էր: Ամէն բռնակալ ու անարդար կը վրդովի երբ լսէ Արդարին գալուստին մասին:

զ) Վրդովեցաւ, որովհետեւ Մեսիային ծնունդին մէջ սպառնալիք տեսաւ իր թագաւորական գահին. «Վրդովեցաւ, որովհետեւ վախցաւ որ թագաւորութիւնը կրնար դառնալ Հրեայի մը, եւ Հրեաները կրնային վտարել զինք եւ իր սերունդը եւ կտրել զանոնք թագաւորութենէն: Ճշմարտութիւն է որ մեծ իշխանը յաճախ սաստիկ վախերու կ'ենթարկուի: Որովհետեւ, թեթեւ հով մը կրնայ շարժել բարձրահասակ ծառերուն բարձր ճիւղերը. նոյնպէս ալ, անոնք որոնք բարձր տեղերու մէջ կը բնակին՝ նուազագոյն տարածայնութիւն մը կը ցնցէ զիրենք, մինչդեռ անոնք որոնք ցած տեղերու մէջ կը բնակին, կը նմանին ձորին մէջ աճած ծառերուն որոնց հովը ընդհանրապէս չ'ազդէր» (Յովհան Ոսկեբերան):

է) «Երբ ծնաւ երկնաւոր թագաւորը՝ վրդովեցաւ երկրաւոր թագաւորը, որովհետեւ երբ երկնային մեծութիւնը յայտնուի՝ երկրային գերիշխանութիւնը կը վրդովի» (Մեծն Գրիգորիոս Պապ, 6-րդ դար):

ը) Հերովդէս վախցաւ ու վրդովմունքը զինք պատեց, մանաւանդ, երբ լսեց մոգերուն խօսքը. «Մենք տեսանք անոր աստղը արեւելքի մէջ»: Ան վատահաբար ինքնիրեն մտածեց. «Ո՞վ է արդեօք այս Մեսիան որուն աստղերն անգամ կը ծառայեն, եւ որուն համար աստղերը իրենց տեղերէն կը շարժին եւ մարդիկը իրենց կ'առաջնորդեն»: Այս մտածումը մեծ սարսափի մատնեց Հերովդէսը:

թ) Յիսուսի ծնունդը խլեց Հերովդէսի ազատութիւնն ու խաղաղութիւնը: Հերովդէս սոսկ ինքնիր անձը չի ներկայացներ, այլ կը ներկայացնէ նաեւ ու մանաւանդ Սատանան ու անոր թագաւորութիւնը: Արդարեւ, երբ Յիսուս ծնաւ՝ Սատանան կորսնցուց իր ազատութիւնն ու խաղաղութիւնը:

6) Հերովդէսի հետ՝ «Երուսաղէմի բոլոր բնակիչները» նաեւ վրդովեցան: Մխիթար Վրդ. կը թուէ անոնց վրդովումի չորս պատճառներ. - ա) Ոմանք վրդովեցան, որովհետեւ Հերովդէսի մարդիկն էին, եւ կ'անդրադառնային որ Մեսիային գալուստը իրենց համար դատապարտութիւն պիտի բերէր: բ) Ուրիշներ վրդովեցան, որովհետեւ հաւատացեր էին որ Հերովդէս ինքն էր մեսիան, եւ ահա յանկարծ կը լսէին իսկական Մեսիային ծնունդին մասին: գ) Ուրիշներ վրդովեցան, որովհետեւ կ'ապրէին մեղքի կեանք մը, եւ գիտէին որ Մեսիային գալուստը վերջ պիտի դնէր իրենց մարմնաւոր հաճոյքներուն: դ) Եղան նաեւ մարդիկ որ վրդովեցան, որովհետեւ հանգիստ կեանքը սիրող մարդիկ էին, եւ կը խորհէին որ Մեսիան իր թագաւորական գահը հաստատելու համար՝ պիտի պատերազմէր Հերովդէսի դէմ, եւ այդ ձեւով իրենց հանգիստ կեանքը պիտի խանգարուէր:

7) Զարեհ Արք. Ազնաւորեան կը բացատրէ, թէ Հերովդէսին վրդովումը հետեւանքն էր իր վախին, մինչդեռ Երուսաղէմի բնակիչներուն տակնուվրայութեան պատճառը այն էր՝ որ անոնք անակնկալի եկան լսելով խոստացեալ Մեսիային ծնունդին մասին, որուն երկար ժամանակէ ի վեր կը սպասէին: Տիրոջ երկրորդ գալուստին նաեւ բոլոր մարդիկը՝ չար թէ բարի, իրար պիտի անցնին ու տակնուվրայ պիտի ըլլան: Զար մարդիկ իրար պիտի անցնին ու սարսափին, քանի գիտեն որ իրենց պատիժի ժամանակը հասեր է արդէն, իսկ Աստուծոյ զաւակները «իրար պիտի անցնին», այն իմաստով որ անակնկալի պիտի գան, բայց եւ այնպէս մեծապէս պիտի ցնծան:

8) Հաւանական է նաեւ որ Երուսաղէմի բնակիչներուն վրդովումութեան պատճառը՝ նոյնինքն Հերովդէսի վրդովումն էր, որովհետեւ անոնք գիտէին, որ եթէ Հերովդէս վրդովէր՝ կրնար ամբողջ քաղաքին վրդովումին պատճառ դառնալ: Փաստօրէն, կը տեսնենք թէ երբ ան վրդովեցաւ, ջարդել տուաւ «Բեթլեհէմի մէջ եւ անոր շրջակայքը գտնուող բոլոր երեխաները», եւ ամբողջ շրջանը դառնագին լացուկոծի մատնեց (Մտ 2.16-18):

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

(Շար. 2)

ՊԱՏՄԱ.-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

**90-ԱՄԵԱՅ ՀՈՒՆՁՔԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ**

ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ

Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔ. ԿԱՐՈՅԵԱՆ

Ծնած է 1873-ին, Խարբերդ: 1884-ին աշակերտ ընդունուած է Մկրտիչ Կաթողիկոս Քէֆսիզեանի ժառանգաւորաց Վարժարանը, 1891-ին յաջողութեամբ աւարտելէ ետք դպրեվանքի դասընթացքը, նոյն տարին Սարկաւագ ձեռնադրուած է, ձեռամբ Մկրտիչ Կաթողիկոսի:

1892-ին գործուղուած է Եոզկատ, Յակոբ Վրդ. Կէօնիլէանի մօտ քարտուղարի պաշտօնով եւ իր դասաւորեալ ու ճշգրտապահ աշխատասիրութեամբ յաջողած է արդարացնել իր վրայ դրուած յոյսերը:

1893-ի վերջերը, ուսուցչական պաշտօնով Անտիոք գացած է: 1896-ին, իբր հնչակեան, բանտարկուած եւ զրկուած է էտիրնէ քսանեօթ ընկերներով, որոնց մէջ կը գտնուէին նաեւ Հալէպի Տ. Յարութիւն եւ Սսոյ Տ. Եզնիկ քահանաները (այն ատեն աշխարհական), Վահան Մալէզեան եւ այլ մտաւորական ազգայիններ: 1897-ին բանտէն ազատ արձակուելով Մերսին հրաւիրուած է ուսուցչութեան:

1898-ին Ատանայի կուսակալ Պահրի Փաշայի հրամանով Սիս աքսորուած է, որպէս կասկածելի անձնաւորութիւն: Այս աքսորը անկիւնադարձային իմաստ ունեցած է անոր կեանքին մէջ, եւ միեւնոյն տարուան Նոյեմբեր ամսուն Կուսակրօն Եկեղեցական ձեռնադրուած է ձեռամբ Կաթողիկոսական Տեղապահ Կիրակոս Եպս. Փէքմէզեանի, եւ վերակոչուած՝ Տ. Հրանդ Աբեղայ:

1899-ին կարճ ժամանակ մը (հազիւ վեց ամիս) Հալէպի Առաջնորդական Տեղապահի պաշտօնին հրաւիրուած է, սակայն շուտով կառավարութեան միջոցաւ վերադարձուած է Սսոյ Ս. Աթոռ, եւ յետ այնորիկ ինքզինք նուիրած է վանքի ներքին աշխատանքներուն, ելեւմտից տեսչութեան, Թլան ագարակի աշխատանքներու վերահսկողութեան եւ կալուածոց տեսչութեան:

1911-ին Եպիսկոպոս ձեռնադրուած եւ օծուած է, ձեռամբ Սահակ Բ. Կաթողիկոսի: Օծման պահուն, Վեհափառ Հայրապետը Հրանդ Մ. Վարդապետը անուանակոչած է Տ. Եղիշէ Եպիսկոպոս: Ան նշանակուած է Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ յաչս կառավարութեան:

1915-ին, որպէս գաղթական, Հալէպ հասնելով միացած է Սահակ Կաթողիկոսի եւ ընկերանալով անոր՝ գացած է Երուսաղէմ:

Մի քանի ամիս վերջ, երբ Սահակ Կաթողիկոս նշանակուած է Կաթողիկոս-Պատրիարք Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ, Ճեմալ Փաշայի արտօնութեամբ Վեհափառ Հայրապետը զինք Սիս ուղարկած է՝ տիրութիւն ընելու համար վանական գոյքերուն եւ կալուածներուն:

1920-ին, Ատանայի մէջ շուրջ մէկ տարի վարած է Կաթողիկոսական Փոխանորդութեան դժուարին պաշտօնը. փոթորկալից այդ օրերուն, իր հեռատես եւ խոհեմ գործելակերպով մեծապէս օգտակար դարձած է հայ ժողովուրդի մնացորդաց բեկորներուն:

1929-ին, երբ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կայք հաստատած է Անթիլիասի ծովափին, երբ Սաղիմապատկան կալուածները փոխանցուած են Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Կարոյեան Սրբազան նշանակուած է Պէյրութի Կաթողիկոսական Փոխանորդ եւ տասնմէկ տարի ձեռնհասօրէն ղեկավարած է Լիբանանի հայութեան ազգային-եկեղեցական կեանքը:

Իր օրով եւ իր ջանքերով Պէյրութի մէջ շինուած են մէկէ աւելի եկեղեցիներ եւ դպրոցներ, Պէյրութի թեմը կազմակերպուած է ըստ Ազգային Սահմանադրութեան ոգիին, եւ ազգային մեքենան գործած է ներդաշնակ մթնոլորտի մը մէջ:

1940-ին, Պետրոս Կաթողիկոսի վախճանումով, Միաբանական Ընդհանուր Ժողովին կողմէ Կաթողիկոսական Տեղապահ ընտրուած է եւ մինչեւ իր մահը անխոնջ եւ ձեռնհասօրէն վարած՝ կաթողիկոսարանի աշխատանքները:

Ան նախագահելով Ազգ. Կեդրոնական Վարչութեան ժողովներուն՝ բարւոք յարաբերութիւն մշակած է հովանաւոր (Ֆրանսական) ու տեղական կառավարութեան եւ քրիստոնեայ ու մահմետական կրօնապետներուն հետ, յարգանքի ու մեծարանքի առարկայ դարձնելով իր համակրելի անձը:

Կարոյեան Սրբազան օփտուած էր մտային հարուստ պաշարով, ծանօթ էր Ֆրանսերէն եւ թրքերէն լեզուներուն: Ունէր տրամաբանող միտք եւ ուղիղ դատողութիւն: Պատրաստաբան էր, դժուարին պարագաներուն կացութիւնը փրկելու իւրայատուկ կարողութիւն ունէր, թէեւ որեւէ երկի հեղինակ չէր եղած, սակայն լաւ եւ իմաստալից գրող մըն էր:

Կը խօսէր ժողովրդական պարզ ու հասկնալի լեզուով: Բնաւորութեամբ համեստ, հեզահամբոյր, բարեմիտ, անյիշաչար եւ պարզ կեանքը սիրող, աշխատասէր եկեղեցական մըն էր: Ըստ Աւետարանին՝ զինք ատող եւ թշնամացողներուն հետ ներողամիտ ոգիով կը վարուէր, մէկ խօսքով՝ բարի հայր մըն էր բոլորին համար:

Տարիներու աշխատանքային հեւքէն վաստակաբեկ, 23 Փետրուար 1943-ի առաւօտեան, սրտի տագնապի թեթեւ ցնցում մը ունենալուն պատճառով, զինք անմիջապէս փոխադրած են Ամերիկեան Հիւանդանոց, մասնագէտ բժիշկներու խնամքին տակ դարմանուելու յոյսով: Մէկ շաբթուան ընթացքին տագնապի երկրորդ ու երրորդ անողոք հարուածները վերջ տուած են անոր կեանքին, եւ ան իր բարի հոգին աւանդած է:

Յետ վերջին Օծման եւ Թաղման Կարգին, աճիւնները ամփոփուած են Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին կից՝ Կաթողիկոսներու գերեզմաններուն յատկացուած անկիւնը:

Տ. ԽԱԴ ԱՐՔ. ԱԶԱՊԱՅԵԱՆ

Ծնած է 1883-ին, Աթոռանիստ Սիս քաղաքին մէջ: Աւարտելէ ետք Սոսյ Կաթողիկոսարանի Դպրեվանքի ընթացքը, Կուսակրօն Եկեղեցական ձեռնադրուած է 1909-ին, ձեռամբ Սահակ Բ. Կաթողիկոս Խապայեանի:

Վարդապետութեան շրջանին Սոսյ Մայրավանքէն ներս վարած է զանազան պաշտօններ:

1916-1922՝ եղած է հոգեւոր տեսուչ պէյրութահայութեան:

1923-1924՝ նշանակուած է Կաթողիկոսական Փոխանորդ Բերիոյ Հայոց Թեմին (Հայէպ):

1929-1933՝ Կաթողիկոսական Փոխանորդ Դամասկոսի Թեմին:

1933-1939՝ Կաթողիկոսական Փոխանորդ Անտիոքի Թեմին:

1929-ին, Եպիսկոպոս ձեռնադրուած եւ օծուած է, ձեռամբ Սահակ Կաթողիկոսի, Հայէպի Ս. Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ մէջ, օծակից ունենալով Արտաւազդ Արք. Սիւրմէեանը, իսկ 1936-ին Արքութեան տիտղոս եւ պատիւ ստացած է Սահակ Կաթողիկոսի Սրբատառ Կոնդակով:

Կազմակերպած է Անտիոքի Թեմը եւ 1939-ին՝ Սանճազի եղբրական պարպումին, ցուցաբերած է անձնորոշ հովիւի նուիրեալ կեցուածք եւ ծառայողական ոգի:

1941-ին, մեկնած է մայր հայրենիք, իբրեւ Կիլիկեան Պատգամաւոր, մասնակցելու Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութեան, որ անծանօթ պատճառներով յետաձգուած է: Իսկ 1945 Յունիս 24-ի նախօրեակին, ընկերանալով Գարեգին Ա. Յովսէփեանցի, դարձեալ մեկնած է Հայաստան՝ ներկայ գտնուելու Գէորգ Զ. Չօրէճքեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան եւ օծման հոգեպարար արարողութիւններուն:

1943-1945, Կաթողիկոսական Տեղապահ ընտրուած է, իսկ 1946-1951 ստանձնած է Լիբանանի Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդութեան պաշտօնը:

Գարեգին Կաթողիկոս 1951-ին՝ իր հիւանդութեան շրջանին, զինք կոչած է Կաթողիկոսական Ընդհ. Փոխանորդութեան պաշտօնին, զոր վարած է մինչեւ Վեհափառին վախճանումը: Ապա դարձեալ Միաբանութեան կողմէ Տեղապահ ընտրուած է մինչեւ 23 Հոկտ. 1955:

Խաղ Արք. Աջապահեան Մեծի Տանն Կիլիկիոյ այն միաբաններէն էր, որ սերած էր Աջապահեան տոհմէն, տոհմ մը, որ Սսոյ Կիլիկեան Աթոռին տրուած էր մէկէ աւելի Կաթողիկոսներ եւ աւանդապահն էր եղած պատմական այս Աթոռին:

Սրբազանը ամբասիր, փորձառու, ծիսագէտ եկեղեցական մըն էր, նախանձախնդիր Հայ Եկեղեցւոյ օրէնքներուն եւ աւանդութեանց պահպանման ու տառացի գործադրութեան: Իրեն համար եկեղեցականը իր առօրեան պէտք է սկսէր անպայման աղօթքով՝ ամէն առաւօտ ներկայ գտնուելով ժամերգութեան, եւ ինք գեղեցկագոյն օրինակն էր, եւ իր ներկայութիւնը վեհութիւն մը կու տար եկեղեցական ծիսական արարողութիւններուն: Ամէն անգամ որ բացակայ եկեղեցականներ տեսնէր եկեղեցիէն ներս, իր բարի եւ համբերատար հոգին կ'ալեկոծէր, եւ խիստ դիտողութեան կ'արժանանային անոնք, որոնք թերացած էին իրենց պարտականութեանց մէջ:

1956-ի ազգային-եկեղեցական տագնապի օրերուն, ան հեռացած էր Մեծի Տանն Կիլիկիոյ Միաբանական Ուխտէն: Շուրջ եօթը տարի մնալէ ետք Դամասկոս եւ Պէյրութ քաղաքներուն մէջ: Խորէն Կաթողիկոսի բարձր տնօրինութեամբ, 1963-ին վերադարձած էր Մայրավանք, Անթիլիաս՝ իր տունը: Ան վերջին հրաժեշտ տուողը եղած էր Սսոյ Մայրավանքին եւ դժուարին պայմաններու տակ կառքով մը Սիսէն Հալէպ փոխադրած էր Սրբազան Մասունքներուն Արկղը՝ Ս. Լուսաւորիչ Հայրապետի Աջով եւ այլ սրբութիւններով, Սրբալոյս Միւռոնի կաթսան եւ Սսոյ Չարխափան Մայր Եկեղեցւոյ արծաթեայ թանկարժէք ջահերն ու եկեղեցական թանկագին սպասները, որոնք որպէս Կիլիկիոյ Կաթողիկոսութեան սրբազան աւանդ, Հալէպէն Պէյրութ փոխադրուած եւ տեղադրուած են Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նոր նստավայրին՝ Անթիլիասի Գանձատան մէջ:

Խաղ Արքեպիսկոպոս հինգ տարի անկողնոյ ծառայելէ ետք, 17 Յուլիս 1968-ի երեկոյեան, Ազունիէի Ազգ. Բուժարանին մէջ աւանդած է իր բարի հոգին:

Թաղմանական եւ Վերջին Օծման կարգը տեղի ունեցած է 20 Յուլիս 1968-ին, Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Խորէն Կաթողիկոսի:

Ս. Պատարագի աւարտին, Հոգելոյս Սրբազանին մարմինը թափօրով փոխադրուած է եւ ամփոփուած Չարեհեան Դամբարանի Միաբանութեան յատկացուած բաժնին մէջ:

Պատմութեան համար այստեղ կը մէջբերենք Տ. Խաղ Արք. Աջապահեանի Տեղապահ ընտրութեան աւիթով Տ.Տ. Գէորգ Զ. Կաթողիկոսի շնորհաւորական նամակը:

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԵՒ ՆԱԽԱԳԱՀ
ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ**

Թիւ 305
11 Յուլիս 1952 ամի
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՏԵՂԱԿԱԼ Տ. ԽԱԴ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Անթիլիաս, Պէյրուս, Լիբանան

Տանն Կիլիկիոյ Երջյ. Տ. Գարեգին Կաթողիկոսի կարգումը Ձեզ՝ ի կենդանութեան՝ Ընդհանուր Տեղակալ, նշանակ է Նորա առ Ձեզ տածած վստահութեան եւ իմաստուն կարգադրութեան: Աթոռիդ Միաբանութեան կատարած ընտրութիւնը գրաւական է նորա խոհական եւ համերաշխ գործունէութեան: Հայ Եկեղեցական Աթոռները, եպիսկոպոսները եւ վանական ծայրագոյն վարդապետները՝ իրենց բարձրագոյն դպրոցներով՝ զարգացրել են Հայ Ժողովուրդի ազգային ինքնագիտակցութիւնը, նորա պայքարող ոգին յանուն Ազգի եւ Հայրենիքի, վառ ու կենդանի են պահել նորա մէջ հաւատարմութեան զգացմունքը Հայ Եկեղեցուն, սորա եկեղեցական դաւանանքին եւ ազգային ու կրօնական սովորոյթներին. սոյնպէս նաեւ ջանք չեն խնայել պահպանելու նորա Ֆիզիքական գոյութիւնը, որի շնորհիւ Հայ Ազգը կենդանի է մնացել ցայսօր:

Այսօր միջազգային փոխ յարաբերութեանց չափազանց լարուած պայմաններում՝ Հայ Եկեղեցու ղեկավարներից, պահանջուում է միութիւն եւ համերաշխ գործունէութիւն, Մեր նախնեաց անձնուէր նուիրուածութիւնը Ազգին եւ Եկեղեցուն այլ եւ Մեր Ազգի հատուածեալ բեկորների ամբողջացում ազգահաւաքութեան միջոցով, ամբողջական կուռ միութիւն Հայրենի Երկրում:

Աղօթենք Բարձրեալին, որ պարգեւէ Մեզ բոլորիս կար եւ ոյժ, պահպանէ մեր հաւատարմութիւնը՝ Հայ Պատմութեամբ մշակուած՝ վերոյիշեալ ազգային ավանդներին, որպէսզի արժանանանք Հայ Ժողովրդի գոհունակութեան եւ օրնանքին եւ օտարների յարգանքին:

Աստուածային օրհնութիւնն ենք հայցում Ամենապատուութեանդ, Աթոռիդ Միաբանութեան եւ հաւատացեալ Հայ Ժողովրդի վրայ:

ԳԷՈՐԳ Զ.

Ծայրագոյն Պատրիարք-Կաթողիկոս
Ամենայն Հայոց

ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԿԱՆՏԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ*

ԿԱՆՏԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Կանտի «Բարոյականութեան բնազանցութիւնը» (գերմ. բնագիր՝ "die Metaphysik der Sitten", 1797) երկը ինչպէս յիշեցինք, բաժնուած է երկու գլխաւոր մասերով¹։

- *Իրաւական ուսմունքը եւ*
- *Առաքինութեան ուսմունքը,*

որոնք ամբողջութիւն մը կը կազմեն։ Այս երկին մէջ, բարոյագիտական փիլիսոփայութեան կողքին կը ներկայացուի նաեւ իրաւական փիլիսոփայութիւն մը, որ որոշ չափով կը բացայայտէ Կանտի քաղաքական մտածելակերպը։

Այս երկով Կանտ կը քննարկէ ու կը զանազանէ՝ իրաւական (իրաւաբանական) եւ առաքինութեան (բարոյագիտական) պարտաւորութիւնները։ Պարտաւորութեան յիշեալ երկու տեսակներն ալ օրէնսդրական (գերմ.՝ Gesetzgebung, անգլ.՝ Legislation) են։ առաջինը կը զբաղի «արտաքին» կամ քաղաքական ոլորտով, իսկ երկրորդը՝ Կանտի համաձայն նոյնինքն անձնական «ներքին» օրէնսդրութիւնն է։ Երկու պարագաներուն ալ խնդրոյ առարկայ օրէնքները պէտք է ի վիճակի ըլլան ընդունուելու՝ բանական ազատ մարդուն կողմէ, այս պատճառով ալ Կանտ երկու տեսակ «ազատութիւն» կը սահմանէ։ արտաքինը եւ ներքինը։ Կանտի համաձայն, ներքին ազատութեան բարոյագիտական օրէնքները աւելի կարեւոր են, քանզի անոնք կը ներկայացնեն մարդոց ինքնավար բանականութիւնը եւ առնչուած են անպայմանական հրամայականին (Categorical Imperative)։

* Նիւթը, մեծ մասամբ քաղուած է յօդուածի վերածուած է հեղինակին նոր լոյս տեսած «ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ – փիլիսոփայական ակնարկ» գիրքէն (632 էջ), Անթիլիաս, Հոկտեմբեր 2021:

¹ Կանտի «Բարոյականութեան բնազանցութիւնը» (բնագիր՝ "die Metaphysik der Sitten" MdS, անգլ.՝ "The Metaphysics of Morals") երկի երկու գլխաւոր մասերու բաժանումի բացատրութիւնը՝ էջ AB 13.- Իրաւական ուսմունքը (բնագիր՝ Rechtslehre, անգլ.՝ Doctrine of Right) եւ Առաքինութեան ուսմունքը (բնագիր՝ Tugendlehre, անգլ.՝ Doctrine of Virtue):

Կանտ, վերոյիշեալ իրաւական ուսմունքը եւ առաքինութեան ուսմունքը, կը զանազանէ, երբ նկատի կ'ունենայ նպատակի մը պարտաւորութիւն ըլլալու գաղափարը: Կանտի համաձայն, նպատակ եւ պարտաւորութիւն հասկացութիւններու յարաբերութիւնը երկու տեսակ են.– առաջինը՝ երբ նպատակ մը կ'որդեգրենք եւ անկէ պարտաւորութեան կը յանգինք, ինչ որ կը տեսնենք իրաւական ուսմունքի պարագային. իսկ երկրորդը, ճիշդ հակառակն է՝ երբ պարտաւորութիւն մը մեր մաքսիմը (անձնական կանոնը) կը նկատենք, նպատակի մը յանգելու համար, ինչ որ կը տեսնենք առաքինութեան ուսմունքի պարագային:

Թէ ի՞նչ են այն նպատակները, որոնք միաժամանակ պարտաւորութիւններ են, Կանտի պատասխանը շատ յստակ է.– նախ անհատի պարագային՝ ինքնիր կատարելութիւնը ապա այլոց պարագային՝ ուրիշի երջանկութիւնը, որոնք սակայն փոխանակելի չեն², այսինքն կարելի չէ ինքնիր երջանկութիւնը եւ ուրիշի կատարելութիւնը ըմբռնել:

Բարոյագիտութեան մէջ ընդհանրապէս, որպէս նպատակ կը ներկայանան.–

1. մարդոց «բարին-ըլլալու» եւ «բարին-գործելու» նպատակը,
2. այդ նպատակին հասնելու ընտրուած ճանապարհը (վերաբերմունքը) եւ
3. մարդոց հոգեվիճակը ու մտածելակերպը, այդ ճանապարհը անցնելու ընթացքին:

Պարտաւորութիւն եզրոյթով, մենք աւելի կը հասկնանք հնազանդութիւն մը (գերմ.՝ Gehorsamkeit, անգլ.՝ Obediance), վերէն եկած հրամաններուն հանդէպ: Պարտաւորութիւնը, Կանտի համաձայն, աւելի բարոյական հակառիչ մըն է՝ հակումներուն ու մղումներուն, որոնք մեզ կը տանին դէպի ոչ-բանական արարքներու (վերաբերմունքի): Այլ խօսքով, պարտաւորութիւնը մեզ պէտք է տանի դէպի բանականութեամբ առաջնորդուող խօսքին ու գործին:

Իր արարքներով (վերաբերմունքով), մարդ կը ձգտի «բարին»՝ ա) այս բարիքով այլ բարիք մը ձեռք բերելու համար եւ կամ բ) նոյնինքն ա'յդ բարիքին հասնելու համար: Եթէ սա դեռ «գերագոյն բարին» չի ներկայացներ, բայց ան անպայման պիտի օգտագործուի «գերագոյն բարին» հասնելու համար: «Գերագոյն բարին» մարդու երջանկութիւնն է: Երջանկութիւնը մարդու արարքներու (վերաբերմունքի) գերագոյն ու վերջնական նպատակն է: Ան միջոց չէ, այլ նպատակի մը հասնելու համար, այլ խօսքով՝ մարդ կը ձգտի երջանկութեան՝ յանուն երջանկութեան:

Այսպիսով երջանկութիւնը³, որ մարդկային հակումներու բաւարարու-

² Կանտի «նպատակներ, որոնք միաժամանակ պարտաւորութիւններ են» գաղափարը նշուած է վերոյիշեալ երկի (MdS) նոյն էջին վրայ (AB 13):

³ Երջանկութիւն (յուն.՝ eudaimonia, լատ.՝ felicitas, գերմ.՝ Glück, անգլ.՝ Happiness) հասկացութիւնը, ա'յն զգացումն է, ուր մարդ ինքզինք ամբողջական գոհացումի ու բաւարարութեան ներդաշնակ իրավիճակի մը մէջ կը գգայ: Գերագոյն երջանկութիւնը կը կոչուի՝

թիւնն է, ինքնաբաւ է եւ ան կատարեալ կը դառնայ.–

- 1) երբ մարդու արարքները (վերաբերմունքը) կը բխին բանականութենէն,
- 2) երբ անոնք կը կատարուին ըստ գիտութեան ու առաքինութեան եւ
- 3) երբ անոնք կը կատարուին ամբողջ կեանքի ընթացքին:

Կանտ, երջանկութեան այս տեսութիւնը իմացած էր յոյն փիլիսոփայ Արիստոտէլէն, որմէ առաջ յիշատակուած է Հին-Հնդկաստանի մէջ, Բուդդայի (Buddha) մօտ եւ Հին-Չինաստանի մէջ, Կոնֆուցիոսի (Confucius) մօտ: Կանտի համար սակայն, երջանկութեան այս նպատակը բաւարար չէր բարոյագիտութեան ի՛ր տեսութիւնը կազմելու համար:

Կանտ, ինչպէս արդէն նշեցինք, բարոյագիտութեան ի՛ր տեսութիւնը կը հիմնէ մարդկային բանականութենէն բխած պարտաւորութեան վրայ, որմէ կը յառաջանան «անպայմանական հրամայականը» եւ «բարոյական օրէնքը»:

Կանտի համաձայն պարտաւորութիւնները, ընդհանրապէս, կարելի է «լայն» կամ «նեղ» պարտադրականութեամբ ընկալել⁴: Որքան «լայն» (լատ.՝ latitudo) է պարտաւորութեան պարտադրականութիւնը, այնքան անկատար է ան, որովհետեւ աւելի լայնապարփակ է ազատ կամեցողութեան գործի դատը, այսինքն կարելի չէ յստակօրէն սահմանել թէ որքանո՞վ մեր արարքը, մեզ, մեր նպատակին (որ միաժամանակ պարտաւորութիւն մըն է) պիտի հասցնէ, ինչ որ կը տեսնենք բարոյական պարտաւորութիւններու պարագային:

Օրինակի համար, ինչպէս քիչ ետք պիտի տեսնենք, ինքնիրեն հանդէպ անկատար պարտաւորութիւն մըն է իր անձի կատարելագործումը: Անշուշտ իւրաքանչիւր ոք կը ջանայ ինքզինք կատարելագործել, սակայն յստակ սահմանում մը չկայ: Իսկ «նեղ» պարտադրականութեամբ կատարեալ պարտաւորութիւնները աւելի կ'առնչուին իրաւականին, որովհետեւ անոնք կը ներկայանան աւելի յստակութեամբ եւ ճշգրտութեամբ:

Նկատի ունենալով աշխատասիրութեանս բարոյագիտութեան հետ առընչուած սահմանները, առանց իրաւական ուսմունքի մանրամասնութեանց մտնելու, կ'անցնիմ առաքինութեան ուսմունքին:

Փիլիսոփայութեան ոլորտէն ներս առաքինութիւնները եւ անոնց առընչուած բարոյագիտութիւնը յաճախ յատկանշական կը նկատուին Պլատոնի ու մասնաւորաբար Արիստոտէլի: Նաեւ գերման գաղափարապաշտութեան նախահայր Իմմանուէլ Կանտի համար առաքինութիւնները յատկանշական են, որովհետեւ իր բարոյագիտական երկերուն մէջ, մանաւանդ երրորդ երկի («Բարոյականութեան բնագանցութիւնը») երկրորդ մասին մէջ, Կանտ լայնօ-

երանութիւն (յուն.՝ eutychía, լատ.՝ beatitudo, գերմ.՝ Glückseligkeit, անգլ.՝ Beatitude), որ աւելի կրօնական երանգ մը ունի:

Երջանկութիւն եզրոյթով, Կանտ նկատի ունէր նաեւ բարեւարտութիւնը (գերմ.՝ Gutherzigkeit, անգլ.՝ Kind-hearted), ուր կը տեսնենք բարեհոգութիւն, բարեացակամութիւն, ազնուութիւն:

⁴ Կանտ «լայն» եւ «նեղ» պարտաւորութիւններու մասին զաղափարը բացատրած է վերոյիշեալ երկին (MdS) մէջ, էջ AB 20:

րէն կ'անդրադառնայ առաքինութեան ուսմունքին (գերմ.՝ Tugendlehre, անգլ.՝ Doctrine of Virtue) մասին:

Կանտի առաքինութեան ուսմունքը եւ Արիստոտէլի առաքինութեան բարոյագիտութիւնը, բոլորովին կը տարբերին իրարմէ: Այստեղ հարկ է նաեւ ամփոփ ներկայացնել Արիստոտէլի տարբերակը.–

➤ **ԱՐԻՍՏՈՏԷԼԻ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ**

Արիստոտէլի «Առաքինութեան բարոյագիտութիւն» տեսութեան *երջանկապաշտական* հիմնական գաղափարը հետեւեալն է.- բարոյական հարցերու եւ քննարկման գլխաւոր նպատակը, անհատին բարոյական *բարի* կամ *առաքինի* նկարագիր մը կերտելուն մէջ կը կայանայ: Անհատի այս նկարագիրը, միաժամանակ, թէ՛ պայմանն է թէ արդիւնքն է՝ նպատակադրուած լաւ կեանքին ու երջանկութեան: Այլ խօսքով, առաքինութիւնները միայն միջոցներ չեն՝ երջանկութեան հասնելու համար, այլ երջանկութեան բաղադրիչ մասերը:

Արիստոտէլի մօտ «լաւ կեանքի ու երջանկութեան» նախագիծը, սակայն, միայն անհատական բնոյթ չի կրեր, այլ բնականաբար կընդգրկէ ամբողջ ընկերային հասարակութիւնը, որովհետեւ առաքինի նկարագրով անհատ մը, առաջին՝ իր լաւ կեանքը կունենայ եւ երկրորդ՝ երջանկութեան կը հասնի, *միայն* առաքինութեանց ճամբով եւ *միայն* բարի ընկերութեան մը ծիրէն ներս:

Այս իմաստով, Արիստոտէլի բարոյագիտութեան հիմնական հասկացութիւնները կը կազմեն՝ *բարին*, *երջանկութիւնը* եւ *առաքինութիւնը*: Արիստոտէլի համաձայն, *բարին* կարելի է բնորոշել, որպէս անհատին համար ընտրելի ու ձգտելի բարիքը, որ նաեւ տենչալի նպատակակէտ մըն է: Արիստոտէլի համար *երջանկութիւնը* միաժամանակ *Գերագոյն Բարին* է (յուն.՝ to agathón, լատ.՝ summum bonum), երջանկութիւն մը, որ Արիստոտէլի բնութագրութեամբ «կատարեալ եւ ինքնաբաւ բարին է եւ վարմունքի մը վերջնական նպատակը»:

Հետեւելով իր ուսուցչին՝ Պլատոնի, Արիստոտէլ *լաւ կեանք* եւ *երջանկութիւն* ունենալու հարցով կու տայ երեք կարելիութիւն.-

ա) **Հաճոյալի կեանքը**, (յուն.՝ bios apólaustikos), որու գլխաւոր նպատակն է կեանքի ընթացքին հաճոյքի ու զուարճութեան ճամբով՝ *լաւ կեանք* ունենալ ու *երջանիկ* ըլլալ.

բ) **Քաղաքական կեանքը**, (յուն.՝ bios politikos), որու գլխաւոր նպատակն է կեանքի ընթացքին փառքի, հռչակի ու զօրութեան տիրանալով՝ *լաւ կեանք* ունենալ ու *երջանիկ* ըլլալ. եւ

գ) **Խորհրդածական կեանքը**, (յուն.՝ bios theôrêtikos), որու գլխաւոր նպատակը՝ կեանքի ընթացքին մտաւորական ու հայեցողական ճամբով *լաւ կեանք* ունենալ ու *երջանիկ* ըլլալն է:

Արիստոտէլի համաձայն, «լաւ կեանքն ու երջանկութիւնը» կը միտին, այս ճամբով, անհատի մօտ բարոյական *բարի* կամ *առաքինի* նկարագիր մը կերտելուն: Արիստոտէլի համաձայն, առաքինութիւններու երկու խումբեր կան.-

• **Առաջին՝ տեսական (կամ տրամաբանական) առաքինություններ**, որոնք կը յառաջանան հոգիի բանական մասէն, ինչպէս օրինակ՝ բանականություն, գիտություն, իմաստություն, խոհեմություն, արուեստն ու ըմբռնումը կամ հասկացողությունը. եւ

• **Երկրորդ՝ բարոյական (կամ նկարագրի) առաքինություններ**, որոնք կը յառաջանան հոգիի ոչ-բանական մասէն, ինչպէս օրինակ՝ արդարություն, արիություն, առատաձեռնություն, վեհանձնություն, սիրալիրություն, ներողամտություն, ճշմարտացիություն, ճարտարություն եւ բարեկամություն (ընկերություն):

Արիստոտէլի «Առաքինութեան բարոյագիտությունը», հակառակ կարգ մը առաւելություններուն, ենթարկուած է որոշ քննադատություններու, գլխաւորաբար բարոյական արժեւորման բազմաթիւ դժուարություններուն պատճառով:

Նաեւ Արիստոտէլի երջանկապաշտությունը (Eudaimonism) քննադատելի է, մանաւանդ երբ նկատի առնուի զուտ անձնական երջանկութեան մը հետապնդումը, քանզի հոն կարելի է գտնել շեշտուած եսասիրություն (Egoism) մը, որ կշտամբելի է:

Իսկ Կանտի համաձայն, երջանկությունը բարոյականութեան համար անբաւարար հիմք մը կը կազմէ, անոր փոխարէն ան կը նախընտրէ անհատի ինքնավարությունն ու ինքնօրինությունը (Autonomy): Այս իմաստով, լաւ կեանքի տեսութեան փոխարէն, կը ներկայանայ որպէս կեանքի պարտաւորութեան տեսությունը, ինչպէս նաեւ երջանկապաշտութեան փոխարէն՝ պարտագիտությունը:

Մինչ Արիստոտէլի Առաքինութեան բարոյագիտութիւնը երջանկապաշտական ձգտումի բարոյագիտական տեսութիւն մըն է, Կանտի Առաքինութեան ուսմունքը աւելի խստապահանջ բարոյագիտական տեսութիւն մըն է, հիմք ունենալով մարդու ինքնավարութիւնը, որ ինչպէս նշեցինք՝ Արիստոտէլի ազատութիւնն է եւ ինքնակամ պարտաւորութիւնը, որ կ'առնչուի անպայմանական հրամայականին:

Հաստատելով վերոյիշեալ գաղափարները, կրնանք նաեւ եզրակացնել, որ Կանտի բարոյագիտութիւնը, որպէս յենարան կ'ընդունի առաքինութիւնները, որոնք մարդու նկարագիրը կը կերտեն, անոր անձնական կանոնները (մաքսիմները) կը զօրացնեն, արգելքներու ու խանգարիչ հանգամանքներու յաղթահարման կ'օժանդակեն եւ մարդը կ'առաջնորդեն՝ դէպի բարոյական պարտաւորութիւններու իրագործում: Այսուհանդերձ **Առաքինութեան ուսմունքի գերագոյն սկզբունքը կը մնայ՝ «անպայմանական հրամայականը», որու մասին անդրադարձանք արդէն:**

Երջանկապաշտական բարոյագիտութեան ոլորտէն ներս, յաճախ կեանքի նպատակ ընդունելով մարդ կը տեսնայ՝ ա) անձնական հաճոյք, բ) բարեկեցութիւն եւ գ) իշխանութիւն ունենալ: Այս պարագային, սակայն, չափազանցութեան կամ մոլութեան վտանգը կը սպառնայ, երբ մարդ կ'իյնայ ծայրայեղութիւններու գիրկը, ինչպէս՝ ա) անձնական հաճոյքէն՝ հաճոյքապաշտութիւն, բ) բարեկեցութենէն՝ ընչաքաղցութիւն եւ գ) իշխանութենէն՝ բռնակալութիւն:

Կանխելու համար վերոյիշեալ վտանգը, Կանտ կը յիշէ չափաւորութեան առաքինութիւնը, որ ինչպէս Արիստոտէլի մօտ՝ ծայրայեղութիւններէն խոհեմաբար խուսափելու մտային կարողութիւնն է: Իսկ Կանտի համաձայն, չափաւորութիւնը նոյնինքն անձնական ծայրայեղ կիրքերու վերահսկողութիւնն (Control) է, ինքնազսպումի միջոցով:

Յունական դասական փիլիսոփաներու մօտ առաքինութիւն նկատուող իմաստութիւնն ու խոհեմութիւնը, Կանտի մօտ կը վերածուին բարոյական դատողութեան: Հետաքրքրական է նաեւ հաստատել, որ Կանտի յիշատակած առաքինութիւնները չեն յիշուիր Պլատոնի եւ Արիստոտէլի մօտ, որպէս գըլխաւոր առաքինութիւններ:

Կանտ, իր Առաքինութեան ուսմունքի քննարկման ատեն, որպէս տարրական ուսմունք, գլխաւորաբար նկատի ունի պարտաւորութիւնները, որոնք երկու տեսակ են. – դրական, երբ անոնք առաքինութեան կը միտին կամ ժխտական, երբ մոլութեան ձերբազատումը կը թելադրեն: Կանտի պարտաւորութիւններու գլխաւոր բաժանումը կ'ընդգրկէ. –

Ա. մարդու պարտաւորութիւնները՝ ինքնիրեն հանդէպ ապա

Բ. մարդու պարտաւորութիւնները՝ ուրիշներու հանդէպ:

Մարդու ունեցած պարտաւորութիւնները՝ ինքնիրեն հանդէպ, կարելի է եւս երկուքի բաժնել. – կատարեալ եւ անկատար պարտաւորութիւններ, որոնք նախապէս քննարկուեցան: Կանտ կը կատարէ նաեւ այլ ենթաբաժանումներ, ինչպէս ստորեւ պիտի տեսնենք:

Առաքինութեան ուսմունքը ճոխացած է բազմաթիւ նկատողութիւններով (գերմ.՝ Anmerkung, անգլ.՝ Remark) եւ բարոյադատական գործնական օրինակներով (գերմ.՝ Kasuistik, անգլ.՝ Casuistry), որոնք կը ներկայանան որպէս հարցադրումներ:

Ստորեւ Կանտի, իր բառակապակցութեամբ, «Պարտաւորութիւններու ուսմունքը» (գերմ.՝ Pflichtenlehre, անգլ.՝ Doctrine of Duties), իր գլխաւոր եւ ենթա-բաժանումներով:

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ՔԷՀԵԱՆԻ
Գերմանիա

(Շար. 6)

Հ Ա Ր Ց Ա Ջ Ր Ո Յ Ց

ՄԵՐ ԱԶԳԻՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՏԱԳՆԱՊՆԵՐԸ ՊԷՏՔ Է ՄԻԱՍՆԱԲԱՐ ԴԻՄԱԳՐԱԲԵՆՔ

Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի մասին խօսիլը սովորական երեւոյթ մը չէ ու պէտք չէ ըլլայ: Եռամիութիւնը այսօր, աւելի քան երբեք, լուրջ տազնապներու ու մարտահրաւերներու դէմ յանդիման կը գտնուի: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ազգընտիր Հայրապետը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսը 2023 նոր տարին դարձեալ հռչակեց «Սփիւռքի Տարի», սակայն շեշտը դնելով ինքնաքննութենէ վերակազմակերպման վրայ: Յաջորդական նման հռչակում կատարելու համար Վեհափառ Հայրապետը, վստահաբար, լուրջ եւ նոյնիսկ մտահոգիչ պատճառներ ունի: Սփիւռքը արդէն իսկ մաշումի ու գունաթափման ընթացքի մէջ է եւ անմիջական կարիքը ունի վերակազմակերպման: Ան սկսած է անտարբեր ըլլալ ինքն իր նկատմամբ եւ յուսախաբ՝ Հայաստանի նկատմամբ, յատկապէս վերջին տարիներուն, Արցախի 44-օրեայ պատերազմէն ետք: Արցախի հարցը կը յամենայ եւ մեր սիրելի Արցախը կը գտնուի շրջափակման մէջ:

Ինչ կը վերաբերի երիտասարդութեան, ան բաւականին հեռու է մեր եկեղեցական ու ազգային կեանքէն, մեր հաւաքակա՛ն կեանքէն:

Արդարեւ, 2022 տարուան աւարտին եւ նոր տարուան՝ 2023-ի սեմին, Արամ Ա. Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ յիշեալ բոլոր մտահոգութիւններուն, ի մասնաւորի շեշտը դնելով Սփիւռքի վերակազմակերպման անհրաժեշտութեան վրայ:

Հ) Վեհափառ Տէր, մեծապէս շնորհակալ ենք, որ այս տարի եւս մեզի առիթ ընծայեցիք տարուան աւարտին հարցազրոյց ունենալու Ձերդ Սրբութեան հետ: Երբ յետադարձ ակնարկ մը նետէք անցնող տարուան հայ կեանքին վրայ, ի՞նչ արժեւորում կրնաք կատարել:

Պ) Բնականաբար, անցնող տարուան ընթացքին հայ կեանքի զանազան բնագաւառներէն ներս եղան իրագործումներ եւ դրական ֆայլեր առնուեցան. սակայն, ընդհանրապէս հայ կեանքը շարունակեց դիմագրաւել լուրջ տագնապներ, հիմնահարցեր ու մարտահրաւերներ: Իրապաշտ մօտեցումը երբեմն մեզ կրնայ յոռետես արժեւորումներու առաջնորդել:

Անհրաժեշտ է ըլլալ առարկայական ու իրատես, կարենալ յստակօրէն տեսնելու մեր բացթողումները ու ձեռքբերումները, եւ ապա, վերանորոգ հաւատով ու յառաջատեսիլ կամֆով մշակել նոր ծրագիրներ: Ազգերու ու կազմակերպութիւններու կեանքին մէջ տագնապները բնական են. սակայն անհրաժեշտ է զանոնք դիմագրաւելու քաջութիւնը ու իմաստութիւնը ունենալ: Ա՛յս կը պահանջէ մեր ազգի կեանքին ներկայ հանգրուանը:

Հ) Վեհափառ Տէր, վերջին Ազգային Ընդհանուր Ժողովը կարելոր հանգրուան մըն էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան մէջ: Ի՞նչ հեռանկար ունիք ապագային նկատմամբ:

Պ) Մեր Ս. Աթոռի կեանքին ու առաքելութեան մէջ Ազգ. Ընդհանուր Ժողովները կը գումարուին նախ յետադարձ ակնարկով կատարուած աշխատանքը արժեւորելու, եւ ապա, յառաջիկայ շրջանի աշխատանքի առաջնահերթութիւնները նշելու: Գոհունակութեամբ կ'ուզենք հաստատել, որ հակառակ անցնող տարիներու իրերայաջորդ տագնապներուն, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր առաքելութեան առնչուած զանազան մարզերէն ներս յատկանշական իրագործումներ ձեռք բերաւ: Շուրջ 400 էջերու վրայ տարածուած Ազգ. Ընդհանուր Ժողովին ներկայացուած տեղեկագրին մէջ հակիրճ կերպով պարզուած են մեր Ս. Աթոռի առաքելութեան կարելոր երեսները: Յառաջիկայ շրջանը ծրագրելու իմաստով, թէ՛ Մեր պատգամին եւ թէ՛ յատուկ նիստերու ընթացքին կատարուած քննարկումներուն նամբով լուսարձակի տակ բերինք հետեւեալ գլխաւոր հարցերը.– հայ ընտանիք, հայակերտում, երիտասարդութիւն, Սփիւռք, Արցախ, Հայաստան: Անոնց հետ աղերս ունեցող մտահոգութիւնները ու առաջադրութիւնները կարելոր տեղ պիտի գրաւեն յառաջիկայ շրջանի մեր առաքելութեան օրակարգին վրայ: Այսօր աշխարհը տարբեր է իր պայմաններով ու մարտահրաւերներով եւ անոնց անդրադարձը մեր ժողովուրդի կեանքէն ներս սկսած է դառնալ տիրական: Չենք կրնար անտեսել այս երեւոյթը: Մեր եկեղեցւոյ մօտեցումը պէտք է ըլլայ համահունչ՝ մեր ժողովուրդը դիմագրաւող ներկայ տագնապներուն ու մարտահրաւերներուն:

Հ) Վեհափառ Տէր, անցնող տարին հուշակեցիք «Սփիւռքի Տարի»: Նոյնպէս նաեւ՝ ներկայ տարին: Ի՞նչ պատճառներ ու մտահոգութիւններ Ձեզ մղեցին դիմելու այս քայլին:

Պ) Ինչպէս քիչ առաջ նշեցինք, կ'ապրինք համաշխարհայնացման շրջանի մը մէջ: Համաշխարհայնացումը իր զանազան երեւոյթներով սկսած է շեշտուած ներկայութիւն դառնալ մեր ժողովուրդի կեանքէն ներս: Այլեւս չենք կրնար մեր համայնքներուն շուրջ պատեր հիւսել ու կողիա-

ցած ապրիլ: Անցեալին, մեր լեզուն, մշակոյթը եւ աւանդութիւնները երաշխաւորեցին մեր ինքնութիւնը ու ամրացուցին մեր գոյութիւնը, մեր շրջապատէն մեզ պաշտպանող պատեր հանդիսանալով: Համաշխարհայնացումը քանդած է ամէն տեսակ պատնէշ ու սահմաններ բոլոր ազգերու կեանքէն ներս. կ'ապրինք բազմացեղ, բազմակրօն, բազմագոյն ընկերութիւններու մէջ: Ներկայ պայմաններուն մէջ սեփական ինքնութիւն ու կառոյց, աւանդութիւն ու արժէք պահելը ու պաշտպանելը փաստօրէն դարձած են ամէնօրեայ պայքար, յատկապէս փոքր ազգերու համար: Հետեւաբար, Սփիւռքը չի կրնար այլեւս եղածը եւ ունեցածը պաշտպանել. անհրաժեշտ է նոր ժամանակներուն ու նոր հրամայականներուն համապատասխան մօտեցումներ որդեգրել, բնականաբար, հաւատարիմ մնալով մեր հիմնական արժէքներուն ու իտէալներուն: Եթէ հայապահպանումը ուղղուած ըլլայ միայն եղածը պահելու, մեզ պիտի առաջնորդէ դէպի ինքնակոտորում ու լացում: Հայապահպանումը պէտք է ուղղուած ըլլայ մեր ունեցածը վերակազմակերպելու, վերանորոգելու, վերաշնչաւորելու եւ գայն դարձնելու համապատասխան՝ ներկայ ժամանակներու պահանջին: Ա՛յս կը նպատակադրէ Սփիւռքի վերակազմակերպումը: Այս նպատակը իրագործելու համար անհրաժեշտ է դիմել գործնական քայլերու՝ նախ քանակական ու առարկայական մօտեցումով արժեւորել Սփիւռքի պարզած ներկայ գոյավիճակը, նշել ընդհանրական եւ տեղական մտահոգութիւնները, եւ ապա վերակազմակերպումի ընթացք մը նշել, բնականաբար նկատի ունենալով տարբեր համայնքներու ներքին դրուածքները ու շրջապատի պայմանները: Այս ծիրէն ներս, պէտք է յատուկ կարեւորութիւն տրուի ինքնութեան հարցին: Ի՞նչ կը նշանակէ հայ ըլլալ Սփիւռքի մէջ. ի՞նչ է հայուն ինքնանաճումը եւ անկէ յառաջացող հրամայականները: Ինչպէ՞ս կարելի է մէկ կողմէն՝ հայու ինքնութիւնը պահել ամուր, եւ միւս կողմէն՝ մաս կազմել տուեալ ընկերութեան հաւաքական ինքնութեան: Այս եւ նման հարցերու քննարկումը անհրաժեշտ է որ շարունակուի՝ ո՛չ տեսական ու զգացական՝ այլ իրատես ու գոյութենական մօտեցումով:

Հ) Սփիւռքի գծով Ձեր պատգամներուն ու խօսքերուն մէջ, Վեհափառ Տէր, շեշտը կը դնէք «վերակազմակերպումի» վրայ: Ի՞նչ է Ձեր պատկերացումը այս մասին: Ինչպէ՞ս կարելի է լայնատարած Սփիւռքը վերակազմակերպել:

Պ) Անցնող տարուան, ինչպէս նաեւ ներկայ տարուան Մեր հոչակազրերուն մէջ շեշտած ենք Սփիւռքի վերակազմակերպման հրամայականը: Վերակազմակերպումը պէտք է ըմբռնել իր նեղ առումով: Վերակազմակերպում կը նշանակէ ոչ թէ եղածը քանդել ու նորը շինել, այլ՝ վերանորոգել, վերաշխուժացնել, վերակառուցել, վերադասաւորել, վերակենսաւորել, բարեփոխել՝ միշտ համահունչ ներկայ պայմաններուն ու իրա-

կանութիւններուն եւ համապատասխան տուեալ համայնքի կարիքներուն ու սպասումներուն: Այս իմաստով, Սփիւռքը իր բոլոր կառոյցներով անյետաճգելի կարիքը ունի վերակազմակերպումի: Տեղֆայլ՝ կը նշանակէ նահանջ: Մենք չենք կրցած քայլ պահել ներկայ աշխարհի արագընթաց փոփոխութիւններուն ու զարգացումներուն հետ: Կարծրատիպերով առաջնորդուած ենք: Անհրաժեշտ է, որ մեր կառոյցները, պահելով հանդերձ իրենց ինքնութիւնը, նպատակը ու արժէքներու համարկարգը, կարեւորութեամբ նկատի ունենան իրենց շրջապատին մէջ տեղի ունեցող զարգացումները. այլապէս, վիհը պիտի խորանայ հիմին ու նորին, մեր կառոյցներուն ու երիտասարդութեան միջեւ: Հարկ է ըլլալ զգոյշ:

Հ) Վեհափառ Տէր, Սփիւռքի վերակազմակերպման ծիրէն ներս յատուկ կարեւորութիւն կը ներկայացնեն թեմերը: Ինչպէ՞ս կը տեսնէք թեմերու վերակազմակերպման գործընթացը:

Պ) Եկեղեցին կեդրոնական տեղ ու իւրայատուկ դեր ունի համայնքներու կեանքին մէջ: Որպէս ազգային եկեղեցի, մեր եկեղեցւոյ կեանքին մէջ լայն չափով ներառուած են տուեալ համայնքի կեանքին զանազան տարածքները: Հետեւաբար, կարելի չէ բաժանման յստակ գիծ մը ճշդել եկեղեցւոյ ու համայնքին միջեւ. սակայն, անհրաժեշտ կը նկատենք եկեղեցին զանազանէլ համայնքէն ներս գործող միւս կառոյցներէն՝ թէ՛ առաջնահերթութիւններու եւ թէ՛ մտածելակերպի ու գործելակերպի իմաստով: Թեմի մը վերակազմակերպումը բնականաբար իր դրական հետեւանքները պիտի ունենայ տուեալ համայնքի վերակազմակերպման մէջ: Հետեւաբար, հարկ է սկսիլ թեմերով: Այս ուղղութեամբ Մեր պատկերացումը փոխանցած ենք մեր թեմերուն եւ ներկայ տարուան Հոչակագրին մէջ լայնօրէն անդրադարձած այս մասին, ճշդելով թեմերու վերակազմակերպման գործընթացը՝ զանազան հանգրուաններով ու հիմնական շեշտաւորումներով: Այս տարուան ընթացքին, որոշած ենք այցելել մեր թեմերը եւ Առաջնորդ Սրբազաններուն ու թեմական իշխանութիւններուն հետ քննել տուեալ թեմի վերակազմակերպման սոնչուած հարցեր, մտահոգութիւններ ու կարելիութիւններ: Անկէ ետք, յաջորդ տարի, թեմերը Ազգ. կեդրոնական Վարչութեան Կրօնական ու Քաղաքական Ժողովներուն պիտի ներկայացնեն իրենց կատարած աշխատանքներու տեղեկագրերը ու մշակած ծրագիրները, որպէսզի կարելի ըլլայ հանգրուանային կերպով իրագործել զանոնք: Յիշեալ աշխատանքը դիրին չէ. դժուարութիւններ պիտի դիմագրաւենք. մեր կեանքէն ներս որեւէ բան փոխելը, նոյնիսկ բարեփոխելը, հեզասահ ընթացք մը չ'ենթադրեր. սակայն երբ ունինք հաւաքական կամքը եւ մանաւանդ համոզումը՝ մեր համայնական կեանքը բարեփոխելու ու վերակազմակերպելու, պէտք է զայն կատարենք հաւաքական ճիգով ու ամբողջական նուիրումով:

Հ) Վերջին տարիներուն Լիբանանի եւ Սուրիոյ մեր գաղութները լուրջ տագնապներէ անցան: Վեհափառ Տէր, Ձերդ Սրբութիւնը անձնապէս զօրակից ու մասնակից դարձաւ յիշեալ գաղութներու վերականգման աշխատանքներուն: Ինչպէ՞ս կը տեսնէք այս գաղութներու ապագան:

Պ) Լիբանանի ու Սուրիոյ մեր գաղութները յատուկ կարեւորութիւն կը ներկայացնեն ընդհանրապէս մեր ժողովուրդին ու մասնաւորաբար Սփիւռքին համար: Սուրիոյ գաղութը պատմական գաղութ է. անոր անցեալն ու ներկան մեծապէս առնչուած են Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, արաբական ու իսլամական աշխարհէն ներս մեր ներկայութեան եւ Հայ Դատի հետապնդման աշխատանքներուն: Չմոռնանք որ Տէր Ջօրը կը գտնուի Սուրիոյ մէջ եւ ցեղասպանութենէն վերապրողներուն առաջին կայքը հանդիսացաւ Սուրիան: Լիբանանը առանցքային դեր ունեցած է Սփիւռքի վերակազմակերպման եւ յատկապէս Հայ Դատի հետապնդման եւ հայ կեանքի զանազան մարզերէն ներս մարդուծի պատրաստութեան մէջ. ան նաեւ իր քաղաքական դերակատարութիւնը ունի Լիբանանէն ներս, որպէս համայնքային երկիր: Ահա թէ ինչու, այս երկու գաղութներու ո՛չ միայն վերականգնումը, այլ նաեւ առաւել հզօրացումը մեծ նշանակութիւն ունին մեր ժողովուրդին համար: Անցնող տարիներուն համահայկական մաշտապով ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գլխաւորութեամբ գործնապէս սատարեցինք յիշեալ գաղութներու վերականգնումին գծով: Դժբախտաբար տագնապները կը շարունակուին: Հետեւաբար, մեր աջակցութիւնը եւս պէտք է շարունակուի մասնաւորաբար կրթական, ընկերային ու տնտեսական բնագաւառներէն ներս: Վերջին Ազգ. Ընդհանուր Ժողովին, Մեր պատգամին մէջ ընդգծեցինք, եւ Ազգային Ընդհանուր Ժողովը յատուկ կարեւորութեամբ անդրադարձաւ Լիբանանի ու Սուրիոյ գաղութներու վերականգնումի աշխատանքներուն զօրակից դառնալու հրամայականին:

Հ) Վեհափառ Տէր, արեւմտահայերէնը նահանջի մէջ է: Այս ուղղութեամբ Կաթողիկոսարանը Ձեր գլխաւորութեամբ աշխատանքի լծուած է պաշտպանելու արեւմտահայերէնը: Ցարդ ի՞նչ կատարուած է այս մարզէն ներս, եւ ի՞նչ են յառաջիկայ քայլերը:

Պ) Ցաւալի իրականութիւն է արեւմտահայերէնի նահանջը: Պատճառները բազմաթիւ են ու այլազան: Անհրաժեշտ է լրջօրէն մտածել արեւմտահայերէնի նահանջը կասեցնելու, մնայուն կերպով աղաւաղումի ենթարկուող մեր լեզուն մաքրելու, եւ զանազան միջոցներով անոր գործածութեան զարկ տալու կարելիութիւններուն մասին: Սա դիւրին աշխատանք չէ, սակայն, անյետաճգելի անհրաժեշտութիւն է: Ազգի մը ինքնութեան կարեւոր ազդակներէն մէկն է լեզուն, մանաւանդ մեզի նման փոքր ազգի մը համար: Արեւմտահայերէնի առողջ պահպանումը պէտք է

դառնայ թե՛ մեր եկեղեցւոյ, թե՛ հայ դպրոցին եւ թե՛ հայ կազմակերպութիւններուն ու մանաւա՛նդ հայ ընտանիքին հիմնական մտահոգութիւնը: Հայ ընտանիքը, մեզի համար, ինչպէս միշտ կը շեշտենք, դպրոց է. ծնողքը հայերէն պէտք է խօսի իր զաւակներուն հետ: Հայ դպրոցէն ներս յատուկ կարեւորութիւն պէտք է տրուի հայ լեզուին: Դժբախտաբար, համաշխարհային մշակոյթը իր քանդիչ ներկայութեամբ սկսած է մեր կեանքէն հեռացնել մեր լեզուն: Կարելի է յիշել բազմաթիւ երեւոյթներ, որոնք փաստօրէն կը նպաստեն արեւմտահայերէնի արագընթաց նահանջին: Ինչպէ՞ս կարելի է պայքարիլ այս մտահոգիչ երեւոյթին դէմ: Մեր Ս. Աթոռը շուրջ ութ տարիներ առաջ յանձնաժողով մը հաստատեց, յատուկ աշխատանք սկսաւ կատարել, նախ արեւմտահայերէնին առնչուած զանազան հարցերու (կէտադրութիւն, քերականական հարցեր, ուղղագրութիւն, ելլն.) յստակացումներ կատարելով ու հաւաքական ընդհանուր ուղղութիւն մը ճշդելով եւ ապա, արեւմտահայերէնի գործածութեան տարածման նպաստող կարելիութիւնները ֆննդելով: Սակայն, յաջորդական տագնապները եւ յիշեալ աշխատանքին անմիջականօրէն լծուած յանձնախումբի կարգ մը անդամներու մահը պատճառ հանդիսացաւ, որ դանդաղի յիշեալ գործընթացը: Շուտով պիտի վերսկսինք մեր աշխատանքներուն, Հ.Հ. Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Հոսանքայ Անտեսան Լեզուագիտական Հիմնարկին հետ գործակցաբար:

Հ) Վեհափառ Տէր, ներկայիս ի՞նչ հանգրուանի վրայ կը գտնուի Սիսի Կաթողիկոսարանի դատը:

Պ) Այս մասին լայնօրէն անդրադարձած ենք Ազգային Ընդհանուր Ժողովին ներկայացուած տեղեկագրին մէջ, ինչպէս նաեւ զանազան առիթներով մամուլի քննարկով տեղեկ պահած մեր ժողովուրդը դատի ընթացքին մասին: Հոս կ'ուզենք յիշեցնել, որ Եւրոպայի Մարդկային Իրաւանց Դատարանին յղուած Սիսի Կաթողիկոսարանի վերադարձի թղթածրարը նոյն դատարանին կողմէ, դատարանի ներքին ուղեգիծին լոյսին տակ, թելադրուեցաւ որ ներկայացնենք թրքական դատարան: 30 Յուլիս 2019-ին, թղթածրարը ներկայացուեցաւ Քոզանի (Սիս) Նախադատ Ատեսանին: Յայտնենք, որ մեր դատական հայցով կը պահանջուի Սիսի Կաթողիկոսարանը արձանագրել իր իրաւատիրոջ՝ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան անունով: Բնականաբար, մեր պահանջը հիմնաւորող անհրաժեշտ տուեալները ներկայացուած են թղթածրարին մէջ: 11 Նոյեմբեր 2021-ին, Քոզանի Նախադատ Ատեսանը մերժեց մեր հայցը՝ ոչ իրական տուեալներէ մեկնած: 22 Փետրուար 2022-ին, թղթածրարը յղուեցաւ Վերադատ Ատեսանին: Մեր իրական յանձնախումբը մօտէն կը հետեւի դատի ընթացքին եւ համապատասխան փայլերու պիտի դիմէ հասնելու համար մինչեւ Եւրոպայի Մարդկային Իրաւանց Դատարան:

Հ) Վեհափառ Տէր, տասնըճինգ տարիներ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Կեդրոնական ու Գործադիր վարչութեանց Ատենապետը ըլլալէ յետոյ վերջերս ընտրուեցաք նոյն Խորհուրդի Նախագահ: Ի՞նչ սպասումներ ունիք Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդէն եւ ընդհանրապէս միջ-եկեղեցական շարժումէն:

Պ) Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի բարձրագոյն պաշտօնը Կեդրոնական ու Գործադիր Վարչութեանց ատենապետութիւնն է, գոր վարեցիմք 1991-էն մինչեւ 2006, երկու իրերայաջորդ շրջաններ, դառնալով նոյն պաշտօնին համար ընտրուած առաջին ուղղափառը ու երիտասարդը: Խորհուրդի նախագահութիւնը վարչակազմակերպչական տարբեր հանգամանք ու պատասխանատուութիւն կ'ենթադրէ: Միջ-եկեղեցական շրջանակներ ուզեցին, որ անպայման ստանձնեմք ներկայ պատասխանատուութիւնը, նկատի ունենալով Մեր տարիներու փորձառութիւնը եւ ընդհանրապէս միջ-եկեղեցական շարժումին դիմագրաւած լուրջ մարտահրաւերները: Յայտնեմք, որ ներկայ ժամանակներուն միջկրօնական ու յատկապէս քրիստոնեայ-իսլամ յարաբերութիւնները սկըսած են առաջնային տեղ գրաւել եկեղեցիներու կեանքին ու առաքելութեան օրակարգին վրայ: Թե՛ միջ-եկեղեցական ու թե՛ միջ-կրօնական յարաբերութիւններուն մեր Ս. Աթոռը կը շարունակէ բերել իր գործօն մասնակցութիւնը սերտ յարաբերութիւններ մշակելով եկեղեցական թե՛ կրօնական կարեւոր կեդրոններուն ու պատասխանատուներուն հետ:

Հ) Վեհափառ Տէր, ինչպէս քաջ գիտէք, Հայաստանը լուրջ տագնապներ կը դիմագրաւէ: Ի՞նչ է Ձեր տեսակէտը Հայաստանը ներկայ կացութենէն դուրս բերելու գծով:

Պ) Այս մասին յանախակի առիթներով արտայայտուած ենք ու կարեւորութեամբ շեշտած հետեւեալ կէտերը.- ա) Մեր ազգին, մարդուծին ու ներուծին համախմբումը Հայաստանի հզօրացման, Արցախի ինքնորոշման պաշտպանման եւ մեր ազգի իրաւունքներու հետապնդման շուրջ, անվիճելի հրամայական է: Բ) Հայաստանը ներկայ նգնաժամէն դուրս բերելու միակ ազդու միջոցը Հայաստանի, Արցախի ու Սփիւռքի պետական, հոգեւոր եւ քաղաքական պատասխանատուներու համախմբումն է, եւ վնասական որոշումներու կայացումը՝ ի խնդիր Հայաստանի փրկութեան: Նման վնասորոշ քայլի մը ուշացումը մեզ պիտի առաջնորդէ դէպի նահանջ, տեղի տալով Ազրպէյճանի հետզհետէ բազմացող պահանջներուն: Այսօր մենք առանձին ենք. պէտք է վստահիմք մեր սեփական ոյժին: Շրջանի աշխարհաքաղաքական պայմանները ի նպաստ մեզի չեն: Հետեւաբար, մեր ազգի ներքին ոյժին ու ներոյժին համախմբումը մեզի համար պիտի դառնայ հզօր յենարան՝ խոհեմութեամբ ու քաջութեամբ դիմագրաւելու Հայաստանին ու Արցախին սպառնացող ահաւոր վտանգները:

Հ) Արցախի 44-օրեայ պատերազմէն յետոյ մեր ժողովուրդը ընդհանրապէս դարձած է յուսահատ. Արցախի ապագան կը մնայ անորոշ: Վեհափառ Տէր, ըստ Ձեզի Ի՞նչ կարելի է ընել:


Պ) Ինչպէս քիչ առաջ ըսինք, շրջանի աշխարհաբաղադական պայմանները ի նպաստ մեզի չեն: Հայաստանի բարեկամ նկատուող երկիրները սկսած են ժողովրդային բացատրութեամբ, իրենց գիւնդին մէջ ջուր խառնել, եւ 44-օրեայ պատերազմէն Թուրքիոյ զօրակցութեամբ յաղթական դուրս ելած Ազրպէյճանը պահանջատէրի դիրքով կը խօսի Հայաստանին հետ: Այս կացութեան դիմաց, դիտեցէք մեր կեանքը. ներքին բաժանումներ ու փոխադարձ ատելութիւն: Հայաստանի անվտանգութեան, անկախութեան ու հողային ամբողջականութեան պահպանումը, ինչպէս նաեւ՝ Արցախի ինքնորոշման իրաւունքի պաշտպանութիւնը պէտք է նկատուին ամէն բանէ վեր: Ի՞նչ կարելի է ընել այս ուղղութեամբ: Զգացական, տեսական, հոնտորական, լոգունգային մօտեցումներէ հարկ է հեռու մնալ: Նստիւնք եւ իրատես մօտեցումով որոշենք թէ ինչ կրնանք ընել: Այլապէս, յուսահատութեան, յուսախարութեան ու անորոշութեան տակ ընկնուած նահանջի գամբան պիտի շարունակենք: Նման կացութեան դիմաց լուռ ու անտարբեր մնալը մեր եկեղեցւոյ, եւ անձնապէս Մեզի համար անընդունելի է: Մենք մեր ժողովուրդին յոյս ներշնչող, մեր ժողովուրդին հաւատքը կոսնող, հայրենիքի անկախութեան ու իրաւունքներու պաշտպանութեան մեր ժողովուրդին յանձնառութիւնը աւելի ամրացնելու կոչումը ու պարտաւորութիւնը ունինք:

Հ) Վեհափառ Տէր, Ի՞նչ պատգամ ունիք մեր ժողովուրդին:

Պ) Կ'ապրինք դժուար ժամանակներու մէջ: Ծանր եւ աննախատեսելի տագնապներով շրջապատուած ենք՝ ներ-գաղութային, համասփիւռփեան ու համահայկական: Պէտք է բաւարարուինք միայն կացութիւնը պարզելով, մեր տագնապներուն մասին խօսելով. պէտք է շարժինք տագնապները յաղթահարելու հաւաքական հաւատքով ու տեսլականով: Բացուող Նոր Տարուան սեմին, կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ անասան պահէ մեր ազգը, հզօր՝ Հայաստանն ու Արցախը եւ ամուր՝ մեր ժողովուրդի ներքին միութիւնը, եւ Իր երկնային շնորհներով լեցնէ մեր գաւակներուն կեանքը: Մեր Տէրը Յիսուս Քրիստոս փոթորիկին մէջ մնացած իր աշակերտներուն ըսաւ՝ «մի վախնաք, հաւատացէ՛ք»: Ազգովին ահաւոր փոթորիկի մէջ կը գտնուինք, լսենք Քրիստոսի ձայնը, լսենք մեր սուրբերուն աղօթքով ու մեր նահատակներուն արիւնով շաղախուած մեր պատմութեան ձայնը՝ մի վախնաք, հաւատացէ՛ք եւ միացէ՛ք ի խնդիր Հայաստանի ու Արցախի փրկութեան:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ԵՐԱՆՏԻՔԻ ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ



Արժեւորում եւ վկայութիւններ այսպէս կը բնութագրուի գիրքը, որ կը պատմէ կրօնական, եկեղեցական, գրական, ազգային առաքելութեան վաստակը մարդու մը, որուն բաղդը կամ ճակատագիրը պատմական այս ժամանակահատուածին վստահեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ դարաւոր ժառանգութեան տէր կանգնելու

պատիւը: Անչափելիօրէն պատասխանատու եւ սպառնալից պաշտօն մը, որուն տիրանալէ ետք արժեւորելը քիչերուն ի վերուստ շնորհուած արժանիք մըն է, իսկ կառավարելն ու անսասան պահելը՝ ռազմավարական հնարամտութեան եւ կարգապահական խստապահանջութեան անարակելի տաղանդ մը: Բնորոշումներ, որոնք կը յատկանշեն Արամ Սրբազան Քէչիշեանը՝ նորընտիր Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, որ 1995 Յուլիս 1-ին հազարաւոր հաւատացեալներու ներկայութեան ծնրադիր կ'երդուէր ամուր ու անսասան պահել Կիլիկեան Աթոռը, հայցելով Աստծուն՝ «Յոյց ինձ ճանապարհ՝ յոր գնացից» եւ «Ուսո ինձ առնել զկամս քո»:

Ամբողջ քսանհինգ ամեակ մը հաւատարիմ իր ուխտին ծառայեց Հայ Եկեղեցւոյ, հայ ժողովուրդին ու հայրենիքին եւ կը շարունակէ իր երթը դէպի նորանոր նուաճումներ:

Արժեւորում ու վկայութիւններ գիրքը քսանհինգամեայ արգասիքին արտայայտութիւնն է ընծայաբերուած իր հօտի գաւակներուն կողմէ՝ իբրեւ երախտիքի բուռ մը խօսք, ճիտին պարտքը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ արժանընտիր Կաթողիկոսին՝ անձկութիւններով, մտահոգութիւններով, մտատանջութիւններով լուսցուցած գիշերներուն, յանուն բազում իրագործումներու, յանուն Հայ Եկեղեցւոյ անսասանութեան, յանուն հայ ժողովուրդի միասնականութեան, յանուն հայրենիքին եւ Սփիւռքին համար թափած ճիգին ու քրտինքին: Գիրքը կոթողական աշխատանք մըն է խմբագրուած խումբ մը մտաւորականներու՝ Գերշ. Տ. Շահան Սարգիսեանի, Շահան Գան-

տասարեանի, Օրդ. Արտեմիս Հացագործեանի եւ Վիգէն Աւագեանի կողմէ, գլխավորութեամբ՝ Գերշ. Տ. Վարուժան Հերկելեանին, ըստ նիւթի հատուածներու վերածուած ու համադրուած կը հրամցուի իբրեւ Վեհափառ Հայրապետին ծանրաբեռ տարիներու ներքող մը:

Այս փառահեղ գիրքին մեկենասութիւնը սիրայօժար ստանձնած են Տէր եւ Տիկին Կարօ եւ Սօսի Էշկիւաններ, որ կը բխի հայ գիրի ու գրականութեան հանդէպ իրենց ունեցած ակնածանքէն, Հայ Եկեղեցւոյ հանդէպ խորին հաւատքէն եւ արիւն քրտինքով վաստակուած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա. Հայրապետին 25-ամեայ հարուստ գանձարանը պատմութեան յանձնելու պատասխանատուութիւնէն:

Գիրքը կ'ամփոփէ հայրենիքի եւ Սփիւռքի մէջ պատասխանատու անձնավորութիւններու վկայութիւնները, ուր կ'արտացոլան Լիբանանի, Հայաստանի եւ Արցախի նախագահներու, Քրիստոնեայ-Իսլամ երկխօսութեանց պատասխանատուներու, Համաշխարհային Եկեղեցիներու, Ասիոյ եւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդներու ընդհանուր քարտուղարներու, մտաւորականներու, Աստուածաբաններու, ակադեմիկոսներու, հրապարակագիրներու, հոգեւոր եղբայրներու, ամէնօրեայ աշխատակիցներու եւ գործակիցներու տպաւորութիւններն ու դրոշմը, զոր կրած են անորմէ: Այդ յօդուածները կ'ուրուագրեն՝ մեծ եկեղեցականին, անբասիր կրօնաւորին, միջազգային էքիւմէնիստին, խոհուն մտաւորականին եւ մեծ հայուն մարդկային ու վսեմ կերպարը:

Գիրքը բաժնուած է Վեհափառ Հայրապետը յատկանշող տասնեօթը գլուխներու, աւելի քան 600 ստուար էջի մէջ խտացուած ծաղկաքաղ մը, ուր կ'արտացոլան իր գործունէութեան զանազան մարզերը, ընդգծելով մասնագիտական եւ նկարագրային իւրայատկութիւնները բնորոշող գիծերը: Գեղեցիկ պատկերներու եւ ճշգրիտ բնութագրումներու ներդաշնակ գեղանկար մը, որ հարազատօրէն կը պատկերէ՝ Հաւատքի եւ Առաքելութեան հայրապետը, Ընկերային Ծառայութեան Առաքելը, Ազգային պահանջատիրութեան անգիջող Հայրապետը, ուսուցիչը, շինարարը եւ վարչագէտը: Առանձնացնելով իւրաքանչիւր բաժնին մէջ Վեհափառ Հայրապետին իւրայատուկ մտածողութիւնը, մօտեցումը, համոզումներն ու հաւատալիքները, նպատակն ու ձգտումները, ամբողջացնելով Վեհափառ Հայրապետին կերպարի բոլոր երեսները:

Գերշ. Տ. Վարուժան Հերկելեանի ներածականով հանգամանօրէն կը ներկայացուի կենսագրականը Վեհափառ Հայրապետին եւ՝ Անթիլիասի Կաթողիկոսութեան ու անոր գահակալներուն տեսլականէն բխած Հայ Եկեղեցւոյ, ազգային պահանջատիրութեան, հայ մշակոյթի եւ հայ ժողովուրդի վերապրումին ու զարթօնքին կարեւոր կէտերը խտացուած, նշելով պատկերաւոր կերպով թէ՛ տասնամեակներու ընթացքին Կիլիկեան Կաթողիկոսութեան արած հոլովոյթը հասաւ հոն, ուր այսօր՝ «Անթիլիասը «փոքր պատուհանն»

վերածուեցաւ ընդարձակ դարպասի, ուրկէ մուտք կը գործեն գիտնականներ, աստուածաբաններ եւ նախագահներ»:

Ամէն մէկ յօդուած գրուած է անխառն ու անխարդախ զգացումներով, յօդուածագրի անմիջականութիւնէն բխած ապրումներով ու մտածումներով, հիմնուած անոնց ունեցած աշխատանքի բերումով կամ տարիներու գործակցութեամբ ու փորձառութեամբ հարստացած տպաւորութիւններով, ճշգրտօրէն նկարագրելով Վեհափառ Հայրապետին հարազատ պատկերը՝ գիրքը վերածելով յուշամատեանի մը:

Ի՞նչ կը թելադրէ Արթուրու՛մ եւ Վկայութիւն գիրքը, ի՞նչ կը մատնանշեն այնտեղ արձանագրուած գրութիւնները Վեհափառ Հայրապետին անձին, գործին ու մտահայեցողութեան մասին:

Թէ՛ Հայ Եկեղեցին եւ անոր Վեհապետը խօսեցաւ ու գործեց իր ժողովուրդը յուզող, տազնապեցնող հարցերով, Հայաստանն ու Արցախը քաղաքական, տնտեսական եւ ընկերային ամէնօրեայ տազնապներով, մնացին իր էութիւնը խռովող իրականութիւններ: Թէ՛ միջազգայինն ու նոր զարգացող գաղափարները որոնք կը տազնապեցնեն հայ մարդը, Հայ Եկեղեցին դնելով կողմնորշման վճիռի մը առջեւ, իմաստուն կերպով ճշդեց կեցուածքը, հայեացքը ուղղելով ապագային, եղաւ թուլատու՝ նորին, եւ հաւասարակշռեց՝ նորն ու հինը: Հարցադրումի ենթարկեց իր հոգիին մէջ արմատաւորուած տեսակէտներն ու կարծրատիպերը, քանդեց եկեղեցւոյ պատերը ու տարաւ եկեղեցին ժողովուրդին, մասնակից դարձնելով ժողովուրդը եկեղեցւոյ կեանքին մէջ: Իւրաքանչիւր տարին թեմա մը ընտրելով, բացաւ հայ անհատին առջեւ առիթը մտածելու, խորհելու, առաջարկութիւններ ներկայացնելու մեր իրականութիւնը յուզող՝ երիտասարդական, կնոջական, կրթական, ծառայական, մամուլի, ինքնութեան, եւ բազում այլ ժամանակակից նիւթերու մասին, մեր կառոյցները այժմէականացնելու, եւ նոր զարգացումներով լիցքաւորելու նպատակով: «Վեհափառն իր հօր մտքի սլացքով իւրաքանչիւր Նոր Տարուան ուրոյն կշիռ եւ բովանդակութիւն է հաղորդում՝ նուիրելով այս կամ այն երեւոյթին, դրանով իսկ գնահատելով հայ կնոջ եւ ընտանիքի դերակատարութիւնը, երիտասարդների տաղանդն ու մտքի թռիչքը, բուրի մղում դէպի գիրն ու գրականութիւնը, գրքի եւ ազգային արժեքների նկատմամբ առանձնակի վերաբերում՝ ձեւաւորում»:

Երազեց ստեղծել Անթիլիաս մը, որ ըլլայ ժամանակահունչ՝ բայց խորը խորութեամբ ականդականին վրայ, նոր ու գեղեցիկ՝ բայց հիմերը ամուր խորութեամբ հաստատուած հինին մէջ, բացուեցաւ ժողովուրդին՝ եւ սակայն չափաւորեց սահմանները՝ վանականին ու ժողովուրդին միջեւ, քայլ պահելով ժամանակակից գաղափարներու եւ մտածողութեան հետ:

Եւ տակաւին առանձինն՝ եղաւ Կաթողիկոսութիւնը ընդդէմ բոլոր դժուարութիւններուն, նեղութիւններուն, արգելքներուն ու փոթորիկներուն եւ մնաց միշտ խաղաղ, ինքնավստահ, գլուխը բարձր, առանց երերալու եւ ա-

ուանց զղրղացնելու Անթիլիասը, «Արամ Ա.-ին մէջ ես տեսայ պետական մարդը, պետական մտածողութիւնը, պետական վերաբերմունքը երկրի, հայրենիքի եւ ժողովուրդի հանդէպ: Մեր եկեղեցական իշխանութիւնը միշտ էլ եղել է մեր պետականութեան ուրոյն դրսեւորումը:» «Ես այսօր խորին համոզումն ունեմ, որ անկարելի է պատկերացնել Սփիւռքի եւ սփիւռքահայութեան կեանքը առանց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Յամենայնդէպս դա այդպէս է այսօր, մեր կեանքի այս վիճակում եւ այս պայմաններում»:

Թէ՛ Կիլիկեան Աթոռը Սիսէն ետք եղաւ յիրաւի՝ Նոր Սփիւռքի Սիսը:
 «Սիսը, եթեբային եւ հոգեւոր ներկայութիւն է, կաթողիկոսութեան եւ անոր հոգեւոր նեմարանին՝ Դպրեվանքի կեանքէն ներս: Սիսը Անթիլիասի լուռ բայց կոտտացող վերքն է, հին բայց չսպիացած վերքը: Սիսը Կիլիկեան Աթոռին խորհուրդն է ու յիշողութիւնը: Այս իրականութիւնէն մղուած Արամ Ա. Հայրապետը, հայկական պահանջատիրութեան գուգահեռ, կամ անոր առանցքային մէկ մղումով, շոշափելի առարկայական, քաղաքական ու յատկապէս իրաւական մակարդակի բերաւ նոյն այդ պահանջատիրութիւնը, առանց անտեսելու անոր յետադարձ հնարաւոր բոլոր վտանգները»:

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գործունէութիւնը կ'ընդգրկէ համազգային առաքելութիւն, ամբողջ ազգին հոգեւոր, մտաւոր, մշակութային, կրօնական արժէքներով զբաղելու պատասխանատուութիւնը, որ կը պարփակէ ազգային, քաղաքական միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական անդաստանը: Անոնք կ'իրագործուին մշակութային, հրատարակչական, համագումարներու եւ շինարարութիւններու ճամբով, որոնք կը գտնենք Վեհափառի գրիչէն հոսած անսպառ աղբիւրներու, տեղեկութիւններու եւ իրագործումներու մէջ:

Անդրադառնալու համար միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական յարաբերութիւններուն, այդ առթիւ կազմակերպած համագումարներուն, գրականութեան եւ հրատարակութիւններուն, «Ան այս կը կատարէ իր ներքին հոգեւոր եւ ազգային լինելութեան գոյելով արտաքին յարաբերութիւններու բնագաւառը՝ հայեցին եւ ընդհանրականը ազուցելով ու Հայ Եկեղեցւոյ հայ ինքնութիւնը պահպանող ու կերտող դերը միջ-եկեղեցական, միջ-կրօնական եւ միջազգային երկխօսութիւններով դաշնաւորելով: ... «Ծանօթացումէ առաւել սերտացումի եւ գործակցութեան կը վերածուի, առանց մեր մայր նանապարհէն շեղելու, աշխարհին հետ քայլ պահելու եզակիութեամբ»:
Անթիլիասը բանալով բոլորին առջեւ՝ «Հայ կեանքը կաժանէն քառուղի տարաւ»: **Այս ըստածը կը հաստատէ Համաշխարհային եկեղեցիներու Խորհուրդի Ընդհանուր քարտուղարը, երբ կ'ըսէ, թէ միջ-կրօնական կամ միջ-եկեղեցական համագումարներուն՝** «Փոքր թէ՛ մեծ, Արամ Ա. կ'առանձնանայ իր նկարագրով, կարելի չէ աննկատ անցնիլ բազմութեան մէջ անգամ: Կը խօսի յստակ, մտածումները՝ համակարգուած, համոզիչ եւ սպառիչ կեր-

պով»: Ան իմացական անձն է ու խորագետ Աստուածաբանը»: *Ամբողջանալով պապական խորհուրդի նախագահի վկայութեամբ թէ՛* «Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կրնայ հպարտանալ իր առաջնորդով, փոփոխութիւններով եւ մարտահրաւերներով յատկանշուող այս աշխարհին մէջ»:

Միջազգային ճանաչողութիւնը աւելի շեշտուեցաւ, երբ Վեհափառը խօսեցաւ իր լսարանին, ի՛նչ ազգի ալ, որ կը պատկանէին անոնք, անոնց հասկնալի լեզուով, իր բոլոր նիւթերուն կիզակէտը ունենալով հայ ժողովուրդը, «Ձեռքը պահած հայկական աշխարհի գարկերակին»: «Անթիլիասը աշխարհագրական կայքէ մը անդին կը վերածուի երկիսուական լինելութեան շարժումի եւ հոգեւոր-մշակութային հայրենիքի», «Վեհափառը միայն եկեղեցական գործիչ չէ, միայն Նուիրապետական Աթոռի գահակալ չէ, համահայկական նշանակութեամբ հոգեւոր, բայց նաեւ հանրածանօթ գործիչ է: Անթիլիասի մայրավանքն ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերը նեղ տարածութիւններն են Վեհափառի լայն գործունէութեան համար»:

Ակնարկելով Հայաստան-Սփիւռք խորհրդաժողովներուն՝ «Վեհափառի ելոյթներն երկրաշարժի ազդեցութիւն էին թողնում: Վեհափառը այդ ելոյթներում խօսում էր հայաստանցիներին ու հայերի սրտից», *դիտել տալով մեր իրականութիւնը յուզող տխուր երեւոյթները՝ ի Հայաստան թէ ի Սփիւռք:*

Բոլորի գրութիւններէն կ'անցնի կարմիր թելը՝ ճկուն դիւանագէտը, ճշմարտութիւնները յանդուգն բարձրաձայնող մտաւորականը, բեղուն ու անխոնջ ստեղծագործողը ու մեր ժողովուրդի բախտորոշ պահերուն խիզախ կողմնորշումներով դիրքորոշուող եկեղեցականը, պայմանաւորուած Հայաստան, Արցախ, Սփիւռքով եւ ընդելուզուած ծառայութեամբ, ազգային պահանջատիրութեամբ եւ ազգային ինքնութեամբ:

Այս հարուստ ու ճոխ բովանդակութեամբ գիրքին մէջ տեղ գտած սքանչելի գրութիւնները դժբախտաբար, կարելի չէ վերծանել մէկ առ մէկ, սակայն փոքր մէջբերումներով կարելի է բոյր մը տալ յօդուածագիրներու ակնածանքին ու հիացմունքին՝ «Իմացական անձին», «խորագետ Աստուածաբանին», միջ-եկեղեցականին, շինարարին եւ մարդուն մասին: Գրութիւնները վարար գետի մը նման կը հոսին ու կը շլացնեն ընթերցողը, սակայն չեն սպառեր Վեհափառ Հայրապետին տարիներու ընթացքին իր հոգիին մէջ ամբարուած ու եռացող ապրումները, ըմբռնողութիւնը եւ փիլիսոփայութիւնը:

Ահա՛ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա. Վեհափառ Հայրապետին քսանհինգամեայ արարումներուն մասին աշխարհ մը վկայութիւններ եւ հանգանակը, որ գործով կ'արդարանայ: Ահա՛ բազում յօդուածագիրներ, որոնք կու գան Հիւսիսէն ու Հարաւէն, Արեւելքէն ու Արեւմուտքէն եւ տակաւին կու գան իր ժողովուրդի ծոցէն եւ որոնց կրած տպաւորութիւնները անջնջելի կերպով դրոշմուած անոնց սրտին ու մտքին վրայ կու տան իրենց «հոգու պարտքը» իրենց հովիւին սրտառուչ, միայնգամայն հպարտութիւն

ներշնչող կոթողական գործին առջեւ: Ահա՛ վաւերական Վկայարանը քանդակուած իր զաւակներուն կողմէ, որ կը յանձնուի պատմութեան՝ ի փառաւորութիւն Հայ Եկեղեցւոյ եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Արամ Ա. Վեհափառ Հայրապետին լուսափայլ անձին ընդմէջէն:

*
* *

Ի՞նչու այս գիրքը: Ի՞նչ կը պատգամէ եւ ի՞նչ կը ներշնչէ այնտեղ պատկերող տիպարը:

Այս գրքին մէջ ընթերցողը կը գտնէ Վեհափառ Հայրապետը իր բարձունքին վրայ, կ'ընկալէ համապարփակ ներկայացումը անոր անձին ու գործին, ստեղծագործական տարիքի ամենաբեղուն շրջանին՝ գագաթին: Կը հաստատէ քսանհինգամեայ աշխատանքով վաստակած վիթխարի գործունէութիւն մը ժամանակակից ազգային եւ համաշխարհային իրադարձութիւններուն մէջ, ու մեր ժողովուրդին համար պատուաբեր անուն մը: Կը գտնէ միջ-կրօնական, միջ եկեղեցական եւ համազգային յարաբերութիւններով եւ տարածուն ու բազմատեսակ ծանօթութիւններով հարստացած, Անթիլիասը՝ վերածուած մշակութային լուսաւոր ու ճառագայթող կեդրոնի մը՝ վսեմ ձգտումներու, միջազգային հարթակի մը՝ համամարդկային իտէալներու, իրականացնելով Գարեգին Ա. Յովսեփեանց Կաթողիկոսի երազը՝ «Եռացող մշակութային փեթակի մը վերածել Կաթողիկոսութիւնը»:

Հաւաքեց մտաւորականութիւնը իր շուրջը, կազմակերպեց Կաթողիկոսութեան արխիւները, ձեռագիրները, Խաչեր Գալուստեան մանկավարժական կեդրոնը, կազմակերպեց համագումարներ՝ ինքնութեան, Արեւմտահայերէն լեզուի պահպանման, Հայաստանի Հանրապետութեան 100-րդ տարեդարձի եւ Հայոց Յեղասպանութեան իրաւական Հիմքերուն, 100-ամեակի շրջանային եւ թեմական մարմիններուն հետ: Բազմաթիւ հրատարակութիւններով, աւելի քան քառասուն, հարստացուց Կաթողիկոսութեան գրադարանը, մշակելով՝ «Մտաւորական այն դաշտը, ուր կարելի է անցնել հայութեան կեանքի յաւերժական սերմերը», բնորոշելով գինք իբրեւ մտաւորական Վեհափառը:

Եւ տակաւին գեղեցիկ ու աննախընթաց իրագործումներով՝ Թուշոց Բոյնի Թանգարան թէ՛ արխիւատուն, Հայաստանի Հանրապետութեան նուիրուած Յուշակոթող, թէ՛ Եպիսկոպոսարան, Պիքֆայայի մատուռ, յուշահամալիր, թէ՛ Վանքի հրապարակ, թէ՛ մատենադարան, բոլորը հարստացուցին Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, նոր սլացք տալով անոր առաքելութեան եւ անոր ճանաչողութեան ծիրը ընդլայնելով միջազգային հանրութեան մօտ:

Աւելի՛ն, գիրքը կ'անդրադառնայ մեր կեանքը փոթորկող իրականութիւններուն ու Վեհափառի առած քայլին՝ պահու հրամայականէն բխած. Կիլիկ-

եան Աթոռին ունեցած մտահայեցողութեան ու մտասեւեռումին, Սփիւռքի գոյութեան եւ ինքնութեան պահպանման կռիւին ու սփռած լոյսին, օրուան իրադարձութիւններուն ու դէպքերուն ու ժամանակի շունչին մասին: Անհատի մը պատմութեան ընդմէջէն իր ժամանակին յարուցող հարցերը կ'արծարծէ, իր կեանքին առնչուող, սակայն եկեղեցագիտական, համաշխարհային համահայկական մտահայեցողութեան մասին է գիրքը, իր ժողովուրդին ճրգտումներուն, ձեռքբերումներուն ու փիլիսոփայութեան մասին է, որ կ'արտացոլայ իր գրական, շինարարական, եկեղեցական ձեռնարկութիւններուն եւ ձեռքբերումներուն ընդմէջէն: Այդ իրագործումները ուրիշ ոչինչ են, քան՝ իր ժողովուրդին տեսլականէն բխած կատարումներ, որոնք ձեռք բերուեցան շնորհիւ իր խանդին ու արկածախնդիր խիզախութեան՝ ներքաշուելու մեծ ծրագիրներու մէջ՝ յանգելով առասպելական իրագործումներու: Եւ տակաւին Հայրենիքին ու Սփիւռքին ցաւերուն, սպառնալիքներուն, հայ ժողովուրդի լինելութեան կռիւին, իր համոզումներուն, հաւատամքին ու յանձնառութիւններուն մասին է գիրքը, որ ընթերցողը կը վկայէ յոբելեարին իրագործումներուն ընդմէջէն:

Իր ժողովուրդի կարիքներուն ու ցաւին կշռոյթով պայմանաւորուած Կաթողիկոսութեան 25-ամեակի արգասիքն է որ կը յանձնուի պատմութեան, յանձնելով մեր ժամանակներու շունչն ու ոգին: Ահա թէ ի՞նչու պէտք էր, որ գրուէր այս գիրքը. որով ո՛չ միայն Կիլիկեան Կաթողիկոսութեան մատենագրութիւնն է, որ կը հարստանայ անով, այլեւ՝ Հայ Եկեղեցոյ պատմութիւնը:

Քսանհինգամեայ բազմահմուտ եկեղեցականին գործունէութիւնը՝ իբրեւ պատգամ, իբրեւ տեղեկութիւններու անսահման շտեմարան, իբրեւ վկայագիր, պէտք էր յանձնուէր հասնող սերունդներուն, կարգալու եւ իմանալու կերպարն ու տիպարը՝ անստգիւտ կրօնաւորին, յառաջապահ եկեղեցականին, միջազգային փայլուն դէմքին, Մարդուն՝ որուն կեանքը եղաւ միայն գործ եւ արարում:

Այս գիրքով, հասնող սերունդները, որոնք պիտի գան տակաւին եւ Հայ Եկեղեցոյ ծառայութիւնը իրենց կեանքին նպատակն ու իմաստը պիտի դարձնեն, պիտի ներշնչուին անոր կերպարով, իրենց հոգիին թելադրականութեամբ պիտի քալեն միեւնոյն ճանապարհէն, պիտի իմանան, թէ գործն ու բանը կը բխին մեր իրականութիւնէն, մեր տազնապներէն, մեր մտատանջութիւններէն ու ժամանակներու պարտադրած հրամայականներէն, եւ թէ միայն գործով ու արարումներով է, որ Կաթողիկոսն ու Կաթողիկոսութիւնը կը մեծնան ու կը մեծարուին:

Այս գրքին մէջ Վեհափառը ներշնչումի աղբիւր է, որ հազարաւորներու զգացումները կ'ամփոփէ իր մէջ, իր անձին մէջէն դուրս կը ժայթքէ հայոց պատմութիւնը իբրեւ ոգի: Հո՛ն է մեր անցեալը իր արիւնալի յուշերով, հո՛ն է մեր ներկան իր մրրկայոյզ տազնապներով, հո՛ն է նաեւ մեր ապագան, հրա-

վառ գալիքի յոյսերով փողփողուն: Ահա թէ ի՛նչ կը պատգամէ եւ ի՛նչու պիտի գրուէր այս գիրքը: Յիշատակարան մը՝ կանգնեցուած Վեհափառ Հայրապետին ոգիին ու լինելութեան:

Հանգիտաբար, Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը եղաւ՝ «Վանքը, որ դարեր ու դարեր մնացած է ընդունարան ամբողջ մեր երկրի ներքին ուժերուն, հակատարր ձգտումներուն, քիւրաւոր հոգիներու շատ հզօր տագնապներուն: ... Վանքը՝ տեսակ մը խորհրդաւոր վառարան, որ իրեն կը քաշէր հոգեղէն բոլոր մատագայթումները, խորունկէն փրթած բոլոր վերելակող ուժերը պատրաստելու համար ինչ որ մշակոյթի հոգի կ'անուանենք»:

«Մեր հոգեղէնը թորեցին մեր վանքերը: Նայեցէ՛ք անոնց ու մեր լեռներուն: Ըսել թէ անոնք երկուքն ալ կը նային երկինք, կը ձգտին անոր, մանրանկար երկինքն են արդէն...»:

Այս տեսլականով ու այս հոգիով գործեց ու լծեց շուրջինները եւս աշխատանքի, ստեղծելով աշխատանքի իւրօրինակ հրետանի մը, որուն լծափողը ամուր պահեց իր ձեռքերուն մէջ ուղղութիւնն ու նպատակը չընդհատելով իր հունէն: Վարչագէտ մը, որ բծախնդրութեամբ ձգտեցաւ կատարելին՝ պահանջկոտութեամբ եւ ճշդապահութեամբ, կարգապահութեամբ եւ օրինապահութեամբ անդողող պահեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը: Հետեւաբար, զարմանալի չէ նաեւ որ գործն ու վաստակը պատահականութեան չձգուէին:

Յորդահոս այս գեղեցիկ պատկերներուն առջեւ ընթերցողը կը մղուի Վեհափառին 25-ամեայ արգասիքին առջեւ՝ մտածելու, վերլուծելու ու հիացած անոր խոյանքին ու տաղանդին փայլատակումովը, կը հաստատէ թէ ի՛նչի որ ձեռնարկած է, աւարտած է կատարելութեամբ եւ փոխակերպած՝ գեղեցկութեամբ:


Արժեւորում եւ վկայութիւնները երախտիքի յուշարձան մըն է արժանաւորին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառ չքեղաշուք Հայրապետին:

Բարի ե՛րթ, Սիրելի Վեհափառ, դէպի հոգեւոր նոր փայլատակումներու ու ծագումներ:

ՍԵՒԱ ՄԱՐԿՈՍԵԱՆ-ԽՏԸՇԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ
«ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ» ԽՈՐԱԳՐԵԱԼ ԱՆԳԼԵՐԷՆ ԳԻՐԸԸ
ԹԱՐԳՄԱՆՈՒԵՑԱԲ ԳԵՐՄԱՆԵՐԷՆԻ**



2016 թռականին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հեղինակած «The Armenian Church» (Հայ Եկեղեցին) անգլերէն հատորը, անցնող տարիներուն յաջորդաբար թարգմանուեցաւ արաբերէնի, պարսկերէնի, ռուսերէնի եւ ֆրանսերէնի. վերջերս նաեւ հրատարակուեցաւ անոր գերմաներէն թարգմանութիւնը՝ Paulinus-Verlag (Edition Cardo) հրատարակչական ընկերութեան կողմէ: Յայտենք, որ լայն տարածում գտած Նորին Ս. Օծութեան վերոնշեալ գիրքին յունարէն եւ չինարէն թարգմանութիւնները ընթացքի մէջ են:

**«ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ
ԸԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ ԱՏԱՆԱՅԻ»**



Օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Մաշտոցի Անուան Հին Զեռագրերու Մատենադարան ինստիտուտի գործակցութեամբ, Մայրավանքի տպարանէն լոյս տեսաւ «Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ Ատանայի» հատորը, խմբագրութեամբ Արմէն Մալխասեանի:

Ա. Մալխասեանի, Ա. Աստոյեանի, Ա. Աւետիսեանի, Ա. Ֆահրադեանի եւ Լ. Դաւթեանի աշխատասիրութեամբ պատրաստուած յիշեալ հատորը կ'ընդգրկէ 2 Մարտ 1905-էն 10 Ապրիլ 1915 ժամանակահատուածի Ատանայի Քաղաքական Ժողովի ատենագրութիւնները, որոնք բացառիկ փաստագիրներ են Ատանայի Հայոց թեմի առաջնորդութեան հովանիին ներքեւ ապրող բնակչութեան ազգային կեանքը արտացոլող եւ Ատանայի հայութեան ժողովրդավարութեան մակարդակի մասին վկայող: Գիրքը կը պարունակէ կրօնական ժողովի եւ Տնտեսական Խորհուրդի խառն նիստերու ատենագրութիւններէն:

Կաթողիկոսարանի «Կիլիկիա» Մատենադարանի տեսուչ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան ստորագրած է հատորին յառաջաբանը, որուն մէջ ան կը նշէ, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վարչական կարեւորագոյն շրջաններէն Ատանայի Հայոց Թեմի վերաբերող սոյն հատորը մեր ժողովուրդի անցեալ դարասկիզբի պատմութեան ուսումնասիրութեան վերաշխուժացում եւ ինքնաքննութեան նոր առիթ մըն է: Վեհափառ Հայրապետը, Հայոց Յեղասպանութեան 100 ամեակին առիթով վերարժեւորելով հաւաքական յիշողութեան վերաբերեալ աշխատասիրութիւնները, որոնք յուշամատենի տիպի տակ կը դառնան պատմական փաստ եւ նոր պատմութեան մշակման համար ատաղձ, տնօրինեց յուշամատեններու վերահրատարակութիւնը: Նոյն շրջագիծին մէջ տեղի ունեցան Կաթողիկոսարանի արխիւատան վերադասաւորում եւ անտիպ կարեւոր փաստաթուղթերու հրատարակութեան պատրաստութեան աշխատանքներ: Իսկ այս հատորը անդրանիկ պտուղն է վերոնշեալ աշխատանքներուն վերաբերող Հայ Եկեղեցւոյ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Հայաստանի Հանրապետութեան մշակութային մեծագոյն կեդրոններէն՝ Մաշտոցեան Մատենադարանին հետ կայացած փոխըմբռնման համաձայնութեան:

Ծաւալուն հատորի վերջաւորութեան կը գտնուին ծանօթագրութիւններ, ինչպէս նաեւ անձնանուններու, տեղանուններու, բանալի բառերու եւ օգտագործուած աղբիւրներու ցանկեր:

Ատանայի վերաբերող սոյն հատորը հրատարակուեցաւ «Փիւնիկ» Համահայկական Հիմնադրամի ազնիւ մեկենասութեամբ:

«ՄԱՇՏՈՑ»Ի ՉՈՐՐՈՐԴ ԳՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Օրհնութեամբ եւ հրամանաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքի տպարանէն լոյս տեսաւ Հայ Եկեղեցւոյ խորհրդակատարութեանց գիրքը (ծիսարան)՝ «Մաշտոց»ը, քննարկուած ու վերստին կարգաւորուած Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական Ժողովին կողմէ, համաձայն Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ սրբազան կանոններուն ու ականդրութեանց:



Շուրջ 400 էջերու մէջ գետեղուած են եկեղեցւոյ խորհրդակատարութեանց կանոնները՝ տաճար ընծայման, Ս. Մկրտութեան եւ Ս. Դրոշմի, Ս. Պսակի, թաղման, աղօրհնէքի, ջրօրհնէքի, նոր գործատեղի-բնակարանի, պատանի օրհնելու եւայլն...: Այս կանոններուն առընթեր նաեւ կը գտնենք այլ յատուկ կանոններ ու աղօթքներ (երաշտի, դիւահարներու եւ լուսնոտներու, ջրհոր օրհնելու, արտ, սերմնցու, արմտիք եւ հնձան օրհնելու, եկեղեցական զգեստ, սպաս, գիրք եւ սկիհ օրհնելու): Նկատառելի է յատկանշական երկու երեւոյթ.- ա) աղօթքներու ու շարականներու գրաբար բնագրի կողքին տեղադրուած է աշխարհաբար տարբերակը եւ բ) բոլոր շարականները ներկայացուած են եւրոպական նօթագրութեամբ:

Ստորեւ կը ներկայացնենք գիրքին սկզբնաւորութեան տեղադրուած Հայրապետական տնօրինման գիրքը.-

«Հոգեկան գոհունակութեամբ հրատարակութեան կը յանձնենք "ՄԱՇՏՈՅ"ի վերատեսեալ ներկայ օրինակը:


Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կրօնական Ժողովին կողմէ 1988 թուականին որոշ յապաւումներով ու վերադասաւորումով, ինչպէս նաեւ աշխարհաբարի թարգմանութեամբ հրատարակուած էր «ՄԱՇՏՈՅ»ը:

Անցնող տարիներու ընթացքին, մեր Ս. Աթոռի թեմերէն ներս Հայրապետական տնօրինումով գործադրութեան դրուեցաւ յիշեալ հրատարակութիւնը թէ՛ մեր հոգեւորականներուն եւ թէ՛ ժողովուրդին մօտ մեծապէս դրական արձագանգ գտնելով:

Նկատի ունենալով, որ 1988-ի հրատարակուած "ՄԱՇՏՈՅ"ը սպառած է, եւ միւս կողմէ, նկատի ունենալով յիշեալ թարգմանութեան մէջ նկատուած կարգ մը փոքր յստակացումները, Մեր թելադրութեամբ Կրօնական Ժողովը անհրաժեշտ յստակացումները եւ սրբագրութիւնները կատարեց: Այս առիթով Մեր բարձր գնահատանքը կը յայտնենք Կրօնական Ժողովի անդամներուն:

Ներկայ հատորին մէջ ներառուած են 2014-ին Ս. Էջմիածնի մէջ երկու Վեհափառ Հայրապետներու նախագահութեամբ եւ ներկայութեամբ գումարուած Եպիսկոպոսաց Ժողովին կողմէ լայնօրէն քննարկուած եւ Վեհափառ Հայրապետներուն կողմէ վաւերացուած Ս. Մկրտութեան եւ Ս. Դրոշմի կանոններու բնագիրները:

Այսու Հայրապետական գրով, կը հրահանգենք Կիլիկեան Ս. Աթոռի բոլոր թեմերուն մէջ Ս. Մկրտութեան եւ Ս. Դրոշմի խորհուրդներուն վերոյիշեալ վերակարգաւորեալ բնագիրներու գործածութիւնը:



Անհրաժեշտ է, որ մեր հոգևորականները յատուկ հոգա-
ծությւն ու նախանձախնդրությւն ցուցաբերեն խորհրդ-
դակատարութիւններու հետեւողական ու բժախնդիր կա-
տարման մէջ:

Վստահ ենք, որ բարեփոխեալ եւ վերադասաւորումի
ենթարկուած ներկայ հրատարակութիւնը՝ իր աշխար-
հաբար թարգմանութեամբ, առիթ պիտի ընծայէ մեր հա-
ւատացեալ ժողովուրդին մասնակից եւ հաղորդակից
դառնալու ընդհանրապէս մեր եկեղեցոյ ծէսին ու յատկա-
պէս խորհրդակատարութիւններուն, որոնք էական բաժի-
նը կը կազմեն եկեղեցոյ կեանքին ու առաքելութեան»:

2023-Ի ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՕՐԱՅՈՅՑ

*Օրհնութեամբ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ.
Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Կաթողիկոսարանի
տպարանէն լոյսին ընծայուեցաւ 2023 տարուան եկեղե-
ցական գրպանի օրացոյցը:*

*Եկեղեցական օրացոյցը կը բովանդակէ մեր եկեղեց-
ւոյ տօները եւ ամէնօրեայ հոգեպարար արարողութիւն-
ներու ընթացքին երգուելիք շարականները, Ս. Գիրքի
ընթերցողածները, սաղմոսներն ու աղօթքները եւ ծի-
սական այլ մանրամասնութիւններ:*

*Օրացոյցի սկզբնաւորութեան, Հայրապետական
պաշտօնական լուսանկարէն ետք, տեղադրուած են «Աղ-
բիւր կենաց» շարականը եւ «Կիլիկիա» մաղթերգը, հա-
մառօտագրութիւններ ու ծանօթագրութիւններ, Ս.
Պսակի խորհրդակատարութեան համար արգիլուած
օրերը եւ եկեղեցական տօներու ցանկերը:*

*Օրացոյցի աւարտին, «Մաղթերգ Հայրապետակա-
ն»էն ետք, գետեղուած են Մեծի Տանն Կիլիկիոյ Կա-
թողիկոսութեան ուխտեալ Միաբանութեան եւ Դպրե-
վանքի ուսանողութեան անուանացանկերը, թեմերը ու
անոնց հասցեակապերը, Կաթողիկոսարանի վարչական
կառոյցին մաս կազմող մարմիններու պատկերը, Դպրե-
վանքի ուսուցչական կազմին եւ Կաթողիկոսարանի ու
Դպրեվանքի պաշտօնէութեան անուանացանկը:*

*Նշենք, որ եկեղեցական օրացոյցը պատրաստեց՝
Հոգշ. Տ. Պսակ Վրդ. Թէփիրճեան:*

*Քաջալերելի է, որ իւրաքանչիւր հայ ընտանիք ու-
նենայ այս օրացոյցը, իբրեւ ուղեցոյց իր հոգեւոր կեան-
քին:*

ԺՈՂՈՎԱԿԱՆ ԿԵԱՆՔ

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

7-9 Դեկտեմբեր 2022

Անթիլիաս

Չորեքշաբթի, 7 Դեկտեմբերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին պաշտօնական բացումով, Անթիլիասի Մայրավանքի Վեհարանին մէջ ընթացք առաւ Ազգային Ընդհանուր Ժողովը:

Չորս տարին անգամ մը գումարուող Ազգային Ընդհանուր Ժողովին կը մասնակցին թեմակալ առաջնորդներ եւ թեմերէն եկած պատգամաւորներ, որպէսզի կատարեն նախորդ շրջանի գործունէութեան արժեւորումը ու ճշդէն յաջորդ շրջանի առաջնահերթութիւնները՝ միշտ ի մտի ունենալով Կաթողիկոսութեան առաքելութեան առաւել ծաւալումն ու ծաղկումը:

Այս տարի, Ազգային Ընդհանուր Ժողովին մասնակցեցան շուրջ 125 պատգամաւորներ՝ ներառեալ Միաբանութեան կողմէ մասնակից պատգամաւորները:

Նորին Ս. Օծութիւնը, Հայրապետական օրհնութեամբ ողջունելէ ետք ժողովը, ներկաներուն յայտնեց, որ մեր ժողովուրդի պատմութեան վճռորոշ հանգրուանին գումարուող այս ժողովը կոչուած է այնպիսի որոշումներ առնելու եւ աշխատանքի ուղղութիւններ ճշդելու, որոնք մեր Ս. Աթոռին համազգային առաքելութեան նոր ծաւալ ու շեշտ պիտի տան: Ապա, ան առաջարկեց պատգամաւորներու երիցագոյն ու կրտսերագոյն անդամներէ կազմըլած առժամեայ դիւանի նշանակում, որուն յաջորդեց մնայուն դիւանի ընտրութիւնը:

Վաչէ Նաճարեան (Լիբանանի թեմ) ու Արա Շահվերտեան (Թեհրանի թեմ), համա-ատենապետներ ընտրուեցան եւ դուկտ. Հուրի Ազէզեան (Բերիոյ թեմ) ու Էլիզապէթ Պոյաճեան (Արեւմտեան թեմ, Միացեալ Նահանգներ) համա-ատենադպիրներ: Դիւանը, իր կարգին, հետեւելով օրակարգի ընթացքին, հետեւեալ յանձնախումբերը ընտրեց.- Լիազօրագրերու Յանձնախումբ (Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան (Յունաստանի թեմ), Վահան Այնէճեան (Կիպրոսի թեմ), Քեռի Սարգիսեան (Քուէյթի թեմ)), Բանաձեւի Յանձնախումբ (Գերշ. Տ. Գրիգոր Արք. Զիֆթճեան (Ատրպատականի թեմ), Գերշ. Տ.

Թորգոմ Եպո. Տօնոյեան (Արեւմտեան թեմ, Միացեալ Նահանգներ), Ջարմայր Սեղրակեան (Արեւելեան թեմ, Միացեալ Նահանգներ), Նորայր Արամեան (Թեհրանի թեմ), Շահան Գանտազարեան (Լիբանանի թեմ), Ընտրական Յանձնախումբ (Գերշ. Տ. Մեսրոպ Եպո. Սարգիսեան (Ա.Մ. Է. թեմ), Վիզէն Աւագեան (Լիբանանի թեմ), Յարութիւն Հայրապետեան (Բերիոյ թեմ), Ծովիկ Թէրզեան (Գանատայի թեմ), Նոէլ Մինասեան (Սպահանի թեմ), Հաշուէքննիչ Յանձնախումբ (Մարկոս Սնապեան, Արա Հացագործեան եւ Յակոբ Քէշիշեան):

Ապա, Վեհափառ Հայրապետը փոխանցեց հետեւեալ պատգամը.–

Քրիստոնէական ջերմ սիրով, ազգային վառ ապրումներով եւ հայրապետական օրհնութեամբ կ’ողջունենք Ազգ. Ընդհանուր Ժողովը: Որպէս մեր ժողովուրդի ներկայացուցիչներ, եկած էք Անթիլիասի Մայրավանք՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կեդրոնատեղին, քննարկումը եւ արժեւորումը կատարելու վերջին հինգ տարիներու Կաթողիկոսութեան առաքելութեան: Արդարեւ, հակառակ մեզ շրջապատող դժուար պայմաններուն, մեր Ս. Աթոռին հաւատքի առաքելութիւնը՝ ազգային ծառայութեամբ թրծուած, եղաւ առաւելագոյն չափով համապարփակ ու թափանցիկ. եղաւ ծրագրուած ու համահունչ՝ մեր ժողովուրդի կարիքներուն, սպասումներուն ու իտեւներուն: Արդ, այս հայեցակէտով ու չափանիշերով հարկ է արժեւորել Ազգ. Կեդրոնական Վարչութեան Կրօնական եւ Քաղաքական Ժողովներու տեղեկագիրները:

Անցնող շրջանը եղաւ տագնապալից, բառին ամբողջական առումով: Տագնապալից՝ ողջ մարդկութեան համար, համաճարակին ստեղծած ծանր պայմաններուն հետեւանքով: Տագնապալից՝ մեր ժողովուրդին համար, Արցախի պատերազմի մեծ թիւով զոհերուն ու պատճառած ահաւոր քանդումներուն հետեւանքով: Վերջապէս, տագնապալից՝ յատկապէս Լիբանանի հայութեան համար, Պէյրութի նաւահանգիստին պայթումին եւ ընկերատնտեսական վիճակի վատթարացման հետեւանքով: Բոլորս, առաւել կամ նուազ չափով, ապրեցանք յիշեալ տագնապները մեր ամէնօրեայ կեանքին մէջ: Երբ յետադարձ ակնարկով նայինք մեր ապրած մոայլ տարիներուն, կրնանք միայն ըսել՝ «Փա՛նք քեզ, Աստուած, փա՛նք քեզ. յաղագս ամենայնի, Տէր, փառք քեզ»: Փա՛նք քեզ Աստուած, որ հակառակ մեզ շրջապատող բազմազան ու այլազան դժուարութիւններուն, մեզ հեռու պահեցիր ամէն տեսակ չարիքներէ: Փա՛նք քեզ Աստուած, որ եկեղեցւոյ, ժողովուրդին ու հայրենիքին ծառայելու մեր հաւատքը աւելի կոանցցիր ու նուիրումը աւելի ամրացուցիր: Անոնք, որոնք մեր հաւատքական առաքելութեան ու ծառայութեան ճանապարհին վրայ հեռացան այս երկրաւոր կեանքէն, թող Աստուած իրենց հոգիները ընդունի երկնքի արքայութեան մէջ:

Ազգ. Կեդրոնական Վարչութեան տեղեկագիրները ամփոփ սակայն ամբողջական կերպով կը ներկայացնեն անցնող շրջանի Կաթողիկոսութեան առաքելութիւնը իր գլխաւոր բնագաւառներով ու յատկանշական երեսներով: Այս գծով կ'ուզենք հետեւեալ յիշեցումը կատարել. – Առաջին, մեր եկեղեցին, ինչպէս յաճախ կարեւորութեամբ շեշտած ենք, ազգային եկեղեցի է, եւ հետեւաբար, մեր եկեղեցւոյ կեանքին, առաքելութեան ու ծառայութեան մէջ հոգեւորին ու ազգայինին միջեւ բաժանման գիծեր չեն կրնար գոյութիւն ունենալ. անոնք գիրար կ'ամբողջացնեն ու կը հարստացնեն մէկ ու անբաժանելի ամբողջութեան ծիրէն ներս: Այսպէ՛ս հարկ է մօտենալ ձեր տրամադրութեան տակ գտնուող տեղեկագիրներուն, ուր ակներեւ են յաճախ նոյն մարզին առնչուած երկու ժողովական մարմիններու կատարած լրացուցիչ աշխատանքները: Երկրորդ, Կաթողիկոսութեան առաքելութիւնը՝ Ազգ. Կեդրոնական Վարչութեան ու յարակից մարմիններուն կողմէ կատարուած, պէտք է պարփակուի Կաթողիկոսարանի սահմաններուն մէջ, այլ անհրաժեշտ է որ ան գործնապէս թարգմանուի թեմերէն ներս՝ իւրաքանչիւր թեմի ներքին դրրուածքին ու իւրայատուկ միջավայրին համաձայն: Այս պրիսմակէն հարկ է արժեւորել Կաթողիկոսութեան առաքելութիւնը:

Ազգ. Ընդհանուր Ժողովին օրակարգը կը բաղկանայ երկու գլխաւոր բաժիններէ. կատարուած առաքելութեան քննարկում ու գնահատում, եւ կատարուելիք առաքելութեան էական ու առաջնահերթ մարզերու նշում: Մեր սպասումն է, որ ձեր մօտեցումը ըլլայ իրատես ու համապարփակ՝ մեկնելով մեր ժողովուրդի կեանքի ներկայ պայմաններէն: Մեր սպասումն է նաեւ, որ ձեր քննարկումը իր մղումը ստանայ մեր ժողովուրդին կողմէ այս Ս. Աթոռին վստահուած համազգային առաքելութեան նոր շեշտաւորում ու քառազայթում տալու յանձնարարութենէն:

Վերջին տարիներուն, մեր դիմագրաւած տագնապները կը շարունակուին աննահանջ կերպով: Անորոշութիւնը, յուսախարութիւնը, յուսահատութիւնը ու անտարբերութիւնը իրենց աննախատեսելի հետեւանքներով շրջապատած են մեր կեանքը՝ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի մէջ: Արդ, կ'ուզենք Ազգ. Ընդհանուր Ժողովին ամփոփ գիծերով Մեր տեսակէտը պարզել հայ կեանքը յուզող հիմնահարցերու մասին, ինչպէս նաեւ իրապաշտ ոգիով ու յառաջատեսիլ մօտեցումով Մեր պատկերացումը ներկայացնել այն գլխաւոր բնագաւառներուն, որոնք հարկ է դառնան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան յառաջիկայ շրջանի առաքելութեան առաջնահերթութիւնները. –

– ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ դարձած է անյետաձգելի հրամայական: Հետեւաբար, հարկ է որ Հայ եկեղեցւոյ բարեկարգչական

գործընթացը նոր մղում ու ծաւալ ստանայ յատկապէս՝ երիտասարդ հոգեւոր մշակներու կազմաւորումով, ծէսին բարեկարգումով, ընկերա- յին ծառայութեան ծաւալումով ու դաստիարակչական դերին վերաշ- խուծացումով: Մեր համոզումով ու Նուիրապետական չորս Աթոռներու սերտ գործակցութեամբ 2014-ին սկսուած, սակայն ներ-Հայաստանեան պայմաններու պարտադրանքով կանգ առած, բարեկարգչական աշխա- տանքը անհրաժեշտ է որ աւելի կազմակերպ ու հետեւողական կերպով շարունակուի: Մինչ այդ, մեր Ս. Աթոռի կրօնական ժողովին առաջնոր- դութեամբ եւ մեր թեմերուն գործօն մասնակցութեամբ հարկ է որ հան- գրուանային կերպով Հայ եկեղեցւոյ բարեկարգութեան առնչուած ծրա- գիրներ մշակուին ու աշխատանքներ կատարուին՝ մեր ողջ եկեղեցւոյ վերանորոգման նպաստելու հեռանկարով:

– ՄԱՐԴՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ՝ Դպրեվանքի ու Քահանայից Պատրաստութեան Դասընթացի, ինչպէս նաեւ Կաթողիկոսարանի Հա- յագիտական ու Մանկավարժական Կեդրոններու մամբով, անհրաժեշտ է որ առանցքային տեղ գրաւէ մեր Ս. Աթոռի առաքելութեան մէջ: Ճիշդ է, հակառակ աննպաստ պայմաններուն, յիշեալ կեդրոնները շարունակե- ցին գործել անցնող տարիներուն՝ գնահատելի արդիւնքներով: Սակայն, նկատի ունենալով մէկ կողմէ՝ Կաթողիկոսարանին հետզհետէ ընդար- ձակուող գործունէութիւնը, եւ միւս կողմէ՝ մեր ժողովուրդին ու յատ- կապէս Սփիւռքին ծաւալող կարիքները, մարդուժի կազմաւորումը մեր կեանքի հոգեւոր, կրթական ու մշակութային մարզերէն ներս պէտք է առաջնահերթ տեղ գրաւէ Կաթողիկոսութեան առաքելութեան մէջ:

– ԱՐԺԷՔՆԵՐՈՒ ՎԵՐԱՇԵՇՏՈՒՄԸ աւելի քան հրամայական է այսօր՝ համաշխարհայնացումի ապահայացնող մշակոյթին ենթակայ մեր ժողո- վուրդի կեանքին մէջ: Ազգ մը արժէքներով իր ինքնութիւնը կը պահէ եւ իր գոյութիւնը կ'ամրացնէ: Վկայ՝ դարաւոր պատմութիւնը մեր «փոքր ածուին»: Այսօր հայ կեանքէն ներս մեր բարոյական, հոգեւոր, մշակու- թային ու ազգային արժէքները փաստօրէն սկսած են դառնալ լուսանց- քային՝ նոյնիսկ հայրենի հողին վրայ. նաեւ ու մա՛նաւանդ մեր արժե- չափերը սկսած են փոխուիլ: Այս վտանգալից կացութիւնը շրջելը կ'են- թադրէ երկարաշունչ, ծրագրեալ ու հաւաքական պայքար, որուն մաս- նակից պէտք է դառնան Հայաստանի պետութիւնը, եկեղեցին, հայ դպրո- ցը, մեր մտաւորականութիւնը ու կառոյցները: Այս համազգային պայ- քարին կորիզը ու յառաջապահը կոչուած է ըլլալ դարեր շարունակ մեր ժողովուրդին համար փոքր եկեղեցի, փոքր դպրոց ու փոքր հայրենիք դարձած հայ ընտանիքը:

– ՍՓԻԻՌԻՎԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ այլևս դարձած է գոյութեանական խնդիր: Այս մասին արտայայտուած տեսակետերը, ստորագրուած յօդուածները եւ կատարուած ուսումնասիրութիւնները, յատկապէս վերջին տարիներուն, իրենց պարզած տագնապներով ու մատնանշած մարտահրաւերներով, պերճախօս վկայութիւններ են: Մեր գաղութներէն ներս ինքնութեան, լեզուի ու մշակոյթի առնչուած մտահոգութիւնները, փաստօրէն, սկսած են դառնալ տիրական. օտարին օտարացնող ներկայութիւնը՝ բնական. մեր հաւաքական կեանքէն երիտասարդութեան հետզհետէ հեռացումը՝ ակնհայտ. կառոյցներու ինքնամաշումը՝ բացայայտ, եւ անտարբերութեան համաճարակը՝ համատարած: Յիշեալ մտահոգիչ երեւոյթները, արմատական փոփոխութեան ենթակա աշխարհին եւ բազմացեղ, բազմակրօն ու բազմամշակոյթ ընկերութիւններուն մէջ ապրող Սփիւռքը կրնան առաջնորդել դէպի արագ գունաթափում, հակառակ մեր եկեղեցւոյ ու կառոյցներուն կողմէ մղուող ամէնօրեայ գոյապայքարին: Հետեւաբար, անհրաժեշտ է որ այս դաժան պայմաններուն մէջ ապրող գաղութներէն ներս, բոլոր կառոյցներու գործօն մասնակցութեամբ, ներ-գաղութային եւ միջ-գաղութային գործակցութիւն զարգացնենք ու համա-սփիւռքեան մտածողութիւնն ձեւաւորենք, ինչպէս նաեւ մեր թեմերը, համայնքները ու կառոյցները մղենք վերակազմակերպումի ու վերակենսաւորումի՝ ծրագրուած գործընթացի մը ճշդումով: Այս ուղղութեամբ արդէն ուղեգիծ մը փոխանցած ենք մեր թեմերուն:

– ԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ ՍՈՒՐԻՆՅՑ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ՊԷՏՔ Է ՄՆԱՅ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹԻՒՆ: Արտաքին պայմանները յաճախ մեր գաղութները մատնած են տնտեսական լուրջ դժուարութիւններու, սակայն կրցած ենք համազգային ճիգով զանոնք առաջնորդել դէպի վերականգնում: Այսօր տնտեսական ծանր տագնապ կ'ապրին Լիբանանի եւ Սուրիոյ մեր համայնքները: Անցնող տարիներուն Կաթողիկոսարանի նախաձեռնութեամբ ու համահայկական մաշտապով նիւթական աջակցութիւն կատարուեցաւ յիշեալ գաղութներուն: Ջերմ շնորհակալութիւն ու գնահատանք բոլորին: Քաջ գիտենք, որ մեր բոլոր գաղութները, առաւել կամ նուազ չափով, տնտեսական մտահոգութիւններ ունին: Սակայն Լիբանանի եւ Սուրիոյ մեր համայնքներուն դիմագրաւած տնտեսական դժուարութիւնները բազմազան են ու ամէնօրեայ: Տակաւին չենք ուզեր անդրադառնալ Կաթողիկոսարանի տրուած տեսական դժուար պայմաններուն, որպէս հետեւանք Լիբանանէն ներս ստեղծուած ընկերա-տնտեսական տագնապին: Կ'ուզենք կարեւորութեամբ ընդգծել, թէ հակառակ մեզ շրջապատող տագնապալից պայման-

ներուն, Միջին Արեւելքի մեր գաղութներուն կազմակերպ պահպանումը կենսական է՝ ի խնդիր Հայաստանի ու Արցախի հզօրացման, մեր ազգին պահանջատիրութեան հետապնդման ու գերագոյն իտեւներու իրականացման: Զմոռնանք Առաքելին խօսքը՝ «Եթէ մարմինին մէկ անդամը ցաւի՝ բոլոր անդամներն ալ միասին կը ցաւին» (Ա. Կր 12.26): Այս նախանձախնդրութեամբ մեր գօրակցութիւնը գործնապէս պէտք է շարունակենք Լիբանանի եւ Սուրիոյ մեր գաղութներուն նկատմամբ:

– ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ԱՐՑԱԽԻ ՀԶՕՐԱՑՄԱՆ մասնակցութիւնը՝ տնտեսական ներդրումներու, մարդասիրական օժանդակութիւններու եւ քաղաքական աշխատանքներու մամբով, միշտ մնաց առաջնահերթութիւն մեր Ս. Աթոռին, թեմերուն եւ յարակից կառոյցներուն համար: Հետեւաբար, չենք կրնար անտարբեր մնալ Հայաստանի եւ Արցախի պարզած ներկայ տիրուր ու անորոշ վիճակին նկատմամբ: Հայաստանի վերանկախացումէն յետոյ պարտութիւն կրած թշնամին ինքզինք վերականգնեց ու վերակազմակերպեց. մինչ յաղթանակ տարած Հայաստանը ինքզինք տկարացուց փտածութեամբ ու արտագաղթով: Իսկ Արցախի վերջին պատերազմը ու անոր յաջորդող զարգացումները Հայաստանը ու Արցախը դրին վնասորոշ անկիւնադարձի դիմաց:

Հարկ է ըլլալ իրատես: Ներկայ աշխարհաբառակազմակերպ պայմանները նպաստաւոր չեն մեզի համար. բարեկամներ չունինք. առանձին ենք: Մեր հզօրութեան աղբիւրը մեր միասնականութիւնն է: Հայաստանն ու Արցախը յուզող հիմնահարցերուն նկատմամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, եւ անձնապէս Մեր տեսակէտը երբեք չէ եղած պարագայական կամ լարծուն, այլ յստակ՝ մեկնելով մեր հայրենիքի ու ժողովուրդի ընդհանրական ու գերագոյն շահերէն: Նոյնն է պարագան նաեւ այսօր: Հայաստանը ու Արցախը չեն կրնար գոհը դառնալ շրջանէն ներս, այսպէս կոչուած համապարփակ ու մնայուն խաղաղութիւն հաստատելու շրջանային թէ միջազգային ոյժերու ծրագրին: Արցախի ինքնորոշման իրաւունքը Արցախի ժողովուրդին կողմէ հաստատուած եւ բազմիցս վերաշեշտուած, եւ համահունչ միջազգային օրէնքին, անսակարկելի իրողութիւն է. նոյնպէս նաեւ՝ Հայաստանի ամբողջականութիւնը, անկախութիւնը եւ անվտանգութիւնը:

Պատկանելի Ազգ. Ընդհանուր Ժողովին եւ մեր սիրելի ժողովուրդին դիմաց կանգնած բարձրագոյն աստիճանի կարեւորութեամբ կը յայտարարենք թէ՛ հայ ժողովուրդին համար Արցախի պատերազմը չէ վերջացած, ան կը շարունակուի, պէտք է շարունակուի, գօրաշարժի ենթարկելով մեր ազգը, վերակազմակերպելով հայոց բանակը ու համախմբելով մեր ողջ ներոյժն ու մարդոյժը՝ ի խնդիր Հայաստանի ու Արցախի

փրկութեան: Արդ, հաւաքական ա՛յս տեսլականով ու յանձնառութեամբ համահայկական հաւաքի մը շուտափոյթ կազմակերպումը՝ վնասկան որոշումներ կայացնելու ու գործնական ֆայլերու դիմելու, անյետաճգելի ու անվիճելի պահանջ է: Այլապէս, շրջանի ոյժերուն ուսումնական ծրագիրներուն ու շահերուն ենթակայ դառնալով, Հայաստանն ու Արցախը կրնան հիւժիլ՝ վտանգելով իրենց ամբողջականութիւնը եւ նո՛յնիսկ անկախ գոյութիւնը: Հարկ է ժամանակներու նշանները ճիշդ կարդալ եւ ճիշդ կողմնորոշուիլ:

Մեր պատգամը կ'ուզենք եզրափակել Առաքելալից հետեւեալ յիշեցումով. «Նեղութիւնները մեզի համբերութիւն կու տան, համբերութիւնը՝ տոկունութիւն, տոկունութիւնը՝ յոյս, իսկ յոյսը երբեք ամօթով չի ձգեր» (Հո 5.3-5): Յոյսը կրաւորական հոգեվիճակ մը չէ. ան կ'ենթադրէ տոկուն հաւատք, ամուր վնասկամութիւն եւ ամբողջական յանձնառութիւն: Մեր հաւատքը, վնասկամութիւնը եւ յանձնառութիւնը իրարու հետ սերտօրէն ընդելուզած՝ Աստուծոյ օրհնութեամբ ու առաջնորդութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը պիտի շարունակէ իր համագգային առաքելութիւնը՝ մեր ժողովուրդին հոգեւոր կարիքներուն ընդառաջումը, արժէքներուն պահպանումը, Հայաստանին ու Արցախին հզօրացումը եւ մեր ազգին իտեալներուն կենսագործումը ունենալով որպէս իր կեանքի նամբան ու նպատակը:

**ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ
ՔԱՌԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Նոյն օրը, տեսերիզի ճամբով, ներկայացուեցան յաջորդող նիստերուն շուրջ Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական ու Քաղաքական Ժողովներու 400 էջնոց տեղեկագիրները, ապա, տեղի ունեցան քննարկումներ: Իր կարգին, Վեհափառ Հայրապետը անհրաժեշտ լուսաբանութիւններ տուաւ ու արժեւորումներ կատարեց:

Կրօնական ժողովին տեղեկագիրը անդրադարձաւ ծանր պայմաններու տակ իրականացած աշխատանքներուն եւ յառաջացած մարտահրաւէրներուն: Այս գծով մանրամասնօրէն ներկայացուեցան՝ Դպրեվանքի գործունէութիւնը, քրիստոնէական դաստիարակութեան առնչուած աշխատանքները, եկեղեցի-ժողովուրդ յարաբերութեան ծաւալման վերաբերեալ ծրագիրները, կրօնական հրատարակութիւնները, երիտասարդական բաժանմունքին եւ ուսանողական միութեան կացութիւնն ու ակնկալութիւնները, քահանայից պատրաստութեան կրթական ծրագիրը, Կաթողիկոսարանին հովանիին տակ գործող ընկերային ու մարդասիրական կառույցներուն իրավի-

ճակները եւ թեմերուն մէջ կատարուած ընկերային ծառայութեան աշխատանքները, հայ եկեղեցւոյ բարեկարգութեան կապուած ջանքերը, Միջեկեղեցական եւ միջ-կրօնական մարզերէն ներս կատարուած հսկայ աշխատանքը՝ թէ՛ շրջանային եւ թէ՛ միջազգային մակարդակներու վրայ:

Քաղաքական ժողովին տեղեկագիրը եւս մանրամասնօրէն անդրադարձաւ անցնող քառամեակի ձեռքբերումներուն եւ մարտահրաւէրներուն՝ դիտել տալով, որ շրջանը լեցուն էր յաջողական ահաւոր տազնապներով: Այս գծով ներկայացուեցան Հայրապետին կատարած հովուապետական այցելութիւնները, Կաթողիկոսարան-Թեմ եւ Կաթողիկոսութիւն-Նուիրապետական Աթոռներ համագործակցութեան դաշտերը, Հայաստանի եւ Արցախի իշխանութիւններուն հետ յարաբերութիւնները, հայ ժողովուրդի իրաւունքներու հետապնդման գծով կատարուած աշխատանքները, մշակութային ձեռնարկներն ու համագումարները:

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ՅԱՏՈՒԿ ՆԻՒԹԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄՈՎ ՇԱՐՈՒՆԱԿԵՑ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ազգային Ընդհանուր Ժողովը իր եռօրեայ աշխատանքներուն երկրորդ օրը եւ երրորդ օրուան առաջին նիստը տրամադրեց Սփիւռքի վերակազմաւորման առնչուած հրատապ նիւթերու: Այս գծով արծարծուեցան հետեւեալ նիւթերը.— ընտանիք, հայակերտում, երիտասարդութիւն, Հայաստանի եւ Արցախի հզօրացման մասնակցութիւն եւ Սփիւռքի վերակազմակերպում: Իւրաքանչիւր նիստի աւարտին կատարուեցան լայն քննարկումներ եւ ներկայացուեցան առաջարկներ, որոնք ուղեգիծ պիտի ըլլան 2023 տարուան Սփիւռքի վերակազմակերպման նուիրուած Վեհափառ Հայրապետին հուշակագիրին, ինչպէս նաեւ որդեգրուին նորընտիր Ազգային Կեդրոնական Վարչութեան յառաջիկայ քառամեայ գործունէութեան մէջ:

Ա. Նիստ՝ «Հայ Ընտանիքը՝ Առանցքը Հայու Գոյութեան»

Թեհրանի թեմէն Արմինէ Սայիթխանեանն ու Հիւսիսային Ամերիկայի արեւմտեան թեմէն Պերճ Աբգարեանը հակիրճ կերպով ներկայացուցին նիւթը: Անոնք լուսարձակի տակ առին հայեցի դաստիարակութեան մէջ ծնողներու դերակատարութիւնը ներկայ մարտահրաւէրներու ներքոյ ու խօսեցան ձուլման վտանգին մասին: Քննարկման նիստին, ժողովականները կարեւորեցին նոր սերունդին կենցաղին ու հետաքրքրութիւններուն մասին յստակ տուեալներ ունենալը, աւանդութիւններու պահպանումը, քրիստոնէական դաստիարակութեան ջամբումը, ինչպէս նաեւ՝ ներկայ աշխարհին ընկերաքաղաքական նորութիւններուն լոյսին տակ հայօրէն ապրելու անհրաժեշտութիւնը:

Եզրափակելով նիստը, Վեհափառ Հայրապետը ըսաւ, որ «Հարկ է իրա-

պաշտ մօտեցում ունենալ, խուսափիլ ծայրայեղութիւններէ եւ հայ ընտանիքը դիտել ներկայ համաշխարհայնացած աշխարհի շրջագիծէն ներս. կարելի չէ արժէքներ պարտադրել, ոչ ալ կարելի է հեռանալ մեր սկզբունքներէն»: Այս գծով, Նորին Ս. Օծութիւնը նշեց եկեղեցւոյ առանցքային դերակատարութիւնը, ի մասնաւորի հոգեւորականին ճամբով, եւ ընդգծեց եկեղեցին ժողովուրդին տանելու առաջնակարգ դերը՝ ծիսական ու վարչական պարտականութիւններէ անդին: «Մեր եկեղեցին, իր հոգեւորականներուն մամբով, ըսելիք ու ընելիք ունի անպայմանօրէն: Սփիւռքի վերակազմակերպումը եկեղեցւոյ վերակազմակերպումէն կը սկսի», ընդգծեց ան:

Բ. Նիստ՝ «Հայակերտում՝ Երաշխիքը Հայու Ինքնութեան»

Գանատայի թեմէն Համբիկ Գարայեան եւ Լիբանանի թեմէն Վիգէն Աւագեան ներկայացուցին Հայակերտման առնչուած իրենց զեկոյցները: Մտաւր վէրքին վրայ դնելով, անոնք խիստ կարեւորեցին առաջին հերթին Հայ ընտանիքին դերը, ապա եկեղեցւոյ եւ դպրոցներուն դերերը Հայապահպանման աշխատանքին մէջ: Այս նիւթի քննարկման ընթացքին անդրադարձ կատարուեցան Սփիւռքահայու բազմաչերտ ինքնութեան, Սփիւռքի պայմաններուն մէջ Հայկական կառոյցներուն պետութեան մը պարտականութիւնը կատարելու փորձերուն, համաճարակի պատճառով ժողովուրդին ապրած խզումներուն եւ դէպի հաւաքականութիւն վերադառնալու դժուարութիւններուն:

Աւարտին, Նորին Սրբութիւնը դիտել տուաւ, որ «Կ'ապրինք անցանկապատ, բազմակրօն ու բազմամշակոյթ, բազմացեղ ընկերութիւններու մէջ եւ համացանցի մամբով կը հասնինք ամենուրեք: Հետեւաբար, այս տեսանկիւնէն պէտք է դիտել հայակերտումը, որ առնչուած է ինքնութեան, իսկ ինքնութեան կազմաւորումը կը կարօտի ինքնաճանաչման: Հարկ է գգոյշ ըլլալ հաւաքական (կոյնայ) ինքնութիւն եւ հայու ինքնութիւն հասկացողութեան սխալ կիրառումէն. անոնց միջեւ կարելոր է փոխ կապակցութեան գոյութիւնը, սակայն մէկը միւսը չի փոխարիներ, որովհետեւ չենք կրնար կոպալ հայ ըլլալ՝ հեռու մեր ազգային ինքնութենէն, ինչպէս նաեւ չենք կրնար համահունչ չըլլալ ներկայ աշխարհին հետ»: Իր խօսքի աւարտին, Վեհափառ Հայրապետ անդրադարձաւ Սփիւռքի մէջ Հայ ըլլալու ու Հայ մնալու եւ ամէնօրեայ պայքար մղելու իրողութիւնը:

Գ. Նիստ՝ «Երիտասարդութիւնը՝ Աւիշը Հիայ Կեանքին»

Այս նիստի զեկուցաբերներն էին Հայ Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողական Միութենէն (Հ.Ե.Հ.Ո.Մ.) Կալի Աւագեանն ու Զաւարեան Ուսանողական Միութենէն (Զ.Ո.Մ.) Ժաք Քէչէճեանը: Անոնք ներկայացուցին Հայ երիտասարդը յուզող հարցերն ու անոնց հայկական կառոյցներէն հեռանալուն դրդապատճառները: Երկու երիտասարդ ուսանողները, իրենց զեկոյցներուն մէջ մէջբերելով Վեհափառ Հայրապետին «Երիտասարդութիւնը մեր ապագան չէ, այլ՝ մեր ներկան» խօսքը, անդրադարձան հոգեբանական, ընկերատնտեսական, ազգային եւ կառուցային հարցերու, որոնք Հայ երիտասարդը հեռու կը պահեն համայնքային կեանքէն:

Քննարկման նիստին յաջորդեց Նորին Սրբութեան եզրափակիչ խօսքը, ուր նշեց՝ «Երիտասարդութիւնը յուզող հարցերուն հարկ է մօտենալ դրական եւ լաւատես մօտեցումներով ու ցիշոյ ախտաբանաչափ կատարելով: Երիտասարդութիւնը միայն տարիքային հանգրուան մը չէ, այլ գործելակերպի, մտածելակերպի, կենցաղակերպի ու հարցերու մօտեցման կերպ է, ինչպէս նաեւ կադապարուած մտածումներէ դուրս գալ է: Հարկ է երկխօսութիւն հաստատել հիմնի եւ նորին միջեւ, որովհետեւ այնպէս, ինչպէս երիտասարդները սորվելիք ունին երեցներէն, երեցներն ալ սորվելիք ունին երիտասարդներէն, եւ այս կ'իրականանայ փոխադարձ վստահութեամբ ու հասկացողութեամբ: Հայրապետը նշեց, որ անցեալի երիտասարդութեան կազմաւորման հիմնական առանցքը ազատ, անկախ ու միացեալ Հայաստանի տեսլականն էր, իսկ ներկայիս Հայ Դատը այլ հանգրուան մը թեւակոխած է. հարկ է մտածել նաեւ այս ուղղութեամբ: Վերջապէս, Նորին Ս. Օծութիւնը անդրադարձաւ առցանց համայնք (Cyber Community) յառաջացնելու հրամայական կարեւորութեան՝ երիտասարդներ համախմբելու հեռանկարով ու տեսլականով:

Դ. Նիստ՝ «Սփիւռքը՝ Մասնակից Հայաստանի Ու Արցախի Հզօրացման»

Այս նիստով հանդէս եկան Լիբանանի թեմէն երեսփոխան Յակոբ Բագրատունի եւ Թեհրանի թեմէն Նոէլ Մինասեան, որոնք շեշտեցին, որ թէկուզ մեր հայրենիքը միշտ մասնատուած եւ այլոց տիրապետութեան տակ եղած է, բայց ասով հանդերձ շարունակած ենք ապրիլ եւ գոյատեւել: Խօսելով նորանկախ Հայաստանի եւ ազատագրուած Արցախի գոյատեւման գործընթացին մէջ սփիւռքահայոց ներդրումին մասին, անոնք նշեցին, որ սփիւռքահայը ինքզինք չի կրնար մեկուսացնել հայրենիքի հարցերէն: Իսկ ինչ կը վերաբերի հայրենիքի պարզած ներկայ ընկերաքաղաքական կացութեան, զեկուցաբերները մանրամասնօրէն անդրադարձան մարտահրաւէրներու կարեւորագոյններուն եւ հանդէս եկան հայութեան հզօրացման ու միասնականութեան նպաստող առաջարկներով:

Քննարկման նիստի ավարտին, Նորին Ս. Օծուծիւնը դիտել տուաւ Հայաստան-Սփիւռք յարաբերութեան եւ Սփիւռք-Հայաստան յարաբերութեան հասկացողութեան նրբութիւնները՝ նշելով, որ յիշեալ յարաբերութիւնը ունեցաւ վերիվայրումներ: «Ազատ, անկախ Հայաստանի իրականացումը դաշտ բացաւ յարաբերութեան մը՝ հիմնուած օժանդակութիւններով, որմէ ետք ունեցանք այլ գործելադաշտ (օրինակ համահայկական հոշակագիր), ուր մանաւանդ Հայ Դատի մարմինը ունեցաւ իր ներդրումը», ըսաւ Հայրապետը եւ նշեց երեք հիմնական մարտահրաւէրներ. «ա) Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութիւնը գոյութիւն չունի եւ Հայաստանը ունի քաղաքական տարբեր մօտեցում, բ) Հայաստանի մէջ բեւեռացումներ գոյութիւն ունին, որոնք մերթ րնդ մերթ կը թափանցեն Սփիւռքի մէջ՝ ազդելով ներգաղութային եւ միջգաղութային յարաբերութիւններուն վրայ, գ) Հայաստանի մօտեցումը Սփիւռքի նկատմամբ անընդունելի եւ վտանգաւոր է»: Ապա, Նորին Ս. Օծուծիւնը յայտնեց, որ հարկ է յստակ տարբերութիւն դնել պետութեան եւ իշխանութեան միջեւ՝ աւելցնելով, որ անհրաժեշտ է առաւելագոյն չափով համախմբուել Հայաստանին ու հայութեան շուրջ՝ հզօրացնելու համար մեր հայրենիքը եւ մեր ազգը:

Ե. Նիստ՝ «Սփիւռքը Վերակազմակերպելու Հրամայականին Դիմաց»

Այս նիստին զեկոյցներ ներկայացուցին Լիբանանի թեմէն Քաղաքական Ժողովի անդամ Սեդա Խտըշեան եւ նոյն թեմէն Շահան Գանտահարեան: Զեկուգաբերները համապարփակ կերպով արծարծեցին Սփիւռքի դիմագրաւած կենսական հարցերը, յատկապէս՝ ինքնութեան պահպանումի, Սփիւռքի ներկայացուցչութեան ու անմիասնականութեան հարցերը: Անոնք ընդգծեցին համակարգուած կերպով աշխատելու անհրաժեշտութիւնը եւ արհեստավարժ մարդուժի օգտագործումով նոր հայեցակարգի մշակումը: Անոնք հաստատեցին, որ բոլոր նախադրեալները մտածել կու տան, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, իր թեմերու ցանցային համակարգով վաստակած է հեղինակութիւն եւ կարողականութիւն՝ անհրաժեշտ համախմբուածութիւն յառաջացնելու:

Վերոյիշեալ զեկոյցներէն ետք, քննարկման ընթացքին, ժողովականները ընդլայնելով վերոնշեալ զեկոյցներուն հիմնական խնդիրներն ու առաջարկները, վերաշեշտեցին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան շուրջ համախմբուելու կարեւորութիւնն ու անհրաժեշտութիւնը:

Յիշեալ քննարկումներէն ետք, Վեհափառ Հայրապետը ընդգծեց, որ արծարծուած նիւթերը մեզի անգամ մը եւս կը յուշեն, թէ Սփիւռքի վերակազմակերպումը հրամայական եւ գոյութենական խնդիր է: Նորին Ս. Օծու-

Թիւնը յայտնեց, որ վերակազմակերպում հասկացողութիւնը պէտք է ըմբռնել լայն յղացքով, որ իր մէջ կը բովանդակէ վերաշխուժացում, վերակենսաւորում: Այնուհետեւ, Հայրապետը կատարեց երեք հաստատումներ՝ «ա) Սփիւռքը պարտադրուած գոյավիճակ մըն է, հետեւաբար ինքնավարեան եւ ինքնանպատակ չի կրնար ըլլալ: Կարելոր է ընդունիլ այս մեկնակետը, որովհետեւ ան ամբողջական եւ անբաժանելի մասը կը կազմէ մէկ եւ նոյն հայութեան, բ) Սփիւռքը աստիճանաբար ծաւալեցաւ ու բարդացաւ եւ աւելի ծաւալելու ու բարդանալու ընթացքի մէջ է, գ) յանախ նշած ենք ու կը վերահաստատենք, որ Սփիւռքի վերակազմակերպումը Հայաստանի ու Արցախի հօգրացումն է, ինչպէս նաեւ մեր ժողովուրդի ընդհանրական իտելալներու ամրապնդումը»:

Հայրապետը նշեց, որ միշտ հաւատացած ենք ու կը շարունակենք հաւատալ, որ Հայաստանը կոչուած է միացնող ոյժ դառնալու ու երբ ան շեղի իր առաքելութենէն, Սփիւռքը պէտք է շեշտակի կերպով յիշեցնէ զայն: Հայրապետը անգամ մը եւս ընդգծեց ներգաղութային եւ միջգաղութային գործակցութեան անհրաժեշտութիւնը, որովհետեւ գաղութներն ալ իրենց հարցերը ունին, հետեւաբար, միջ-համայնքային ու միջ-կուսակցական գործակցութիւնը էական է: Աւարտին, Նորին Սրբութիւնը թելադրեց, որ Սփիւռքի առնչուած հրապարակագրութիւնները շարունակուին՝ շեշտը դնելով վերակազմակերպման վրայ, որուն մեկնակէտը պէտք է ըլլան մեր թեմերը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՊԱՏԳԱՄՈՎ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ՓԱԿԵՑ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ազգային Ընդհանուր Ժողովի երրորդ օրուան երկրորդ կիսուն, Ուրբաթ, 9 Դեկտեմբերին, պատգամաւորները Ժողովին ներկայացուցին թեմերէն եկած իրենց առաջարկները, ինչպէս նաեւ լսեցին, քուէարկեցին ու վաւերացուցին բանաձեւի, ընտրական ու տնտեսական յանձնախումբերու զեկոյցները, ընտրեցին յառաջիկայ քառամեակին Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական ու Քաղաքական Ժողովները եւ աւարտին, լսեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին պատգամը:

Հայրապետը իր պատգամին մէջ, առաջին հերթին, իր անսահման ուրախութիւնը յայտնեց՝ ի տես Ժողովի հեզասահ ընթացքին, որ ինքնին պերճախօս վկայութիւն է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր Ժողովի ճամբով մեր հայրենիքին, եկեղեցւոյ եւ ազգային արժէքներուն ու իտէալներուն նկատմամբ մեր ունեցած յանձնառութեան, բծախնդրութեան եւ միասնական ոգիով առաքելութիւնը շարունակելու վճռակամութեան: Հայրապետը իր խօսքին մէջ ըսաւ, թէ «Տարբերութիւններ կրնանք ունենալ, սակայն համագրային արժէքներու, մտահոգու-

թիւններու, վտանգներու գծով ներելի չեն ո՛չ մէկ տեսակ ներքին լարուածութիւն, զգայնութիւն ու բեւեռացում՝ թե՛ Հայաստանի, թե՛ Արցախի եւ թե՛ Սփիւռքի մէջ: Ազգային Ընդհանուր Ժողովը եկաւ տեսնելի կերպով արտայայտելու, թե՛ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կոչուած է մեր ժողովուրդը համախմբելու սրբազան առաքելութեան շուրջ»: *Ան իր գնահատանքը յայտնեց պատգամաւորներուն, որոնք ժողովուրդին կողմէ ընտրուելով եկան Անթիլիասի Մայրավանք եւ մասնակից դարձան Ազգային Ընդհանուր Ժողովի աշխատանքներուն՝ իրենց հետ բերելով ժողովուրդին ցաւերը, մտահոգութիւններն ու ակնկալութիւնները:*

Իր պատգամին մէջ, Վեհափառ Հայրապետը ընդգծեց, թէ՛ «Որեւէ մէկ ժողով իր նշմարիտ դիմագիծն ու հարազատ էութիւնը կը ստանայ ժողովէն ետք, երբ ժողովի ընթացքին արտայայտուած մտահոգութիւնները, արժեւորումները եւ որոշումները կեանքի վերածուին: Յաճախ կրկնեցինք ու անձնապէս պիտի յիշեցնեմ, թե՛ կարելոր տարբերութիւն կայ Կաթողիկոսարանին եւ Կաթողիկոսութեան միջեւ. Կաթողիկոսարանը կը գործէ ի սպաս Կաթողիկոսութեան. մէկը Անթիլիաս է, իսկ միւսը՝ ամենուրեք: Կաթողիկոսութիւնը մեր թեմերն ու ժողովուրդն են: Հոս կատարուած աշխատանքը թեմերու նամբով պէտք է երթայ մեր ժողովուրդին եւ տուեալ միջավայրին համահունչ կերպով կեանքի պէտք է վերածենք: Ուստի, պէտք է մտածել, թե՛ ինչպէ՞ս կարելի է աւելի գործօն կերպով թեմերը մասնակից դարձնել հաւաքական առաքելութեան, Կաթողիկոսարան-թեմ գործակցութիւնը առաւել եւս ամրացնելով»:

Շարունակելով իր խօսքը, Նորին Ս. Օծութիւնը ըսաւ, թէ՛ «Ազգային Ընդհանուր Ժողովի գումարումը վերյիշեցման առիթ է, թե՛ ինչ որ կը կատարուի Կաթողիկոսարանին կողմէ այստեղ ապրող միաբաններուն կամ Ազգային Կեդրոնական Վարչութեան կողմէ չէ որ կը կատարուի միայն, այլ՝ մեր թեմերուն, բարեկամներուն, բարերարներուն ու ազգայիններուն մասնակցութեամբ»:

Աւարտին, Վեհափառ Հայրապետը անգամ մը եւս իր գնահատանքը յայտնեց ժողովին եւ աղօթք բարձրացուց առ բարձրեալն Աստուած, որ ծաղկեցնէ, հզօրացնէ, լուսաւորէ եւ պայծառակերպէ հայ ժողովուրդին կեանքը՝ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի մէջ, անսասան պահէ մեր եկեղեցին ու հայրենիքը այս դժուարին օրերուն, որպէսզի միասնական ոգիով կարողանանք շարունակել մեր առաքելութիւնը:

Ապա, ժողովականները, Հայրապետին գլխաւորութեամբ, միաձայնութեամբ երգեցին «Կիլիկիա» քայլերգը եւ Հայրապետական մաղթերգը:

Ստորեւ կը ներկայացնենք Ազգային Կեդրոնական Վարչութեան նորընտիր Կրօնական ու Քաղաքական Ժողովներու անուանացանկը. —

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

- Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան
- Գերշ. Տ. Օշական Արք. Զոլոյեան
- Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան
- Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան
- Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքմէզեան
- Գերշ. Տ. Խորէն Արք. Տողրամաճեան
- Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան
- Գերշ. Տ. Անուշաւան Արք. Դանիէլեան
- Գերշ. Տ. Բաբգէն Արք. Զարեան

- Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեան
- Գերշ. Տ. Գրիգոր Արք. Զիֆթճեան
- Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեան
- Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեան
- Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեան
- Գերպ. Տ. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեան
- Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան
- Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

- Ստեփան Տէր Պետրոսեան (Լիբանան)
- Դոկտ. Մկրտիչ Մկրտիչեան (Լիբանան)
- Դոկտ. Նորա Պայրազտարեան (Լիբանան)
- Շահան Գանտազարեան (Լիբանան)
- Յակոբ Հաւաթեան (Լիբանան)
- Տիգրան Ճիւղաչեան (Լիբանան)
- Ալեք Մուրատեան (Լիբանան)
- Արթիւր Նազարեան (Լիբանան)
- Սեդա Խըրըշեան (Լիբանան)
- Գրիգոր Մահսերեճեան (Արաբական Միացեալ Էմիրութիւններ)

- Ռոստոմ Այնթապլեան (Ա.Մ.Ն. Արեւմտեան)
- Յովսէփ Աւետեան (Իրան)
- Կայծակ Զէյթլեան (Ա.Մ.Ն. Արեւմտեան)
- Տոքթ. Տրդատ Մանկիկեան (Ա.Մ.Ն. Արեւելեան)
- Հրաչ Յակոբեան (Սուրիա)
- Տոքթ. Ժիրայր Պասմաճեան (Գանատա)
- Տոքթ. Արմէն Տէրեան (Յունաստան)

ԲԱՆԱԶԵԻ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի բարձր հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքին մէջ գումարուած Ազգային Ընդհանուր Ժողովը եւօրեայ բեղուն գործունէութեամբ աւարտին հասաւ, եզրափակելով Կիլիկեան Ս. Աթոռի բազմերես ծառայութեան ճամբով վերարժեւորման ենթարկելով իր իրականացուցած գործունէութիւնը եւ կատարած իրագործումները, ազգային-հոգեւոր ծաղկման, Սփիւռքի ամրապնդման, հայակերտումի, ազգակերտումի ու հայրենակերտումի:

Հայոց Յեղասպանութենէն ետք յատկապէս, Սփիւռքի մէջ ազգահաւաքի եւ հոգեւոր ու ազգային վերընձիւղման Յոյսի Փարոս Անթիլիասը այսօր, իր աշխարհատարած թեմերով, Սիսի պատմական Կաթողիկոսութեան եւ անոր թեմերուն շօշափելի ներկայութիւնը իբրեւ, մէկ եւ ամբողջական պատկերով ու միասնական ոյժով կը գործէ, հաւաքականօրէն կենսագործելով իր նուիրական առաքելութիւնը:



Անցնող չորս տարիներու ընթացքին Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական եւ Քաղաքական Ժողովներու, ինչպէս նաեւ թեմերու ամփոփ տեղեկագիրները ցոյց տուին այն հսկայական աշխատանքը, որ կատարուած էր մեր ժողովուրդի բոլոր խաւերուն համար, տարբեր բնագաւառներէ ներս, յատկապէս մեր նոր սերունդին համար:

Մեր ժողովուրդին դիմագրաւած մարտահրաւէրները՝ Միջին Արեւելեան երկիրներու ռազմաքաղաքական, տնտեսական եւ ընկերային տագնապները, ինչպէս նաեւ Հայաստանի ու Արցախի ապահովական տխուր ու անորոշ դրութիւնը, մեծագոյն մտահոգութիւնը կազմեցին եւօրեայ ժողովի քննարկումներուն: Նորին Ս. Օծովեան այցելութիւնները յատկապէս Լիբանանի եւ Սուրիոյ տագնապահար թեմերուն մէջ ապրող հայ ժողովուրդին, մեծ յոյս ներշնչած էին սոյն տառապող համայնքներու զաւակներուն, բալասանելով անոնց վշտաբեկ սրտին վէրքերը:

Հայ Եկեղեցւոյ վերանորոգման հրամայական անհրաժեշտութիւնը ներկայ աշխարհի յարափոփոխ իրականութեան դիմաց, անյետաձգելի կարիք է, որուն լծուած է Կիլիկեան մեր Ս. Աթոռը, Հայ Եկեղեցւոյ Նուիրապետական միւս Աթոռներուն հետ միասին: Դպրեվանքի ճամբով մարդոյթի պատրաստութիւնը եւ Միաբանութեան երիտասարդացումը, քահանայից պատրաստութիւնն ու հայ հոգեւորականի ուսումնական մակարդակին բարձրացումը, քրիստոնէական դաստիարակութեան աշխոյժ գործունէութիւնը, միջեկեղեցական ու միջ-կրօնական ծառայութիւնը, Աստուածաշունչի ներկայ աշխարհաբարի թարգմանութեան եւ Հայ Եկեղեցւոյ շարականոցին ամբողջապէս եւրոպական ձայնագրութեամբ հրատարակութիւնը, Կիլիկեան Ս. Աթոռը յառաջամարտիկի դերին մէջ դրին, Սփիւռքի վերանորոգման, գաղութներու ամրապնդման ու հոգեւորապէս աճման մեծապէս նպաստելով: Աւելին, ներկայ աշխարհի ընկերաբարոյական կեանքը յուզող մեծ խնդիրներուն պատասխան գտնելու եւ երիտասարդութիւնը այդ ուղղութեամբ դաստիարակելու ուղեցոյց-գրքոյկի մը հրատարակութիւնը, իր կարեւոր դերակատարութիւնը պիտի ունենայ Հայ Եկեղեցւոյ վերանորոգման եւ այժմէականացման ճամբուն վրայ: Նոյնը նաեւ կրօնի դասագրքերու վերատեսութեան ենթարկման պարագային, ինչպէս նաեւ երբ ընկերային ցանցերով, կրօնական պատգամները աւելի հասանելի դառնան բոլորին:

Համաշխարհայնացման դժուարին ժամանակաշրջանին, երբ աւանդական արժեհամակարգը մեծ փոփոխութիւն կը կրէ, եկեղեցին դէպի ժողովուրդին տանելու ջանքը գործնապէս արտայայտութիւն գտաւ Կիլիկեան Ս. Աթոռին ճամբով, կարեկիութեան սահմաններուն մէջ ծիսական բարեկարգութեան իրագործումով, ինչպէս նաեւ ընկերային ծառայութեան շօշափելի արտայայտութիւն տալով:

Մփիւռքը վերակազմակերպելու միտող քննարկումները պիտի շարունակուին նաեւ 2023 տարուան ընթացքին, որուն համար նոր նշաձող զետեղ-ուեցաւ հորիզոնին վրայ, Ազգային Ընդհանուր Ժողովին ճամբով բոլոր թեմերը հրաւիրելով վերանորոգելու նախ իրենք զիրենք, եւ այդ միջոցաւ Մփիւռքը, նոյնինքն Հայաստանի ու Արցախի հզօրացման համար: Մփիւռքի գոյութեանակաւ խնդիրը՝ ինքնութեան պահպանումով, հայերէնախօսութեան շարունակականութեան ապահովումով, յատկապէս ներկայ բազմացեղ, բազմակրօն ընկերութեան միջավայրին մէջ, օրէ ցօր աճող մարտահրաւէր մըն է Կաթողիկոսութեան եւ իր թեմերուն համար:

Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման ի խնդիր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ յատկապէս Վեհափառ Հայրապետին կատարած աշխատանքը բարձր գնահատանքի արժանի համարեց ժողովս, որոնք իրենց քաջ կեցուածքներով, մեր ժողովուրդի բռնաբարուած իրաւունքներուն վերատիրացման արդար ձայնը միջազգային բեմերէ հնչեցուցին: Այս առումով տակաւին միջազգային հետապնդման առարկայ է Սիսի Կաթողիկոսարանին կալուածը իր իրաւատիրոջ վերադարձուելուն դատը:

Ընկերային ծառայութեան ծանր բեռը նաեւ իրենց ուսերուն առած Վեհափառ Հայրապետին եւ Ազգային Կեդրոնական Վարչութեան գործունէութիւնը դարձեալ վեր է ամէն գնահատանքէ, որ հոգեւոր սպասաւորութեան կողքին մարդասիրական աշխատանքը դարձուցին առօրեայ աշխատանք, յատկապէս Լիբանանի եւ Սուրիոյ կարիքաւոր գաղութներուն մէջ: Այս գծով Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան եւ Արեւմտեան թեմերու նիւթական նպաստը, ինչպէս նաեւ Ալեքքօ եւ Անի Պէգիքեան բարերար ամուլին եւ այլ բարերարներու աջակցութիւնը, իրենց կարեւոր դերը ունեցան սոյն գործի յաջողութեան մէջ: Մեր բոլոր թեմերն ալ բարոյական պարտաւորութիւն ունին կենսական սոյն առաքելութեան մասնակից դառնալու, ծանր վիճակէն դուրս բերելու Մփիւռքի մայր գաղութները:

Մեր համազգային առաքելութիւնը կը կենսագործուի, մեր ժողովուրդին անվերապահ մասնակցութեամբ եւ միասնական ոգիի ամբողջական դրսեւորումով, համախմբուելով մեր ազգի հիմնարկէքներուն շուրջ: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութիւնն է՝ մեր ժողովուրդի զաւակները համախմբել Հայ Եկեղեցոյ եւ մեր ազգային դրօշին ներքոյ, առանց յարանուանական, կուսակցական եւ կամ այլ խմբաւորմանց ներկայացուցած տարբերութիւններուն, մէ՛կ ազգի պատկանելիութեան գիտակցութեամբ:

Մեր ժողովուրդի կեանքը յուզող խնդիրներուն ներկայացումն ու քննարկումը, ինչպէս հայ ընտանիքը՝ իբրեւ առանցքը հայու գոյութեան, հայակերտումը՝ երաշխիքը հայու ինքնութեան, երիտասարդութիւնը՝ աւիշը հայ կեանքին, Մփիւռքը՝ մասնակից Հայաստանի ու Արցախի հզօրացման եւ

Մփիւռքի վերակազմակերպման հրամայականը, իսոր վերլուծման առաջնորդեց մասնակիցները:

Ընտանիք հասկացութեան նորաձեւութիւնները՝ աւանդականէն տարբեր, խառն ամուսնութիւնները, ամուսնալուծութիւնները, զաւակներու հայեցի դաստիարակութիւնը, բաժնուած ընտանիքներու զաւակներուն անորոշ դրութիւնը, երիտասարդութեան ներգրաւումը ազգային գործունէութեան տարբեր ոլորտներուն մէջ, որպէս ապագայի յոյսը մեր հաւաքական գոյութեան, հայրենակերտման ու հայրենապահպանութեան մասնակցութիւնը, եւ վերջապէս Մփիւռքի վերակազմակերպման հաւաքական ճիգը՝ առաջնորդութեամբ Մփիւռքի մեծագոյն հոգեւոր ու ազգային Կեղրոնին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, նոր ուղեցոյց ստացան հաւաքական մտածողութեան ճշգրիտ բանաձեւումով:

Մփիւռքի մնայուն ըլլալու իրողութիւնը, հակառակ նորօրեայ իր ձեւափոխումներուն եւ բազմաշերտ հատուածներուն, փաստացի տուեալ է: Մփիւռքը ինքնագոյ, ինքնանպատակ եւ ինքնավախձան գոյութիւն չէ՛: Ան ամբողջական մասն է հայութեան: Ան զօրավիգ է հայրենիքին, ո՛չ միայն հեռուէն դիտողի, նիւթապէս օժանդակողի կարգավիճակով, այլեւ մասնակիցի՝ ի խնդիր Հայաստանի եւ Արցախի հզօրացման: Անցնող երեսուններկու տարիներու ընթացքին, Հայաստան-Մփիւռք եւ Մփիւռք-Հայաստան փոխյարաբերութիւնները զանազան փուլերէ անցան, սակայն Մփիւռք-Հայաստան փոխյարաբերութիւնը վտանգաւոր հանգրուանի հասած է այժմ:

Հայաստանը մեզ բոլորս միացնող եւ հայութեան տարբեր հատուածները իրարու կամրջող ոյժը պէտք էր ըլլար: Մփիւռքի հզօրացումը, հզօրացումն է հայրենիքին, իսկ անոր ջլատումն ու պառակտումը՝ կամաւորապէս հրաժարումն է հայկական պահանջատիրութենէն, ու համահայկական իտէալներէն: Հայաստանի պետութեան որդեգրած ներկայ մօտեցումը Մփիւռքի նկատմամբ, իր անկանխատեսելի, բայց ամէն պարագայի ժխտական հետեւանքները կրնայ ունենալ: Աւանդական Մփիւռքը ունի իր կառոյցները, որոնք Հայոց Յեղասպանութենէն ետք կազմաւորեցին աշխարհացրիւ հայութիւնը, որ տարբեր գաղութներու մէջ համախմբուած կ'ապրի այդ կառոյցներուն շուրջ: Մփիւռքահայութեան վերստին համախմբումը մեր ազգի գերագոյն իտէալներուն շուրջ, հրամայական պահանջ է, նոր ու մասնագիտական համակարգումով եւ աշխատակարգով, յատկապէս երիտասարդութեան ներգրաւումով, ի՛նչ պայմաններու գնով ալ իրագործելի ըլլայ այդ:

Հայաստան-Արցախ-Մփիւռք եռամիասնութիւնը, հակառակ գոյութիւն ունեցող տարակարծութիւններուն եւ բաժանարար այլեւայլ կեցուածքներուն, երաշխիքն է մեր ազգի միաւորման եւ հայկական գոյապահպանման, որ միշտ պէտք է պահպանել ամուր եւ անխոցելի: Ուստի, պիտի շարունակենք զօրավիգ կանգնիլ Հայաստանի ու Արցախի հզօրացման նպաստող բո-

լոր ծրագիրներուն, որոնց մէջ գործնական առաջնահերթութիւն է հայոց բանակին հզօրացումը: Ժողովս նաեւ արձանագրեց թեմերէն եկած բոլոր հայակերտ ու հայրենաշէն, ինչպէս նաեւ վարչական ու կանոնադրային բարեկարգումներու առաջարկները, զանոնք իբրեւ աշխատանքային ուղեցոյց դնելով նորընտիր Ազգային Կեդրոնական Վարչութեան ձեռքերուն մէջ:

Նոր հորիզոններու բացուող մարդկութիւնը, ներկայ կրօնական բազմազանութեան, մշակութային խաչաձեւումներու, ռազմաքաղաքական բախումներու, առողջապահական նոր սահմանափակումներու, իսկ մեր ժողովուրդը հայրենական անապահովութեան, հայեցի կրթութեան վտանգուածութեան, եւ դեռ տասնեակներով նոր մարտահրաւէրներու արեւոյտնութիւններուն յանձնուած ըլլալով հանդերձ, մենք մեր ժողովուրդին նաւը պիտի առաջնորդենք դէպի խաղաղ նաւահանգիստ, հաւաքական ճիգով եւ զինուած անվախ նաւավարի աներեր քաղաքականութեամբ, միասնական գործելաձեւը որդեգրելով իբրեւ միակ ուղին մեր եկեղեցւոյ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, մեր ազգին ու մեր յաւերժական հայրենիքին:

ԹԵՄԵՐ ԱՌԱՆՁՆԱԲԱՐ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑԱՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀԵՏ

Երեք օրերու վրայ տարածուած ժողովական աշխատանքներէն ետք, 9 եւ 10 Դեկտեմբերին, Վեհափառ Հայրապետը հերթական առանձին հանդիպումներ ունեցաւ թեմերուն հետ՝ ներկայութեամբ թեմակալ առաջնորդին եւ պատգամաւորներուն: Այս հանդիպումներու ընթացքին քննարկուեցան թեմերուն առնչուող աշխատանքային ծրագիրներ:

Յայտնենք որ, Ազգային Ընդհանուր Ժողովի ծիրէն ներս, Կիրակի, 11 Դեկտեմբերին, Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ Ս. եւ Անմահ Պատարագ մատուցեց՝ լուսարարապետ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեանը եւ մեր ժողովուրդին իր Հայրապետական պատգամը փոխանցեց՝ Նորին Ս. Օծութիւնը՝ իբրեւ բնաբան ունենալով «Տուր զհամար տնտեսութեան քո» (Ղկ 16.2) աւետարանական համարը (տե՛ս Փոխան Խմբագրականի):

**ՀԱՅԱԿԵՐՏՈՒՄԻ ԵՒ ՀԱՅՐԵՆԱԿԵՐՏՈՒՄԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ
ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ՆՈՐ ԹԱՓՈՎ**

Աստուծոյ կամքով՝ յաջողութեամբ պսակուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր Ժողովը: Հիմա, երբ ժողովականներ արդէն իսկ վերադարձած են իրենց թեմերը, 7-9 Դեկտեմբեր 2022-ը լուսարձակի տակ բերելով, անվարան կ'ըսենք. Անթիլիասի գոյութեան պատճառը հանդիսացող հայակերտումի եւ հայրենակերտումի առաքելութիւնը նո՛ր թափով պիտի շարունակուի՝ հոն ուր մեր Ս. Աթոռը կ'առաքուի Աստուծոյ կողմէ եւ հայ ժողովուրդի զաւակներուն հրաւերով կը կանչուի:

Իւրաքանչիւր Ազգային Ընդհանուր Ժողով հաւաքական հաշուետուութեան եւ ծրագրաւորումի հանգրուան մըն է՝ ինչպէս յիշեցուց Արամ Ա. Սրբազնագոյն Հայրապետ իր 11 Դեկտեմբերի պատգամին մէջ, յընթացս սուրբ պատարագի:

Այսպէ՛ս եղաւ այս անգամ եւս, հետեւեալ երեք մասնայատկութիւններով.

Առաջին՝ ժողովական օրակարգն ու ընթացքը դասականէն տարբեր էին, երբ առաւելաբար գոյութենական մարտահրաւէրներով զբաղեցանք: Մեր առաքելութեան վերաքննութեան հիմնական առարկան դարձաւ աշխարհատարած Հայ Սփիւռքի վերակազմակերպումը՝ ի խնդիր նոյնինքն Հայաստանի ու Արցախի առաւել հզօրացումին, «Սփիւռքի Տարի»-ի հայրապետական հռչակագիրի ոգիին հաւատարմութեամբ: Հոս անգամ մը եւս ընդգծուեցաւ այն իրողութիւնը, թէ մէ՛կ է հայութիւնը իր հայրենիքով – Հայաստանի Հանրապետութիւն ու Արցախի Հանրապետութիւն – սփիւռքով, պատմական Հայաստանով ու Կիլիկիայով, պահանջատիրութեամբ եւ ձգտումներով:

Երկրորդ՝ ժողովական աշխուժ քննարկումները վերահաստատեցին, թէ աշխարհի որ անկիւնն ալ գտնուինք նո՛յն մտահոգութիւնները մեզ կը տանապեցնեն եւ կը միաւորեն: Մեր թեմերուն եւ համայնքներուն ներքին կարգն ու սարքը զանազանութիւններ ունին, սակայն համահայկականը գերակշիռ է ամէն տեղ, եւ ա՛յդ է որ մեր հաւաքական պատասխանատուութեան ու աշխատանքին մղում կու տայ տայ՝ մեզ մէ՛կ Եկեղեցի պահելով:

Երրորդ՝ ճշմարտուեցաւ տէրունի խօսքը. «Ոչ ոք քրագը կը վառէ եւ կը պահէ կաթսայի տակ. ընդհակառակը, գայն աշտանակի վրայ կը դնէ, որպէսզի տունին մէջ գտնուողներուն լոյս տայ» (Աւետարան ըստ Մատթէոսի 5.15): Հայոց Յեղասպանութեան պարտադրանքով՝ Հայ Սփիւռքի մէջ վառուած աշտանակ մըն է Անթիլիասը, որ Հայ Մեծ Տունի զաւակներուն կեանքին մէջ Աստուծոյ եւ ազգին – հայ քրիստոնեայի – լոյսը կը ճառագայթէ՝ օրէ-օր առաւել պայծառութեամբ:

*
* *

Ազգային Ընդհանուր Ժողովէն առաջ՝ նկատի ունենալով մեր ժողովուրդին կեանքը ալեկոծած եւ մեզ յուսալքած պայմանները, մտավախութիւն մը պատած էր զիս, թէ աչքերը Անթիլիասի վրայ կեդրոնացուցած հայորդիներ ի՞նչ պիտի ստանան այս ժողովէն: Սակայն ահա առաջին երբ անգամ մը եւս գրասեղանիս վրայ կը բանամ ժողովի օրակարգի գրքոյկը եւ հաշուեկշիռը կը կատարեմ մեր եռօրեայ քննարկումներուն, կը տեսնեմ որ նո՛ր շեշտադրումով կը շարունակենք մեր սրբազան առաքելութիւնը հայ եկեղեցիի, հայ ընտանիքի, հայ դպրոցի, հայ երիտասարդութեան, Հայ Սփիւռքի, Հայաստանի ու Արցախի եւ Սուրիոյ ու Լիբանանի հայութեան պարունակին մէջ՝ առաւել՝ նախանձախնդրութեամբ հաւատարիմ տնտեսի աստուածաշնորհ մեր խոր գիտակցութիւնը վերընձիւղելով:

Որպէս Հայ Սփիւռքի մէջ ծնած եւ ծառայող հայորդի, ամէն անգամ ինքզինքս հայրենիքիս ոգեղէն եւ հոգեշէն հողաշերտին վրայ կը զգամ, երբ հայկականութեամբ թաթաւուն յարկ մը կ'այցելեմ կամ հայրենակիցներուս հետ նոյն համահայկական իտէալին հաղորդակից կը դառնամ: Այս իսկ կու գայ նաեւ ա՛յս հանգրուանին զիս համոզելու, թէ անքակտելի թելեր մեզ իրարու կը կապեն նո՛յն անցեալով, ներկայով ու ապագայով, երբ Հայաշխարհի զաւակներս կղզեակներու նման Արամ Ա. Կաթողիկոսի հայրապետական աստիճանով իրարու կամրջուած՝ կը շարունակենք մեր հայակերտումի եւ հայրենակերտումի յաղթական երթը ի հեծուկս Սփիւռքի գունաթափող եւ մաշեցընող պայմաններուն:

Աւարտած է ժողովը: Լուծ են խօսքերը: Անլուելիօրէն կը հնչէ գործի զանգը՝ դարձեալ տէրունի յանձնարարութեան պարտադրանքով. «Նոյնպէս ալ, ձեր լոյսը թող այնպէս շողայ մարդոց առջեւ, որ անոնք ձեր բարի գործերը տեսնեն եւ փառաւորեն ձեր Հայրը, որ երկինքի մէջ է» (Աւետարան ըստ Մատթէոսի 5.16):

ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵՄԷՋԵԱՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՑԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆԵՑ
ԿԻՊՐՈՍԻ ԵԿԵՂԵՑՈՅ ՊԵՏ ԽՐԻՍՏՈՍԹՈՍՈՍ Բ.
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ**

Երկուշաբթի, 7 Նոյեմբերին, տասնըվեց տարի (2006-2022) գահակալութենէ ետք, ի Տէր հանգեալ Կիպրոսի ուղղափառ եկեղեցւոյ պետ՝ Խրիստոսթոմոս Բ. Արքեպիսկոպոսը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը մօտէն ճանչցած էր զինք, յաճախակի հանդիպումներ ունեցած էր անոր հետ եւ միջ-եկեղեցական շարժումի ծիրէն ներս սերտ գործակցութիւն հաստատուած էր իրենց միջեւ:

Կիպրոսի եկեղեցւոյ Սինոտին ուղղած իր ցաւակցական նամակին մէջ Նորին Ս. Օծութիւնը կը գրէր, որ Արքեպիսկոպոսը փայլուն էջ մը քացած էր իր եկեղեցւոյ կեանքին մէջ՝ յատկապէս հոգեւոր, կրթական ու ընկերային ծառայութեան մարզերէն ներս: Ան քաջ կեցուածքներ որդեգրած էր Թուրքիոյ կողմէ Կիպրոսի գրաւման հակաօրինական կացութեան դեմ՝ պաշտպանելով երկրի անկախութիւնը, հողային



ամբողջականությունը եւ գերիշխանությունը: Նամակի աւարտին, Վեհափառ Հայրապետը աղօթք կը բարձրցներ առ Աստուած, որ Արքեպիսկոպոսը արժանացնէ իր երկնային անթառամ պսակին եւ Կիարոսի եկեղեցւոյ հոգեւորկանաց դասուն ու հաւատացեալներուն պարգեւէ Ս. Յովնայ մխիթարությունը:



ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՏԻՐՈՋ ՄԻՋԵՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Շաբաթ, 19 Նոյեմբերին, Անթիլիասի Մայրավանքին մէջ հանդիպում մը կայացաւ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ Ռաֆայել Պետրոս ԻԱ. Հոգեւոր Տիրոջ միջեւ: Հանդիպման ընթացքին քննարկումի նիւթ դարձան Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետին վախճանման 850 ամեակի նշումը, ինչպէս նաեւ Հայաստան-Սփիւռք յարաբերություններու եւ Լիբանանի նախագահի ընտրութեան հարցերը:



Հ Ա Յ Դ Ա Տ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ
ԿՈՉ ՈՒՂԴԵՑ ԲՈԼՈՐ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՄԻՋԱՄՏԵԼՈՒ
ԼԱԶԻՆԻ ՄԻՋԱՆՑՔԸ ՎԵՐԱԲԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՎ**

Հինգշաբթի, 15 Դեկտեմբերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը միջազգային համայնքին կոչ ուղղեց կարելի բոլոր ազդու միջոցներով միջամտելու, որպեսզի Ազրպեյճանի կողմէ փակուած Արցախի ու Հայաստանի միջեւ կապը երաշխաւորող Լաչինի միջանցքը վերաբացուի: Իր կոչին մէջ Նորին Ս. Օծութիւնը անդրադառնալով Արցախի մէջ ապրող հազարաւոր հայերու, ընդգծեց. «Անոնք շուտով ենթակայ կրնան ըլլալ հիւանդութեան ու սովի համաճարակի: Փաստօրէն, Ազրպեյճանի կողմէ նման քայլ մը ցեղասպանութիւն է. հետեւաբար, միջազգային համայնքը իրաւունք չունի անտարբեր եւ լուռ մնալու՝ մարդասիրական ու մարդկային հիմնական օրէնքներու եւ սկզբունքներու խախտումին ու անտեսումին նկատմամբ»:

Յայտնենք, որ Արամ Ա. Կաթողիկոսին յիշեալ կոչը փոխանցուեցաւ միջեկեղեցական, միջ-կրօնական եւ միջազգային կազմակերպութիւններուն ու մամուլին:

**Հ Ա Ն Դ Ի Պ Ո Ւ Մ Լ Ի Բ Ա Ն Ա Ն Ի Մ Օ Տ
Ս Է Ո Ւ Տ Ա Կ Ա Ն Ա Ր Ա Բ Ի Ո Յ Դ Ե Ս Պ Ա Ն Ի Ն Հ Ե Տ**

Երեքշաբթի, 20 Դեկտեմբերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց Լիբանանի մօտ Սէուտական Արաբիոյ դեսպան՝ Ուալիտ Պըն Ապտալլա Պուխարին:

Վեհափառ Հայրապետը դեսպանին ուշադրութեան յանձնեց Ազրպեյճանի կողմէ Լաչինի միջանցքին փակումը եւ անոր ծանր հետեւանքները Արցախի ժողովուրդին վրայ եւ խնդրեց Սէուտական Արաբիոյ միջամտութիւնը: Ապա, Նորին Ս. Օծութիւնն ու դեսպանը տեսակէտներու փոխանակում ունեցան Լիբանանի ու Սէուտական Արաբիոյ յարաբերութիւններուն, Լիբանանի նախագահական ընտրութիւններուն եւ Լիբանանի ժողովուրդը դիմազրաւող ընկերատնտեսական հարցերու առնչուած շարք մը խնդիրներու շուրջ:

Յայտնենք, որ Վեհափառ Հայրապետը քանի մը օրեր առաջ միջ-եկեղեցական, միջ-կրօնական ու միջազգային կազմակերպութիւններուն կոչ ուղղած էր միջամտելու Լաչինի միջանցքի վերաբացումը երաշխաւորելու գծով: Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը (Ե.Հ.Խ.), Եւրոպայի Եկեղեցիներու Խորհուրդը (Ե.Ե.Խ.) եւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդը (Մ.Ա.Ե.Խ.) զանազան կերպերով ու հրապարակային յայտարարութիւններով դատապարտեցին Ազրպէյճանի բարբարոսային արարքները՝ իբրեւ խախտում միջազգային օրէնքին եւ պահապանչեցին Լաչինի միջանցքին անյապաղ վերաբացումը: Նորին Սրբութիւն Ֆրանսիս Պապը անցեալ Կիրակի օրուան պատգամին մէջ իր խոր մտահոգութիւնը յայտնեց Արցախի մէջ տիրող կացութեան նկատմամբ եւ կոչ ուղղեց խաղաղ լուծում գտնելու՝ յանուն մարդոց բարօրութեան:



Նոյն օրը երեկոյեան, Արցախի հարցին շուրջ խորհրդակցութիւն ունեցան երկու Վեհափառ Հայրապետները եւ ընդգծեցին զոյգ Նուիրապետական Աթոռներուն այդ ուղղութեամբ կատարուող աշխատանքները ներդաշնակելու կարեւորութիւնը:

Աւելի ուշ, Արցախի պետական նախարար՝ Ռուբէն Վարդանեան հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցաւ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հետ եւ պարզեց Արցախի ժողովուրդին հետզհետէ վատթարացող ընկերատնտեսական կացութիւնը եւ խնդրեց Հայրապետէն Լաչինի միջանցքին վերաբացման գծով կատարուող աշխատանքներու շարունակումը:

ՀԵՌԱԶԱՅՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՐՑԱԽԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՀԵՏ

Չորեքշաբթի, 21 Դեկտեմբերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսն ու Արցախի Հանրապետութեան նախագահ՝ Արայիկ Յարութիւնեանը հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցան:

Նախագահ Յարութիւնեան Վեհափառ Հայրապետին պարզեց Արցախի մէջ ստեղծուած իրավիճակը՝ Ազրայէյճանի կողմէ բնապահպանական կեղծ պատրուակներով Արցախը մայր Հայաստանին կապող միակ ճանապարհի շրջափակումով, ինչպէս նաեւ մարդասիրական աղէտը կանխելու ուղղուած աշխատանքները:

Իր կարգին, Նորին Ս. Օծութիւնը նախագահին փոխանցեց Արցախի գծով իր կատարած աշխատանքները՝ յատկապէս միջ-եկեղեցական ու միջ-կրօնական մարզերէն ներս, ինչպէս նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերէն ներս կատարուած ու կատարուելիք աշխատանքները եւ իր ամբողջական զօրակցութիւնը յայտնեց արցախահայութեան՝ նշելով, որ իր աղօթքներուն մէջ միշտ ներկայ է Արցախը եւ մաղթեց, որ Աստուծոյ հովանին զօրավիգ ըլլայ Արցախին ու անոր ժողովուրդին:

ՄԻՋ-ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՁ

Ուրբաթ, 23 Դեկտեմբերին, Անթիլիասի Մայրավանքին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին հրաւէրով, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան (Ս.Դ.Հ.Կ.), Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (Հ.Յ.Դ.) եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան (Ռ.Ա.Կ.) վերին մարմիններու ներկայացուցիչները՝ Ալեքսան Քէօզկէրեան, դոկտ. Մկրտիչ Մկրտիչեան եւ տոքթ. Աւետիս Տազէսեան խորհրդակցական հանդիպում մը ունեցան: Հանդիպումին ներկայ էին նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան համա-ատենապետները՝ Ստեփան Տէր Պետրոսեան եւ Գրիգոր Մահսերէճեան:

Վեհափառ Հայրապետը ներկայացուց ազերիներուն կողմէ Արցախը Հայաստանին կապող միջանցքին փակման գծով միջազգային մամուլին իր կատարած յայտարարութիւնը եւ այդ ուղղութեամբ հաստատած կապերը՝ միջ-եկեղեցական ու միջ-կրօնական շրջանակներէն ներս, ինչպէս նաեւ յիշեալ շրջանակներուն կատարած թէ՛ դատապարտումի արտայայտութիւնները եւ թէ՛ դիւանագիտական աշխատանքները: Նորին Ս. Օծութիւնը նաեւ անդրադարձաւ Արցախի նախագահին եւ պետական նախարարին հետ ունեցած իր հեռաձայնային զրոյցին, Կաթողիկոսութեան թեմերու առաջնորդներուն կատարած թելադրութիւններուն եւ այլ աշխատանքներու՝ շեշտելով



հաւաքական ճիգով Սփիւռքէն ներս մեր բողոքը արտայայտելու հրամայականը եւ միջազգային համայնքին պարզելու Բերձորի միջանցքին փակման ստեղծած յատկապէս մարդասիրական ծանր հետեւանքները եւ անոր շուտափոյթ վերաբացման անհրաժեշտութիւնը:

Ապա, նորին Սրբութիւնը կոչ ուղղեց համասփիւռքեան մաշտապով եւ բոլոր համայնքներու, կուսակցութիւններու, մարմիններու եւ մեր ժողովուրդի զաւակներու մասնակցութեամբ, հաւաքական կեցուածք ճշդելու, դատապարտումի ձայն բարձրացնելու եւ միջանցքին շուտափոյթ վերաբացումը պահանջելու կարեւորութիւնը: Այս ծիրէն ներս Հայրապետը ընդգծեց երեք կուսակցութիւններուն կարեւոր դերը:

Ներկաները խօսք առնելով՝ ողջունեցին Վեհափառ Հայրապետին տարած աշխատանքները ու բաժնեցին անոր մտահոգութիւններն ու տեսակէտները՝ շեշտելով համահայկական ճիգով ու միջ-կուսակցական գործակցութեամբ Սփիւռքի բոլոր գաղութներէն ներս կազմակերպուելու եւ ազդու միջոցներով ու գաղութներու շրջապատին համապատասխան մօտեցումով մեր հաւաքական բողոքը արտայայտելու անյետաձգելի անհրաժեշտութիւնը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻԲԱՆԱՆԻ ՄՕՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆ ՎԱՀԱԳՆ ԱԹԱԲԵԿԵԱՆԸ

Շաբաթ, 24 Դեկտեմբերին, Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Վահագն Աթաբէկեան, Երեւանէն վերադարձէն անմիջապէս յետոյ, Կաթողիկոսանիստ Մայրավանքին մէջ հանդիպում ունեցաւ Ն.Ս.Օ. Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հետ:



Հանդիպման ընթացքին դեսպան Աթաբեկեան Հայրապետին փոխանցեց Հայաստանը Արցախին միացնող Բերձորի միջանցքին առնչուած կարգ մը տեղեկութիւններ:

Իր կարգին, Նորին Ս. Օծութիւնը պարզեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան այս ուղղութեամբ կատարած աշխատանքները՝ շեշտելով Սփիւռքի գաղութներէն ներս միասնական ոգիով ու միահամուռ կերպով մեր ժողովուրդը իր բողոքի ձայնը բարձրացնելու կարեւորութիւնը, ազգ-րիական անմարդկային ու միջազգային օրէնքներուն հակասող արարքներուն դէմ:



ՏՕՆԱԿԱՆ

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՍԱՐԿԱԲԱԳԻՆ ՏՕՆԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Կիրակի, 25 Դեկտեմբերին, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Կաթողիկոսանիստ Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ նշուեցաւ քրիստոնէական եկեղեցւոյ առաջին սարկալազին ու նախավկային՝ Ս. Ստեփանոսին տօնը: Ս. Պատարագը մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ «Կիլիկիա» մատենադարանի տեսուչ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանը: Ս. Սեղանին սպասարկութիւնը կատարեցին Դպրեվանքի սարկալազաց դասը:

Իր քարոզին մէջ, սրբազան հայրը վեր առնելով Ս. Ստեփանոս նախասարկալազին եւ նախավկային տիպարը, յատկանշական եօթը դիժեր պարզեց. – Ս. Ստեփանոս՝ «Շնորհքի մարդը», «Հաւատքի մարդը», «Աղօթքի մարդը», «Ծառայութեան մարդը», «Իմաստութեան մարդը», «Վկայութեան մարդը» եւ «Նահատակութեան մարդը»: Ապա ղիմելով դպրեվանեցիներուն, ըսաւ.



«Միրելի՛ սարկալազ եւ կիսասարկալազ դպրեվանեցիներ, երբ Ս. Ստեփանոսի ինքնութիւնը կը փորձենք պեղել եւ հրամցնել մեր ժողովուրդին, բարի ակնկալութիւնը ունինք, որ յատկապէս դո՛ւք պիտի ջանաք անոր նկարագրին հետեւողութեամբ աճիլ, զարգանալ եւ պատրաստուիլ մեր ժողովուրդի կեանքի անդաստանին մէջ դառնալու «մշակ առանց ամօթոյ» եւ կեանքով պանծացնել առաջին սարկալազին յիշատակը»: Սրբազանը իր խօսքը աւարտեց՝ նշելով, որ այսօր, նահատակութեան նոյն ճանապարհէն կը քալեն մեր քոյրերն ու եղբայրները շրջափակուած Արցախի մէջ, եւ որքա՛ն յուսադրող է Ս. Ստեփանոս նախավկային՝ առաջին մարտիրոսին նուիրուած հայ շարականին վերջաբանը: «Մենք ալ, անմարմին բազմութիւններու դասերուն եւ հրեղէն լեզուներուն հետ, աղօթանուէր մաղթանքներով կը վերահայցենք եւ կը խնդրենք քեզմէ՛, մարդասէ՛ր Փրկիչ, խնայէ՛ մեզի, յատկապէս Արցախահայութեանը, դո՛ւն, որ մեզ ստեղծողն ու աշխարհի կեանքն ես, փա՛ռք քեզի»:

Ս. Պատարագի աւարտին, դպրեվանեցիներն ու հաւատացեալ ժողովուրդը թափօր կազմած, «Ուրախ լեր» շարականի երգեցողութեամբ, ուղղուեցան Վեհարանի դահլիճ, ուր տեղի ունեցաւ Հայ եկեղեցւոյ սարկալազաց տօնին առիթով Դպրեվանքի սարկալազներուն պատրաստութեամբ գեղարուեստական յայտագիր մը: Յանուն Դպրեվանքի սարկալազաց դասուն Բարշ. Նշան Սրկ. Անտրեան, ուղերձ ընթերեց: Ան ըսաւ, թէ Ս. Ստեփանոս նախասարկալազին տիպարն ու կեանքը կը ներշնչեն Դպրեվանքի սաները ու կը մարմնաւորեն ծառայութեան նուիրական արժէքը եւ սուրբին օրինակին հետեւելով՝ կ'ամրապնդենք մեր հաւատքը, պատրաստ՝ դիմագրաւելու ամէն տեսակ մարտահրաւէրներ:

Նախասարկալազին նուիրուած շարականներու երգեցողութեան ու Բարշ. Հրակ Սրկ. Գրտանեանի կողմէ աւետարանական հատուածի մը ընթերցանութեան յաջորդեց Նորին Ս. Օծութեան Հայրապետական պատգամը:

Իր պատգամին մէջ, ինչպէս յաճախ, Վեհափառ Հայրապետը ընդգծեց ծառայութիւնը եւ յատկապէս լուսարձակի տակ առաւ անսակարկ ծառայութեան արժէքը: Ան դիտել տուաւ, որ «Ճշմարիտ ու իսկական ծառայութիւնը առանց ակնկալութեան ու գնահատանքի եւ առանց որեւէ մէկ սպասում ունենալու ծառայելն է. ա՛յս է իսկական ծառայութեան առանցքը, իմաստը ու նպատակը եւ Քրիստոսի կողմէ մեզի փոխանցուած ծառայելու ուսուցումն ու թելադրութիւնը»: *Խօսելով սուրբերուն ունեցած դերակատարութեան մեր կեանքէն ներս՝ Վեհափառ Հայրապետը յայտնեց, որ «Սուրբերը կարիքը չունին մեր փառաբանանքին, այլ մենք ենք, որ կարիքը ունինք անոնց կեանքէն, գործէն ու վկայութենէն քառազայթող արժէքներուն, շնորհներուն, աղօթներուն ու բարեխօսութեան»:* Ապա, առանձնացնելով Ս. Ստեփանոսը՝ իր խօսքին մէջ ան ընդգծեց նա-



խասարկաւազին համեստ ու խոնարհ նկարագիրը, որուն շնորհիւ ան կարողացաւ ըլլալ իր ժողովուրդին հետ եւ նոյնացաւ իր ժողովուրդի տագնապներուն: Նորին Սրբութիւնը շեշտեց, որ «Բոլորս, սկսեալ Դպրեվանքէն ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութենէն, կոչուած ենք այնպիսի՝ ծառաներ դառնալու ու միաժամանակ կազմաւորուելու, որոնք կը ծառայեն վեհ ու սրբազան նպատակներու՝ կը կրկնեմ, առանց գնահատանքի ու սպասումի: Այսօր մեր ժողովուրդը որքա՛ն կարիք ունի նշմարիտ ծառայութեամբ ծառայողներու՝ Հայաստանէն ու Արցախէն սկսեալ, մինչեւ Լիբանան, Սուրիա եւ ի Սփիւռս աշխարհի»: Աւարտին Հայրապետը յայտնեց, որ մեր ժողովուրդին կարիքները այսօր այնքա՛ն բազում են, որ պէտք ունինք այնպիսի ծառաներու, որոնք իրենց կեանքը կ'արժեւորեն միայն ու միայն համեստ, իրաւ, անկեղծ ու հարազատ ծառայութեամբ:

Հայրապետական պատգամէն ետք, Նորին Ս. Օծութիւնը «Պահպանիչ» աղօթքով օրհնեց Դպրեվանքն ու սարկաւազաց դասը եւ ներկայ հաւատացեալ ժողովուրդը: Գեղարուեստական յայտագիրը իր աւարտին հասաւ «Կիլիկիա» մաղթերգով:

Կարեւորութեամբ յայտնենք, որ Ս. Ստեփանոս նախասարկաւազին ու նախավկային տօնին առիթով, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկիա» թանգարանին մէջ ի պահ դրուած սուրբին սրբազան մասունքը (այլ սրբազան մասունքներու կողքին) դուրս բերուեցաւ եւ զետեղուեցաւ եկեղեցւոյ մէջ: Ս. Պատարագի աւարտին, հաւատացեալներ երկիւղածութեամբ մօտենալով սրբազան մասունքին՝ ստացան անոր օրհնութիւնը:

ԹԵՄԱ ԿԱՆ

**ԳԵՐՇ. Տ. ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ԲԵՐԻՈՅ ՅԱՅՈՑ ԹԵՄԻՆ**

Ուրբաթ, 2 Դեկտեմբերին, Հալեպի Ազգային առաջնորդարանին մէջ գումարուեցաւ Բերիոյ Հայոց Թեմի Ազգային երեսփոխանական ժողովի 172-րդ նիստը՝ օրակարգ ունենալով թեմակալ առաջնորդի ընտրութիւնը: Ընդառաջելով թեմի Ազգ. Վարչութեան փափաքին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը միաբան հայրերէ բաղկացած եռանուն ցանկ մը դրկած էր: Երեսփոխանական ժողովը Հայրապետական պաշտօնագիրը ընթերցելէ ետք, փակ քուէարկութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երէց միաբաններէն Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեանը միաձայնութեամբ ընտրեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ:



Արդարեւ, Երեսփոխանական ժողովի դիւանը պաշտօնական նամակով մը Վեհափառ Հայրապետը տեղեակ պահեց ընտրութեան արդիւնքներուն մասին՝ հայցելով ընտրութեան վաւերացումը: Նորին Ս. Օծութիւնը Հայրապետական 3 Դեկտեմբեր 2022 թուակիր պաշտօնագրով իր հայրական օրհնութիւնը փոխանցեց ժողովի անդամներուն եւ վաւերացուց Բերիոյ Հայոց Թեմի առաջնորդական ընտրութիւնը: Վեհափառ Հայրապետը շնորհաւորեց Բերիոյ թեմը եւ յաջողութիւն մաղթեց իրագործելի բոլոր ծրագիրներուն ու աշխատանքներուն համար:

Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեան, աւագանի անունով Եսայի, ծնած է Պէյրութ, 21 Մարտ 1972 թուականին: Նախնական կրթութիւնը ստացած է Այնճարի ազգային Յառաջ-Գալուստ Կիւլպէնկեան վարժարանին մէջ, իսկ երկրորդական ուսումը՝ յիշեալ եւ Պուրճ Համուտի Շամիլեան-Թաթիկեան վարժարաններուն մէջ:

1999 թուականին մուտք գործած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք եւ աւարտելով ուսումնական-կրթական ծրագիրը, 20 Մայիս 2001-ին, ձեռնադրուած եւ օծուած է կուսակրօն քահանայ՝ ձեռամբ Գերշ. Տ. Վարուժան Արք. Հերկելեանի: Մայրավանքէն եւ Դպրեվանքէն ներս Մակար Սրբազան ստանձնած է զանազան պատասխանատուութիւններ՝ Դպրեվանքի հսկիչ եւ դասախօս, Մայր Տաճարի դպրապետ եւ լուսարարապետ, ինչպէս նաեւ քրիստոնէական դաստիարակութեան բաժանմունքի վարիչ եւ կիրակնօրեայ դպրոցներու տեսուչ: Վեհափառ Հայրապետին տնօրինումով առաջնորդ սրբազանը նաեւ ծառայած է Թեսաղոնիկէի (Յունաստան) մէջ՝ որպէս հոգեւոր հովիւ եւ Թեհրանի Հայոց Թեմէն ներս՝ իբրեւ առաջնորդական փոխանորդ:



ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄ

**ՌԻԹԱ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒԵՑԱԻ
«Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՇՔԱՆՇԱՆՈՎ**

Ուրբաթ, 4 Նոյեմբերի երեկոյեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի օրհնութեամբ եւ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Ս. Եպս. Տօնոյեանի ձեռամբ, Ազգ. Առաջնորդարանի մէջ «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով պարգեւատրուեցաւ վաստակաշատ կրթական մշակ՝ Տիկին Ռիթա Գաբրիէլեան: Հայրապետական կոնդակի ընթերցումը կատարեց Գերպ. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան:



Այս առիթով, Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց Տիկին Գաբրիէլեանի՝ իբրեւ ուսուցիչ եւ կրթական մշակ աւելի քան չորս տասնամեակի ուսուցչական եւ կրթական ծառայութիւնը՝ Լիբանանի Ազգ. Սոփիա Յակոբեան Քոլէճէն սկսեալ մինչեւ Լոս Անճելըսի Ազգ. Շամլեան վարժարանի փոխ տնօրէնի պաշտօնը:

Հանդիսութեան ներկայ էին՝ Ազգ. վարչութեան անդամ Տիար Գեւորգի Պաղտասարեանը, Ազգ. Խնամակալ մարմինի ատենապետ Տիար Սարգիս Ուրֆալեանը, անդամներ՝ Դոկտ. Յասմիկ Պարանն ու Արմէն Աբրահամեանը: Խնամակալ մարմինի սրտագին շնորհակցութիւնները փոխանցեց՝ Տիկին Պարան, մինչ Ազգ. Շամլեան վարժարանի Տնօրէնուհի Տիկին Թալին Քարկոտորեան Տիկին Գաբրիէլեանի պարգեւատրումը նկատեց հայ մշակոյթի նուիրեալներու ուղղուած գնահատանքի բարձրագոյն արտայայտութիւն:

Իր կազին, Տիկին Ռիթա Գաբրիէլեան, շնորհակալական խօսք ուղղեց Վեհափառ Հայրապետին, Առաջնորդ Սրբազանին, բոլոր խօսք առնողներուն եւ իր անսահման ուրախութիւնը յայտնեց ամբողջ 41 տարի իր անձն ու ժամանակը նորահաս սերունդներու դաստիարակութեան գործին նուիրաբերած ըլլալուն համար:



ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

**ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ**

Շաբաթ, 5 Նոյեմբերին, Անթիլիասի Մայրավանքի իր գրասենեակին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց միջ-եկեղեցական պատասխանատուներ՝ Զուհիցերիայէն, Գերմանիայէն, Դանիայէն, Ֆինլանտայէն, Ամերիկայէն, Եգիպտոսէն, որոնք Լիբանան ժամանած էին խորհրդակցութիւններ ունենալու Միջին Արեւելքի մէջ քրիստոնէական ներկայութեան ու վկայութեան գծով եւ իրենց զօրակցութիւնը յայտնելու շրջանի եկեղեցիներուն՝ Միջին Արեւելքի եկեղեցիներու Խորհուրդին (Մ.Ա.Ե.Խ.) ճամբով:

Պատուիրակութիւնը երկօրեայ քննարկումներ կատարած էր յիշեալ Խորհուրդի պատասխանատուներուն հետ, թէ ի՞նչ ձեւով վերոյիշեալ երկիրներու եկեղեցիները գործնապէս կրնան նպաստել Խորհուրդի կարգ մը ծրագիրներուն: Նկատի ունենալով Վեհափառ Հայրապետին երկար տարիներու միջ-եկեղեցական հարուստ փորձառութիւնը, պատուիրակութեան անդամները փափաք յայտնած էին Հայրապետին հետ եւս հանդիպում ունենալու:



Նորին Ս. Օծուկիները նախ ընդհանուր գծերով ներկայացուց միջազգային մակարդակի վրայ միջ-եկեղեցական շարժումին դիմագրալած մարտահրավերները, ապա լայնօրէն անդրադարձաւ Միջին Արեւելքի եկեղեցիներու միջ-եկեղեցական գործակցութեան: Այս ծիրին մէջ Նորին Սրբուկիները կարգ մը մատնանշումներ կատարեց՝ շեշտելով եկեղեցիներու հաւաքական աշխատանքը աւելի ամրապնդելու եւ կրթական ու մարդասիրական ծառայութիւնը ծաւալելու անհրաժեշտութիւնը: Աւարտին, Հայրապետը պատասխանեց իրեն ուղղուած հարցումներուն:

Նորին Ս. Օծուկեան հետ ունեցած հանդիպումէն ետք, պատուիրակութիւնը այցելեց Մայր Տաճար, Սրբոց Նահատակաց յուշարձան եւ «Կիլիկիա» թանգարան:

Յայտնենք, որ հանդիպման ներկայ էին՝ Մ.Ա.Ե.Խ.-ի ընդհանուր քարտուղար դոկտոր Միշէլ Ապսը եւ օգնական ընդհանուր քարտուղար Սեդա Խըարշեանը:



ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ՄԱՍՆԱԿՅԵՅԱՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐՈՒ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

7-11 Նոյեմբերին, Վանգուվըրի (Գանատա) մէջ տեղի ունեցաւ Եկեղեցական Ընտանիքներու Քարտուղարներու տարեկան համագումարը, որուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ներկայացուց Կաթողիկոսարանի միջ-եկեղեցական բաժանմունքի վարիչ՝ Գերպ. Տ. Հրանդ Մ. Վրդ. Թահանեանը: Համաճարակէն ետք սա առաջին հանդիպումն էր, որ կայացաւ ժողովականներու Ֆիզիքական ներկայութեամբ:

Իւրաքանչիւր եկեղեցույ միջ-եկեղեցական յարաբերութեան աշխատանքներու վարիչ, ժողովին պարզեց իր զեկոյցը: Հայր Հրանդը իր տեղեկագիրին մէջ ընդգծելէ ետք մեր Ս. Աթուին միջ-եկեղեցական իրագործումներն ու տարրուող աշխատանքները, ինչպէս նաեւ ապագայի ծրագիրները, լուսարձակի տակ առաւ Արեւելեան Ուղղափառ եւ այլ եկեղեցիներու միջեւ գոյութիւն ունեցող ու ընթացող երկխօսութիւնները: Այս ծիրին մէջ Հայր սուրբը անդրադարձաւ նաեւ Միջին Արեւելքի քրիստոնէութեան ներկայութեան, յատկապէս Լիբանանի եւ անոր դիմագրալած տնտեսական ու ընկերային տագնապներուն՝ շեշտելով միջազգային համայնքին զօրակցութեան անհրաժեշտութիւնը:

Ժողովի ընթացքին յատուկ ուշադրութեան առարկայ դարձաւ Արցախի հիմնախնդիրը, ուր ժողովականները դատապարտեցին Ազրպէյճանի կողմէ նախադրձակ զինուորական գործողութիւնները Արցախի ինքնանկախ իշխանութեան դէմ, ինչպէս նաեւ միջազգային համայնքին անարդար մօտեցումը հարցի լուծման գծով: Այս առիթով ժողովական հայրերը վերահաստատեցին իրենց զօրակցութիւնը Հայաստանի ու Արցախի հանրապետութեանց, նաեւ աղօթք բարձրացուցին ընդհանրապէս եկեղեցիներու միութեան համար:



ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ Մ.Ա.Ե.Խ.-Ի ԳՈՐԾԱԴԻՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ

28–29 Նոյեմբերին, Լիբանանի լատին համայնքին պատկանող Ալ Պիր վանքի դահլիճին մէջ, Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի (Մ.Ա.Ե.Խ.) Գործադիր վարչութեան ժողովը իր անդրանիկ նիստը գումարեց: Յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մասնակցեցան՝ Հոգչ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան եւ Մէն Ժողէֆ եւ Հայկազեան համալսարաններու դասախօս դոկտ. Ժան Սալմանեան: Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան, իբրեւ անդամ Գործադիր վարչութեան, չկրցաւ ներկայ գտնուիլ ժողովին:

Ժողովականները երկու օրուան վրայ տարածուած աշխատանքով քննարկեցին Մ.Ա.Ե.Խ.-ի կառույցին եւ առաքելութեան հետ առնչուած հարցեր, որոնք փոխանցուած էին Մայիս 2022-ին Եգիպտոսի մէջ կայացած Խորհուրդի 12-րդ համաժողովին կողմէ: Ընդհանուր քարտուղար դոկտ. Միշէլ Ապս խորհուրդի վերջին վեց ամիսներու գործունէութեան մասին իր տեղեկագիրը ներկայացուց: Ապա, ժողովականները լայնօրէն քննարկեցին խորհուրդի ծրագրային, վարչական, տնտեսական ու յարաբերական երեսներուն առնչուած շարք մը հարցեր ու որդեգրեցին համապատասխան որոշումներ: Գործադիր վարչութեան լիակատար նիստերու երկրորդ օրուան առաջին նիստը յատկացուեցաւ երիտասարդներուն, որոնք Միջին Արեւելքի զանազան շրջաններէն Լիբանան ժամանած էին՝ տեղույն երիտասարդութեան դիմագրաւած դժուարութիւններն ու մարտահրաւէրները ներկայացնելու ժողովին:

Ժողովը վաւերացուց ընդհանուր քարտուղարին երեք գործադիր գործակիցները՝ Կաթողիկէ, Աւետարանական եւ Արեւելեան Ուղղափառ եկեղեցական ընտանիքներէն նշանակուած: Օրհնութեամբ եւ տնօրինումով Ն.Ս.

Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Արեւելեան Ուղղափառ ընտանիքին կողմէ յիշեալ պաշտօնին նշանակուեցաւ՝ տիկին Սեղա Խտըշեանը: Գործադիր վարչութիւնը նաեւ քննեց երկու տարի ետք Մ.Ա.Ե.Խ.-ի հիմնադրութեան 50-ամեակին առիթով կայանալիք Համաժողովին եւ տեղի ունենալիք հանդիսութիւններուն առնչուած ծրագիրները:

Յայտնենք, որ Նորին Ս. Օծութիւնը յաջորդական երկու շրջաններուն՝ «2006-2016», նախագահներէն մէկն էր յիշեալ խորհուրդին եւ Ամմանի մէջ գումարուած 11-րդ Համաժողովին Վեհափառ Հայրապետը ընտրուած էր պատուոյ նախագահ Մ.Ա.Ե.Խ.ին:



**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ KAICIID-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ
«ԿԻՆԵՐ՝ ԵՐԿԵՕՍՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ» ՓԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԻՆ**

Ապտալլա Բ. Թագաւորի Միջ-կրօնական եւ Միջ-մշակութային Երկխօսութեան Միջազգային Կեդրոնին (KAICIID) կազմակերպած «Կիներ՝ Երկխօսութեան Համար» (Հիյա լիլ Հիուար - She For Dialogue) ծրագիրը, Լիգալոնի մէջ կայացուց իր երրորդ եւ վերջին հանգրուանը: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ մասնակից Արազ Գոճայեանը, հետեւելէ ետք միամեայ ծրագիրին եւ լիբանանեան մակարդակի վրայ կիրառելէ ետք ձեռք բերուած գիտելիքներն ու հմտութիւնները, աւարտեց ծրագիրը եւ ստացաւ վկայական:

Միջ-կրօնական եւ միջ-եկեղեցական երկխօսութեան նպաստող զանազան ծրագիրներու ծիրին մէջ, KAICIID, համագործակցաբար Արաբական Աշխարհին Մէջ Երկխօսութեան եւ Համագործակցութեան Միջ-կրօնական Հարթակին (IPDC)-ին, առաջին անգամ ըլլալով կը ձեռնարկէ կիրներու դերակատարութիւնը զարգացնող եւ ամրապնդող ծրագրի մը: Այս ծրագիրին նախաքայլին արաբական աշխարհի հինգ երկիրներէ՝ Մէուտական Արաբիա, Իրաք, Եգիպտոս, Սուրիա եւ Լիբանան, մասնակից քաղաքական եւ կրօնական ոլորտներու մէջ կին գործիչներ հետեւեցան միամեայ ծրագրի՝ ունենալով երեք հիմնական հանդիպումներ, որոնցմէ առաջինը տեղի ունեցաւ առցանց (Մայիս 2021-ին), երկրորդը՝ Յորդանանի մէջ (25-29 Մարտ 2022-ին) եւ երրորդը՝ Փորթուկալի (13-17 Նոյեմբեր 2022-ին):

Վկայականաց բաշխումը տեղի ունեցաւ 17 Նոյեմբերի երեկոյեան՝ ներկայութեամբ Փորթուկալի մէջ արաբական երկիրներու ղեսպաններու, պատկան մարմիններու, KAICIID-ի տնօրէնութեան եւ բարեկամներու: Խօսք առին կեդրոնի ծրագիրներու տնօրէն՝ Տավիտ Քափեչչի եւ արաբական աշխարհի ծրագիրներու վարիչ՝ Ուասիմ Հատտատ:

Նշենք, որ նախքան Լիզպոն մեկնելը, Գոճայեանն ու Լիբանանէն այլ չորս մասնակիցներ Մեթնի եւ Սայտայի մէջ կազմակերպեցին երկրօրեայ վարժանիստեր, մասնակցութեամբ հայ եւ կաթողիկէ եկեղեցիներու, սիւնի, շիիթ եւ տիւրզի համայնքներու, 19-էն 25 տարեկան երիտասարդներու, իսկ Պէյրութի եւ Պաալպէքի մէջ՝ միջ-կրօնական երկխօսութեան մէջ գործօն անհատներու մասնակցութեամբ միօրեայ համագումարներ:



ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ «ԼՍԵԼ ԱՐԵԻԵԼԵՐ» ԽՈՐԱԳՐԵԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

22-27 Նոյեմբերին, կազմակերպութեամբ «Փրօ Օրիանթ»-ին (PRO ORIENTE) եւ Հռոմի «Անճելիֆոլմ» քահանայապետական համալսարանին (Pontifical University of Saint Thomas Aquinas, Angelicum), միջազգային միջ-եկեղեցական գիտաժողով մը գումարուեցաւ՝ «Լսելով Արեւելքը» խորագրեալ: Սոյն գիտաժողովին յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան իր մասնակցութիւնը բերաւ՝ Կարէն Սրկ. Եօսուէքանեանը:

Գիտաժողովը կը միտէր, ինչպէս խորագիրը կը յուշէ, լսել Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներուն ժողովական տարբեր պատկերացումներն ու փոր-

ձառույթիւնները: Այս գծով զեկոյցներ ներկայացուեցան Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու (Հայ, ասորի, ղպտի, հապէշ, մալապար) եւ Ասորեստանի Արեւելեաններու (նեստորական ասորի, հին արեւելեան) ներկայացուցիչներու կողմէն, ինչպէս նաեւ տարբեր մասնագէտներու: Զեկոյցներու եզրակացումները պիտի ներկայացուի կաթողիկէ սինոտական ծրագիրին, որ 2021-ին յառաջացած է Ֆրանսիս Պապին կողմէ՝ երիտասարդացնելու համար կաթողիկէ եկեղեցւոյ կանոնն ու ժողովական հասկացողութիւնը:



Կարէն սարկաւազը զեկուցեց Հայ Եկեղեցւոյ կեանքին մէջ երիտասարդներու մասնակցութիւնն ու իրաւունքը նիթին շուրջ: Գիտաժողովին ներկայացուեցան նաեւ Հայ Եկեղեցւոյ Ազգային Ընդհանուր Ժողովին ու Սահմարութեան մասին, որուն ընդմէջէն խօսուեցաւ ժողովական հասկացողութեան, կանանց, երիտասարդներուն եւ ընկերութեան մէջ գործող զանազան խաւերուն մասնակցութեան մասին:

Քննարկումներ եղան տարբեր ակնառու եւ ժամանակակից հրատապ երեւոյթներու շուրջ, որոնց համար կոչ ուղղուեցաւ գործունէութիւններ յառաջացնել, որպէսզի ընտանիքի ու ընկերութեան բոլոր անդամներուն ձայները հասանելի դառնան եկեղեցական կեանքին եւ իրաւունքներու պահպանումը կիրարկուի ժամանակակից աշխարհին մէջ:

Նշենք, որ «Փրօ Օրիանթ»-ն հիմնուած է շուրջ վաթսուն տարի առաջ՝ բարելաւելու համար Կաթողիկէ եւ Ուղղափառ ընտանիքներուն փոխ յարաբերութիւնները:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ

ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԱՅՅԵԼԵՑԻՆ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Կիրակի, 6 Նոյեմբերին, Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուած Ս. Եւ Անմահ Պատարագէն ետք, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը Վեհարանի դահլիճին մէջ ընդունեց Մայրավանքի Կիրակնօրեայ վարժարանի աշակերտները, գլխավորութեամբ տնօրէնուհի Ժանին Դանիէլեանի: Դանիէլեան խօսք առնելով՝ Հայրապետին զեկուցեց անցեալ տարւորջանի Կիրակնօրեայ վարժարանին գործունէութեան մասին եւ յայտնեց յառաջիկայ տարուան ծրագիրներն ու աշխատանքները: Ապա, աշակերտները իրենց սորված սաղմոսներէն, շարականներէն ու աղօթքներէն փունջ մը ներկայացուցին Վեհափառ Հօր:

Հոսկ, Նորին Ս. Օծովիւնը փոխանցեց իր հայրական խօսքը: Ան, առաջին հերթին, կարեւորութեամբ շեշտեց Կիրակնօրեայ վարժարաններու դերակատարութիւնը հայ կեանքէն ներս եւ ընդգծեց անոնց ճամբով մեր մանուկներուն քրիստոնէական դաստիարակութիւն ջամբելու հրամայական անհրաժեշտութիւնը: Այս յանձնառութեամբ ու գիտակցութեամբ մեր Կիրակնօրեայ վարժարանները լծուած են իրենց վստահուած եզակի առաքելութեան: Իր խօսքի աւարտին, Վեհափառ Հայրապետը բարձրօրէն գնահատեց բոլոր նուիրեալ ուսուցիչներն ու պատասխանատուները, որոնք կամաւորաբար եւ անձնուիրաբար լծուած են եկեղեցաշէն ու ազգաշէն այս սրբազան ծառայութեան: Այս առիթով Հայրապետը նաեւ իր գնահատանքը յայտնեց աշակերտներու ծնողներուն, որոնք իրենց զաւակները կ'առաջնորդեն դէպի կիրակնօրեայ վարժարան եւ կը գիտակցին, որ մեր ազգը առողջ երիտասարդութիւն ունենալու համար, հարկ է այսօրուան մանուկը դաստիարակել՝ քրիստոնէական ու հայեցի դաստիարակութիւն ջամբելով անոր:



Հ.Ե.Հ.Ո.Մ.

**Հ.Ե.Հ.Ո.Մ.-Ի ՆՈՐԸՆՏԻՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
ԱՅՅԵԼԵՑ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Երկուշաբթի, 31 Հոկտեմբերի երեկոյեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանիին տակ գործող Հայ Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան (Հ.Ե.Հ.Ո.Մ.) նորընտիր վարչութիւնը, գլխաւորութեամբ միութեան հոգեւոր խորհրդատու Հոգչ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի, այցելեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին եւ ստացաւ անոր հայրական օրհնութիւնը:

Հոգեւոր խորհրդատու հայր սուրբը ընդհանուր գիծերով ներկայացուց նախորդ վարչութեան տարած աշխատանքները եւ յայտնեց Հ.Ե.Հ.Ո.Մ.-ին վարչական, յարաբերական, դասախօսական եւ 60-ամեակին առնչուած նոր վարչութեան յառաջիկայ ծրագիրները: Ապա, իւրաքանչիւր անդամ պարզեց իր պատասխատանութեան առնչուած աշխատանքները:

Իր կարգին, Նորին Սրբութիւնը գնահատեց տարուող գործունէութիւնը՝ վերաշէտելով երիտասարդութեան վիճակուած կարեւոր դերակատարութիւնը մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին կեանքէն ներս:



ՆԱՐԵԿԱՑԻ ԵՐԳՉԱԽՈՒՄԻ

**ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ «ՆԱՐԵԿԱՑԻ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ
ԵՐԳՉԱԽՈՒՄԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ
ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Չորեքշաբթի, 2 Նոյեմբերի երեկոյան, Անթիլիասի Մայրավանքին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրեպետը ընդունեց Կաթողիկոսարանի «Նարեկացի» մանկապատանեկան երգչախումբի վարչուիները, գլխավորութեամբ խմբավար Հոգւ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանին:



Հայր սուրբը Վեհափառ Հայրապետին զեկուցեց մանկապատանեկան երգչախումբին անցնող տարուան գործունէութեան մասին եւ պարզեց յառաջիկայ տարուան ծրագիրները: Ան յայտնեց, որ երգչախումբը պիտի սորվի Հայրենասիրական ու ազգագրական երգեր, որպէսզի Սրբոց Թարգմանչաց Վարդապետաց տօնին առիթով մանուկներն ու պատանիները հանրութեան ներկայանան ելոյթով մը:

Լսել է ետք հայր սուրբին ու վարչութեան անդամներուն ծրագիրներուն ու աշխատանքներուն մասին, Նորին Ս. Օծութիւնը գնահատեց բոլոր պատասխանատուները՝ ի տես եկեղեցասէր ու հայրենասէր գործունէութեան, որ կը միտի մեր ազգի նոր սերունդին կրօնական ու ազգային դաստիարակութեան: Այս առիթով Հայրապետը նաեւ իր բարձր գնահատանքը յայտնեց երգչախումբի բոլոր կամաւոր պատասխանատուներուն, որոնք ամէն շաբաթ, սիրայօժար կերպով, իրենց ընտանեկան պարտաւորութիւններուն առընթեր, կու գան Մայրավանք եւ կը լծուին ազգաչէն ու եկեղեցաչէն առաքելութեան:

Աւարտին, Նորին Սրբութիւնը իր օրհնութիւնն ու հայրական սէրը փոխանցեց երգչախումբի վարչութեան ու մանուկներուն եւ նորանոր նուաճումներով լեցուն տարեշրջան մը մաղթեց անոնց:



ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ

**ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՒ
ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ ՆԻԹԵՐՈՒ
ԴԱՍԸՆԹԱՑՔ ԱՆԹԻԼԻԱՍԻ
ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

Երկուշաբթի, 31 Հոկտեմբերին, օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքի «Կիլիկիա» թանգարանի սրահին մէջ, ընթացք առաւ իմաստասիրական եւ բարոյագիտական նիւթերու շուրջ դասախօսական շարք:

Յիշեալ դասախօսական շարքը ներկայացուց Նորին Ս. Օծութեան հրաւերով Գերմանիայէն Մայրավանք ժամանած դոկտոր Սարգիս Զեհեաեան: Դոկտ. Զեհեաեան Կաթողիկոսարանի ՀԱՍԿ պաշտօնական ամսաթերթին մէջ ստորագրած է բազմաթիւ իմաստասիրական յօդուածներ եւ հեղինակած իմաստասիրական բնոյթ ունեցող երկեր, որոնցմէ մէկը շուրջ տարի մը առաջ Անթիլիասի Մայրավանքի տպարանէն լոյս տեսաւ «ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ – Փիլիսոփայական ակնարկ» հատորը:

31 Հոկտեմբերէն 15 Նոյեմբեր երկարող դասախօսութիւններուն մասնակցեցան Մայրավանքի Հայագիտական Կեդրոնի ուսանողները, վանաբնակ միաբան հայրերը եւ Դպրեվանքի սարկաւազները:

Իմաստասիրական բարոյագիտութեան համապարփակ պատկերը բովանդակող դասախօսական շարքին նիւթերն էին.-

- Ներածութիւն փիլիսոփայութեան
- Ներածութիւն բարոյագիտութեան
- Պարտագիտական բարոյագիտութիւն (Deontological Ethics)

- Նպատակաբանական բարոյագիտութիւն (Teleological Ethics)
- Առաքինութեան բարոյագիտութիւն (Virtue Ethics)
- Չգացումի բարոյագիտութիւն (Moral Sense Ethics)
- Զննախօսութեան բարոյագիտութիւն (Discourse Ethics)
- Բարոյագիտութեան քննադատութիւն (Critique of Ethics)

**Հ.Մ.Ը.Մ.-Ի ՄԵԾ ԸՆՏԱՆԻՔԸ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

Նոյեմբեր ամսուան ընթացքին Լիբանանի մէջ տեղի ունեցաւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան (Հ.Մ.Ը.Մ.) Կեդրոնական Վարչութեան լիակատար նիստը, ինչպէս նաեւ իր աշխարհատարած շրջաններու վարչութիւններու միատեղ հանդիպումը:

Այս առիթով, Կիրակի, 13 Նոյեմբերին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուած Ս. եւ Անմահ Պատարագի աւարտին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, տեղի ունեցաւ հոգեհանգստեան կարգ՝ Հ.Մ.Ը.Մ.-ի նահատակներու եւ ննջեցեալներու հոգիներու խաղաղութեան համար:

Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութիւնն ու խորհրդատուական մասնակից բոլոր անդամները Ս. Պատարագէն անմիջապէս ետք ուղղուեցան Հայոց Ցեղասպանութեան նահատակներու նշխարները պարունակող Սրբոց Նա-

հատակաց մատուռ՝ մատուցելու իրենց յարգանքի տուրքը սրբացեալ նահատակներուն: Ապա, Միութեան շեփորախումբը հնչեցուց Լիբանանի, Յայաստանի ու Հ.Ս.Ը.Մ.-ի քայլերգները, ինչպէս նաեւ «Ի վեհ բարձանց» ու «Կիլիկիա» մաղթերգները: Յիշեալ ամփոփ յայտագրէն անմիջապէս ետք Միութեան պատասխանատուները եւ խորհրդաժողովի մասնակիցները բարձրացան Վեհարան՝ ստանալու Վեհափառ Հայրապետին օրհնութիւնն ու հայրական յորդորները:

Հանդիպման ընթացքին, Հ.Ս.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ Վաչէ Նաճարեան Նորին Ս. Օծութեան յանձնեց Միութեան կողմէ պատրաստուած յուշանուէր մը, որուն վրայ քանդակուած էր Հայրապետին հետեւեալ խօսքը. «Հ.Ս.Ը.Մ.-ը սովորական իմաստով մարմնամարզական կազմակերպութիւն մը չէ, այլ առաքելութիւն է՝ իր էութեամբ ու նպատակով»:

Վեհափառ Հայրապետը ողջունելով Միութեան անդամներուն ներկայութիւնը՝ ըսաւ, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր համահայկական առաքելութեամբ ո՛չ միայն հոգեւոր տունը դարձած է ողջ հայութեան, այլ նաեւ ազգային տունը՝ մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն, առանց խտրութեան: «Անթիլիասին խօսքը իր գործն է: Այս յանձնառութեամբ իր առաքելութիւնը կը կատարէ Հայրապետական այս Ս. Աթոռը: Անոր առաքելութիւնը միայն կրօնական պարունակի մէջ պէտք չէ դիտել, այլ՝ համաժողովրդային ու համահայկական: Այս առաքելութեան մշակներն են, հայ հոգեւորականին կողքին, ազգանուէր գործունէութիւն ծաւալող մեր միութիւնները ու կազմակերպութիւնները, որոնցմէ մէկն է Հ.Ս.Ը.Մ.-ը», յայտնեց Հայրապետը: Լուսարձակի տակ բերելով միութեան կարեւոր դերը հայ կեանքէն ներս՝ ան շեշտեց, թէ հայրենիքին ու ազգին գերագոյն իտ-

եալներուն իրականացման նկատմամբ մեր ունեցած հաւաքական առաքելութեան մէջ կարեւոր տեղ գրաւած է Հ.Ս.Ը.Մ.-ը: «Անիկա սոսկ մարմնակրթական կազմակերպութիւն մը ըլլալէ անդին, մեր ժողովուրդի հոգեւոր, բարոյական, ազգային, մշակութային ու պահանջատիրական արժէքները իր մէջ բովանդակող միութիւն մը եղած է», ըսաւ Վեհափառ Հայրապետը:

Հանդիպումէն ետք խորհրդաժողովի մասնակիցները բարձրացան Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանք: Անոնք Դպրեվանքի տեսչութեան առաջնորդութեամբ ուղղուեցան Հայոց Ցեղասպանութեան նահատակներու ու վերածնունդի յուշարձան, գետեղեցին ծաղկեպսակ եւ աղօթք բարձրացուցին առ Աստուած բոլոր նահատակ հայորդիներու հոգիներու խաղաղութեան համար:

ՀԱՍԱԶԳԱՅԻՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Համազգայինի Կեդրոնական Վարչութիւնը Լիբանանի մէջ ունեցած իր լիակատար նիստերէն ետք այցելեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին: Վարչութեան ատենապետ՝ Չաքար Զէշիշեան ընդհանուր գիծերով ներկայացուց Համազգայինի Կեդրոնական Վարչութեան յառաջիկայ ծրագրային առաջնահերթութիւններն ու աշխատանքային ուղեգիծը:

Վեհափառ Հայրապետը իր ջերմ գնահատանքը յայտնեց Համազգայինի կատարած կրթական ու մշակութային գործունէութեան: Ան ողջունեց Մարսէյի ճեմարանը նոր կառուցներով ընդարձակելու Համազգայինի կարեւոր իրագործումը: Խօսելով մշակոյթի մարզէն ներս Համազգայինի դերակատարութեան մասին, Նորին Ս. Օծութիւնը, ներկայ ժամանակներուն ակելի քան երբեք, առանցքային համարեց

անոր աշխատանքը, երբ հայ կեանքէն ներս սկսած են նահանջել մեր մշակութային արժէքները: Հայու ինքնութեան պահպանման մեր պայքարին մէջ կենսական է մշակոյթը: Մեր մշակոյթին պահպանը ու առաքեալը դարձած է Համազգայինը, Հայ Եկեղեցւոյ կողքին: Ան նաեւ անդրադարձաւ տասնամեակներու վրայ տարածուած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Համազգայինի միջեւ գոյութիւն ունեցող գործակցութեան եւ շեշտեց այդ գործակցութիւնը աւելի ամրապնդելու կարելորութիւնը հայակերտումի՝ Արեւմտահայերէնի պաշտպանութեան եւ մշակոյթի այլ կալուածներէն ներս:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԸՆԴՈՒՄՆԵՑ ՎԵՐ. ՓՕԼ ՀԱՅՏՈՍՍԹԵԱՆԸ
ԵՒ ՎԵՐ. ՄԿՐՏԻՉ ԳԱՐԱՎԵՕԶԵԱՆԸ**

Երեքշաբթի, 15 Նոյեմբերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցաւ Վեր. Դոկտ. Փօլ Հայտոսթեանի եւ Վեր. Մկրտիչ Գարավեօզեանի հետ:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Լիբանանի հայութեան եւ այժմու կացութեան, Հայկազեան համալսարանին եւ Ազունիէյի Ազգային Բուժարանին հետ առնչուած հարցեր:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ վերաշեշտելու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ տասնամեակներու վրայ տարածուած գործակցութիւնը, թե՛ Կաթողիկոսարանի եւ թե՛ թեմերու մակարդակի վրայ:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՄՆԵՑ
ԱՅՏԵՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ
ՄՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ**

Չորեքշաբթի, 16 Նոյեմբերին, Վեհափառ Հայրապետին այցելեց Հայ Օգ-

նութեան Միութեան (Հ.Օ.Մ.) Կեդրոնական Վարչութիւնը՝ իր լրիւ կազմով: Հայաստանի, Արցախի, ինչպէս նաեւ Սփիւռքի զանազան գաղութները ներկայացնող Հ.Օ.Մ.-ի Կեդրոնական Վարչութիւնը՝ միշտ սերտ գործակցութիւն ունեցած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ իր թեմերուն հետ՝ ընկերային ծառայութեան, մարդասիրական օժանդակութեան եւ կրթական բնագաւառներէն ներս:

Հ.Օ.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետուհի Նայիրի Տերտերեան խօսք առնելով՝ ներկայացուց Հ.Օ.Մ.-ի տարած ծառայական գործունեութիւնը, համահայկական տարողութեամբ, եւ անոր յառաջիկայ առաջնահերթութիւնները: Նորին Ս. Օծութիւնը շերտօրէն ողջունելով Հ.Օ.Մ.-ի կատարած օժանդակութիւնները եւ մեր ժողովուրդի զաւակներուն ծառայելու անոր նուիրումը՝ յատկապէս անդրադարձաւ Սուրիոյ ու Լիբանանի հայութեան դիմագրաւած ընկերատնտեսական դժուարութիւններու ընթացքին՝ Միութեան կատարած նիւթական աջակցութիւնը: Խօսելով Սփիւռքի վերակազմակերպման մասին, Վեհափառ Հայրապետը շեշտեց, թէ բնականաբար առանց նուազեցնելու Արցախին ու Հայաստանին ուղղութեամբ կատարուող օժանդակութիւնները, անհրաժեշտ է յատուկ շեշտ դնել Սփիւռքի գաղութներու կարիքներու օժանդակութեան: Ան յիշեց, որ Լիբանանի ու Սուրիոյ հայութիւնը տակաւին կարիքը ունին նիւթական աջակցութեան, նկատի ունենալով տիրող տնտեսական տագնապը: Հետեւաբար, հրամայական է Հ.Օ.Մ.-ի զօրակցութիւնը յիշեալ երկու գաղութներուն, ըսաւ Վեհափառ Հայրապետը:

Ապա, Հ.Օ.Մ.-ի Կեդրոնական Վարչութիւնը յաջորդաբար այցելեց Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանք, Դըպրեվանք, ինչպէս նաեւ «Թռչնոց Բոյն»:

**Յ.Յ.Դ. ԲԻՐՈՅԻ ԼՐԻԻ ԿԱԶՄԸ
ԱՅՑԵԼԵՑ ՎԵՅԱՓՈԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Հինգշաբթի, 17 Նոյեմբերին, առաջ-
նորոգութեամբ բիւրոյի ներկայացուցիչ
Յակոբ Տէր Խաչատուրեանի, Հայ Յե-
ղափոխական Դաշնակցութեան (Հ.Յ.Դ.)
բիւրոն լրիւ կազմով այցելեց Ն.Ս.Օ.
Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին:

Աւելի քան երկու ժամ տեւած հան-
դիպման ընթացքին տեղի ունեցաւ
տեսակետերու փոխանակում, յատկա-
պէս Հայաստանը ու Արցախը դիմա-
գրաւող խնդիրներու ու մտահոգու-
թիւններու շուրջ: Թէ՛ Նորին Ս. Օծու-
թիւնը եւ թէ՛ Հ.Յ.Դ. բիւրոն կարեւորու-
թեամբ շեշտեցին Հայաստանն ու Ար-
ցախը ներկայ ճգնաժամային կացու-
թենէն դուրս բերելու եւ դէպի հզօրա-
ցում ու փրկութիւն առաջնորդելու
հրամայականը եւ այս ուղղութեամբ
հաւաքական աշխատանք տանելու
անյետաձգելի անհրաժեշտութիւնը:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ԼԻԲԱՆԱՆԻ ՄՕՏ ՍՈՒՐԻՈՅ ԴԵՄՊԱՆԸ**

Հինգշաբթի, 24 Նոյեմբերին, Ն.Ս.
Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապե-
տին այցելեց Լիբանանի մօտ Սուրիոյ
դեսպան՝ Ալի Ապտ Ալ-Զարիմ Ալի:

Աւելի քան ժամ մը տեւած հան-
դիպումին ներկայ էր նաեւ հայկական
երեսփոխանական պլոքի ներկայա-
ցուցիչ՝ Երեսփոխան Յակոբ Բագրա-
տունի:

Վեհափառ Հայրապետը իր շնորհա-
կալութիւնն ու գնահատանքը յայտնեց
դեսպանին՝ շուրջ 13 տարիներու իր
դիւանագիտական ծառայութեան ըն-
թացքին Սուրիոյ հետ Կաթողիկոսա-
րանին ունեցած յարաբերութեան մե-
ծապէս օգտակար հանդիսանալուն
համար: Նորին Ս. Օծութիւնը բարձր
գնահատեց նաեւ Սուրիոյ հայ հա-
մայնքին նկատմամբ պետութեան ցու-

ցաբերած օգտակարութեան համար:
Բագրատունի, իր կարգին, շնորհակա-
լութիւն յայտնեց դեսպանին Լիբանա-
նի հայ երեսփոխանական պլոքին եւ
դեսպանատան միջեւ զարգացած
սերտ գործակցութեան համար:

Դեսպանը յատուկ յարգանքով անդ-
րադարձաւ թէ՛ Լիբանանի եւ թէ՛ Սուր-
իոյ հայութեան, ինչպէս նաեւ հայ հա-
մայնքներու կրօնական ու հոգեւոր
պատասխանատուներուն որդեգրած
առողջ կեցուածքներուն՝ երկու երկիր-
ները յուզող հարցերուն ու տագնապ-
ներուն նկատմամբ:

Հանդիպման աւարտին, Վեհափառ
Հայրապետը յատուկ յուշանուէր մը
յանձնեց դեսպանին:

**ՎԵՅԱՓՈԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԻ
ՆՈՐԸՆՏԻՐ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆԸ**

Շաբաթ, 26 Նոյեմբերին, Ն.Ս.Օ.
Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին
այցելեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան
Կուսակցութեան (Ս.Դ.Հ.Կ.) Լիբանանի
Շրջանի Նորընտիր Վարիչ Մարմինը:
Ան եկած էր Վեհափառ Հայրապետին
օրհնութիւնը ստանալու իր յառաջիկայ
շրջանի գործունեութեան սկզբնաւորու-
թեան:

Նորին Ս. Օծութիւնը շնորհաւորեց
Նորընտիր Վարիչ Մարմինը եւ կարե-
ւորութեամբ անդրադարձաւ միջ-կու-
սակցական գործակցութեան նոր մը-
ղում տալու, Լիբանանի հայութեան
ներքին միասնականութիւնը ամրա-
պնդելու եւ անոր վերականգնումին
նոր թափ տալու հրամայականին:

Իր կարգին, Վարիչ Մարմինը շեշ-
տեց Լիբանանի հայութեան ներքին
միասնականութիւնը ամրացնելու ան-
հրաժեշտութիւնը, յատկապէս երկիրը
դիմագրաւող ներկայ տագնապալից
պայմաններուն մէջ:

**ՀԱՐԱԲԱՅԻՆ ԼԻՔԱՆԱՆԻ ՄԵՋ ԾԱՌԱՅՈՂ
ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՉԻՆՈՒՈՐՆԵՐԸ
ԱՅՑԵԼԵՑԻՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱԿԱՆՔ**

Երկուշաբթի, 28 Նոյեմբերին, Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետության դեսպան Վահագն Աթաբեկեանի առաջնորդությամբ, հարաւային Լիբանանի Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (Մ.Ա.Կ.) խաղաղապահ ոյժերու մէջ ծառայող հայկական բանակի շուրջ 40 զինուորներ, իրենց հրամանատարին գլխաւորութեամբ, այցելեցին Անթիլիասի Մայրավանք: Անոնք հանդիպում ունեցան Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հետ եւ ստացան անոր հայրական օրհնութիւնը:

Առաջին հերթին, խօսք առաւ Հայաստանի դեսպանը: Ան Վեհափառ Հայրապետին ներկայացուց վեց ամիսէ ի վեր հարաւային Լիբանանի մէջ ծառայութեան լծուած հայոց բանակին առաքելութիւնը՝ յայտնելով, որ բանակի զինուորները իրենց պատասխանատուութեան աւարտին կը վերադառնան հայրենիք՝ լծուելու իրենց զինուորական ծառայութեան: Նորին Ս. Օծութիւնը հայրական ջերմ սիրով ողջունեց մեր զինուորները, շեշտեց հայոց բանակին վիճակուած կարեւոր դերը Հայաստանի պաշտպանութեան, անոր հողային ամբողջականութեան եւ անվտանգութեան գծով: Հայրապետը բարձր գնահատեց ազերիական յարձակումներուն դիմաց մեր բանակին ցուցաբերած մարտունակ ոգին եւ կարեւորութեամբ ընդգծեց հայոց բանակը վերակազմակերպելու անյետաձգելի հրամայականը՝ իբրեւ համագային առաջնահերթութիւն:

Յանուն զինուորներուն, հրամանատար Արտեմեան շնորհակալութիւն յայտնեց Վեհափառ Հայրապետին իր ջերմ ընդունելութեան եւ հայրական զօրակցութեան համար եւ այս առիթով յուշանուէր մը յանձնեց անոր:

Ապա, զինուորները շրջեցան Մայրավանքի շրջափակը եւ մօտէն ծանօթացան Կաթողիկոսարանի առաքելութեան զանազան մարզերուն:

**ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԱԼԵՔՔՕ ԵՒ ԱՆԻ
ՊԵՉԻՔԵԱՆ ԱՍՈՒԸ 200,000 ՏՈՒԱՐ
ՆՈՒԻՐԵՑ ԼԻՔԱՆԱՆԻ ԱՉԳԱՅԻՆ
ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՎԱՐԻՔԱԻՐ
ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ**

Յատուկ ուրախութեամբ կ'ուզենք յայտնել, որ ազգային բարերար տեր եւ տիկին Ալեքքօ եւ Անի Պեգիքեան ամուլը 200,000 տուար նուիրեց Կաթողիկոսարանին՝ տրամադրուելու համար Լիբանանի ազգային վարժարաններու կարիքաւոր աշակերտներուն որպէս կրթաթոշակ:

Յայտնենք, որ տեր եւ տիկին Ալեքքօ եւ Անի Պեգիքեանները հրաւիրուած էին ներկայ գտնուելու Ազգային Ընդհանուր Ժողովին, սակայն բանաւոր պատճառով չկարողացան ներկայ ըլլալ: Այս առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին ուղղած իրենց նամակին մէջ գրած էին հետեւեալը.- «Վեհափառ Տէր, այսօր, երբ բացումը կը կատարէք Ազգային Ընդհանուր Ժողովին, ես եւ տիկինս՝ Անին, մեր անհուն ուրախութիւնը եւ ամբողջական զօրակցութիւնը կը յայտնենք Ձեզի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Առողջական պատճառներով պիտի չկարենանք ներկայ գտնուիլ Կիլիկիոյ Ս. Աթոռին համար յատուկ կարեւորութիւն ներկայացնող այս ժողովին:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր համահայկական առաքելութեամբ կեդրոնական դեր գրաւած է Սփիւռքի մէջ, հոգեւոր ծառայութեան կողքին նաեւ Հայ Դատի հետապնդման, կրթական կեանքի զարգացման եւ հայ մշակոյթի ծաղկման մարզերէն ներս: Որեւէ ժամանակէ

աւելի մեծ է դերը, ամէն իմաստով, այս Ս. Աթոռին, մասնաւորաբար ըՍ-փիւռքի մէջ: Այսօր Դուք էք, սիրելի՛ Վեհափառ Հայր, առաջնորդը Անթիլիասի մեծ առաքելութեան եւ գայն կը կատարէք իմաստութեամբ, քաջութեամբ եւ մեր ժողովուրդի զաւակները ազգային գերագոյն իտեալներու շուրջ համախմբելու վճռակամութեամբ: Մենք, հեռաւոր Չուիցերիայէն, իբրեւ հաւատարիմ բարեկամը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմական Ս. Աթոռին, ուրախութեամբ ու հպարտութեամբ կը հետեւինք Ձեր հսկայ աշխատանքին: Անցնող երկու տարիներու ընթացքին կամովին, եւ միշտ խորհրդակցելով Ձեզի հետ, մեր գործնական զօրակցութիւնը յայտնեցինք Ձեզի՝ Լիբանանի հայութեան ընկերատնտեսական կարիքներուն օգտակար ըլլալու Ձեր հայրական ճիգին մէջ: Մեր սպասումն է, որ ժողովուրդի կարիքներուն օգտակար ըլլալու մեր նախանձախնդրութեան նաեւ միանան ունեւոր ազգայիններ՝ գործնապէս ցոյց տալով իրենց ազգային ոգին:

Այս առիթով ես եւ Անին որոշած էինք 200,000 (երկու հարիւր հազար) ամերիկեան տոլար դնել Ձերո՞ Սրբութեան տրամադրութեան տակ՝ Ձեր հայեցողութեամբ տրամադրելու Կաթողիկոսարանի ծրագիրներուն: Վեհափառ Տէր, դուք հայրական սիրով ու գնահատանքով ընդառաջելով մեր ջերմ փափաքին, Ձեր կարգին ուզեցիք, որ յիշեալ գումարը ամբողջութեամբ տրամադրուի Լիբանանի մեր ազգային վարժարաններու կարիքաւոր աշակերտներուն որպէս կրթաթոշակ: Ահաւասիկ Ձեր հայրական գուրգուրանքը հայ դպրոցին ու կարիքաւոր ընտանիքներուն նկատմամբ, որ ինքնին ցոյց կու տայ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ժողովրդանուէր ծառայութիւնը: Կը վստահեցնենք Ձեզ,

որ մենք Ձեզի հետ ենք եւ՝ Անթիլիասի ազգանուէր առաքելութեան կողքին»:

Յայտնենք, որ Ազգային Ընդհանուր Ժողովի ընթացքին, երբ անդրադարձ կատարուեցաւ Լիբանանի հայ գաղութին կատարուած տնտեսական օժանդակութեան, Վեհափառ Հայրապետը այս ծիրէն ներս յատուկ կերպով անդրադարձաւ տէր եւ տիկին Ալեքքօ եւ Անի Պեզիքեան ամուլին կատարած յաջորդական օժանդակութիւններուն՝ կարիքաւոր ընտանիքներուն եւ յատկապէս առողջապահական պարագաներուն: Նորին Ս. Օծութիւնը իր բարձր գնահատանքը յայտնեց ազգային բարերար ամուլին եւ այս առիթով նաեւ Ընդհանուր Ժողովին կարողացուեցաւ Վեհափառ Հայրապետին իրենց ուղղած նամակը, ուր նաեւ յիշուած էր ամուլին կատարած օժանդակութիւնը ազգային վարժարաններուն:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԻՄՆՍԱԶՅԻՆ
ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՍԸ
Կ՝ՕԺԱՆԴԱԿԵ ԿԱՐԻՔԱԽՈՐ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ ԵՒ ԿԸ ՀՈՎԱՆԱԽՈՐԸ
2023-2024 ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՁԱՆԻ
ԱՇՎԿԵՐՏՆԵՐՈՒ ԿՐԹԱԹՈՇՈՎԿԸ

7-9 Դեկտեմբեր 2022-ին, Ն.Ս.Օ. Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Հայրապետին նախագահութեամբ Անթիլիասի Մայրավանքին մէջ գումարուած Ազգային Ընդհանուր Ժողովի ընթացքին, յանուն Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմին, Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեան երախտիքի ու շնորհակալութեան խօսք առնելով՝ ուրախութեամբ յայտնեց, որ թեմը, 2023-2024 կրթական տարեշրջանին, Սուրիոյ մեր եղբայրներուն ու քոյրերուն գործնապէս զօրակցելու յանձնառութենէն մեկնած, ազգային վարժարաններ յաճախող 100 աշակերտի պիտի

տրամադրել կրթաթոշակի օժանդակություն, ինչպես նաև՝ նոյն թեմի ազգայիններեն եւ Ազգային Ընդհանուր Ժողովի պատգամաւոր Միեր Տեր Յովհաննէսեան, իր տիկնոջ՝ Սաթիկ Տեր Յովհաննէսեանի յիշատակին, պիտի հոգայ Հալեպի Քարէն Եփփէ Ճեմարան յաճախող 100 աշակերտի կրթաթոշակի ծախսերը:

«Երբ կ'ըսենք Լիբանան եւ լիբանանահայություն, ամէն բանէ առաջ, մենք կը հասկնանք մեր Կեդրոնը՝ Կաթողիկոսարանը եւ Կաթողիկոսարան ըսելով կը հասկնանք մեր խորհրդանիշը՝ Արամ Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսը. հետեւաբար, Վեհափառ Տեր, Ձեր օրհնութիւնը կը խնդրեմ, որ 2023-2024 տարեշրջանին, այս անգամ Լիբանանի ազգային վարժարաններուն համար, յանուն մեր պատգամաւորներուն ու մեր Ազգային Առաջնորդարանին, սկսիլ նոր հարիւր (100) աշակերտ հովանաւորելու ծրագրին, որպէսզի ըսենք մեր լիբանանահայ եղբայրներուն ու քոյրերուն, ո՛չ թէ անցնող տարիներուն, այլ յառաջիկայ տարի եւս եւ այնքան ատեն, որ Ամենակալը մեզի ոյժ կու տայ եւ եղբայրութիւնը ներկայութիւն է մեր կեանքին մէջ, պիտի շարունակենք իրարու հետ աշխատիլ եւ գործել, վասն հայ ժողովուրդի պայծառութեան եւ հայ դպրոցի առաւել կենսաւորման: Ուստի, Վեհափառ Տեր, կը փափաքինք հովանաւորել Լիբանանի Ազգային վարժարաններ յաճախող հարիւր (100) աշակերտի կրթաթոշակը եւս», յայտնեց առաջնորդ սրբազանը:

Անդրադառնալով ընդհանրապէս Լիբանանը եւ յատկապէս լիբանանահայութիւնը դիմագրաւող տնտեսական ահաւոր դժուարութիւններուն ու տագնապներուն եւ մեկնելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նկատմամբ թեմին ու անձնապէս ունեցած հաւատարմութենէն, Թորգոմ սրբազան յայտարարեց. «Դուք, Վեհափառ Տեր,

շատ լաւ գիտէք եւ մեր թեմի պատգամաւորները եւս լաւապէս կը գիտակցին, որ Արամ Ա. Կաթողիկոսը անձեռնմխելի ներկայութիւն եւ հեղինակութիւն է մեր ազգի ու հայ Սփիւռքի կեանքին մէջ: Եւ իբրեւ մէկ այլ խորհրդանիշը մեր թեմին ունեցած ե՛լ ակնածանքին, ե՛լ ջերմութեան, ե՛լ զօրակցութեան Ձերոյ Սրբութեան, այս նոր տարուան առիթով, ի պատիւ Ձեր անձին, Վեհափառ Տեր, մենք կը փափաքին Լիբանանի հազար (1,000) կարիքաւոր ընտանիքներու նոր տարուան բոլոր ծախսերը ապահովել՝ Ձեր տրամադրութեան տակ դնելով հարիւր հազար ամերիկեան տոլար (\$100,000), որպէսզի ի պատիւ Ձեզի բաշխուի մեր ժողովուրդի զաւակներուն:

Հետեւաբար, հետեւելով Ձեր օրհնակին, Ձեր խօսքին, Ձեր տիպարին, Վեհափառ Տեր, մենք խօսքէն գործի անցնելու աշխատանքին մէջ ենք: Պատիւը միայն Ձեզի եւ Ձեր ուղղութիւններուն»:

Արդարեւ, Վեհափառ Հայրապետը անդրադառնալով վերոյիշեալ զօրակցական արտայայտութիւններուն ու գործնական նախաձեռնութիւններուն՝ ըսաւ, որ մեր կեանքը շրջապատող տխուր պայմաններու մէջ նման նախաձեռնութիւններ կը գօտեպնդեն մեզ, որովհետեւ մեր կատարած ծառայութիւնն ու սրբազան առաքելութիւնը բոլորին ծառայութիւնն ու առաքելութիւնն է: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կեանքին մէջ «մենք» եւ «դուք» բաժանումներ չկան, այլ կայ միայն «մենք»ը, որ կ'օժանդակէ, կը զօրակցի ու կը ծառայէ հո՞ն, ուր կարիքը կայ: Այս առիթով, Հայրապետը ջերմօրէն ողջունեց ընդհանրապէս թեմերուն եւ ի մասնաւորի Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմին ունեցած յանձնառութիւնը թէ՛ Սուրիոյ եւ թէ Լիբանանի մեր ժողովուրդի զաւակներուն նկատմամբ:

ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱԲ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Չորեքշաբթի, 21 Դեկտեմբերի երեկոյեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս անելի քան մէկ ժամ տեւողութեամբ հանդիպում ունեցաւ Կաթողիկոսարանի հայագիտական կեդրոնի ուսանողներուն հետ:

Գնահատելէ ետք ուսանողներուն ցուցաբերած հետաքրքրութիւնը, Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ հայագիտական ուսմանց կարելորութեան եւ խօսեցաւ Ազգային Սահմանադրութեան հիմնական սկզբունքներուն վրայ պատրաստուած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կանոնագրութեան մասին: Ան բացատրեց, թէ ի՞նչ են Կանոնագրութեան իւրայատկութիւնները եւ ի՞նչ ձեւով կը գործէ Կաթողիկոսութեան վարչակազմակերպչական դրութիւնը ու գործընթացը: Ապա, Հայրապետը պարզեց թեմերու վարչական ու կազմակերպչական կառոյցը եւ Կաթողիկոսարաններէմ յարաբերութիւնը:

Իր խօսքին մէջ Նորին Ս. Օծութիւնը կարեւորեց ժողովուրդին գործօն մասնակցութիւնը Կաթողիկոսութեան եւ իր թեմերուն կառավարման ու առաքելութեան ծիրին մէջ՝ վեր առնելով մեր Ս. Աթոռին առնչուած վերոյիշեալ իւրայատկութիւնները: Հոսկ, Հայրապետը պատասխանեց ուսանողներուն կողմէ իրեն ուղղուած հարցումներուն:

Յայտնենք, որ Կաթողիկոսարանի հայագիտական կեդրոնը ունի 27 ուսանողներ: Յաճախակի առիթներով ուսանողները ունկնդիր կ'ըլլան Լիբանանէն, Սուրիայէն, Հայաստանէն եւ Սփիւռքի տարբեր գաղութներէ այցելու դասախօսներու:

Այժմ հայագիտական կեդրոնի տնօրէնն է Ահարոն Շիրտըմեանը. իսկ

կեդրոնի յանձնախումբին մաս կը կազմեն՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան, Տիգրան Ճինպաշեան եւ Շահան Գանտահարեան:

ԻՐԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԿՑՈՐԴԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՑ

Երկուշաբթի, 26 Դեկտեմբերին, Լիբանանի մօտ Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպանին փոխանորդ եւ մշակութային կցորդ՝ դոկտ. Զումէյլ Պակըրը այցելեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, ընկերակցութեամբ դեսպանատան բարձրաստիճան պատասխանատուներէն՝ դոկտ. Ալի Զասիրին:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ անդրադարձ կատարելու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Իրանի Իսլամական Հանրապետութեան յարաբերութեան եւ այդ ծիրէն ներս կրօնական երկխօսութեան, որ սկիզբ առած էր շուրջ 25 տարիներ առաջ: Վեհափառ Հայրապետը դիւանագետին պարզեց Ազրպէյճանի կողմէ Բերձորի միջանցքի փակումով անելի քան 120,000 հայ բնակչութիւնը դիմագրաւող տագնապը՝ իր այլազան երեսներով, եւ գնահատեց Իրանի հաւասարակշռուած մօտեցումը ընդհանրապէս Արցախի հարցին նկատմամբ: Դիւանագետը մօտէն ծանօթ ըլլալով Արցախի հարցին՝ յայտնեց, թէ հակառակ այն իրողութեան, որ Իրանն ու Ազրպէյճանը կրօնակից են, սակայն Իրանը միշտ եղած է ու կը մնայ իրաւունքի ու արդարութեան կողքին:

Յայտնենք, որ Ազգային Ընդհանուր Ժողովի կայացման օրերուն Իրանի երեք թեմերու առաջնորդ սրբազաններն ու պատգամաւորները ճաշի հիւրը եղան Լիբանանի մօտ Իրանի դեսպանին:

**ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՉ
Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՄ ԿՈՂՄԷ**

ԿԻՐԱԿԻ, 6 ՆՈՅՆՄԱՐԵՐ 2022: Թ. ԶԿՆԻ Ս. ԽԱՉԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագէց եւ քարոզէց՝ Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Գարակէօզեան:

ԿԻՐԱԿԻ, 13 ՆՈՅՆՄԱՐԵՐ 2022: Ժ. ԶԿՆԻ Ս. ԽԱՉԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագէց եւ քարոզէց՝ Հոգշ. Տ. Եսայի Աբղ. Էօրտէքեան:

ԿԻՐԱԿԻ, 20 ՆՈՅՆՄԱՐԵՐ 2022: ԺԱ. ԶԿՆԻ Ս. ԽԱՉԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագէց եւ քարոզէց՝ Հոգշ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիկեան:

ԿԻՐԱԿԻ, 27 ՆՈՅՆՄԱՐԵՐ 2022: Ա. ՅԻՍՆԱԿԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագէց եւ քարոզէց՝ Հոգշ. Տ. Արմէն Աբղ. Գալայճեան:

ԿԻՐԱԿԻ, 4 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2022: Բ. ՅԻՍՆԱԿԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագէց եւ քարոզէց՝ Հոգշ. Տ. Առաքել Աբղ. Գատէճճեան:

ԿԻՐԱԿԻ, 11 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2022: Գ. ՅԻՍՆԱԿԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագէց՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան եւ իր Հայրապետական պատգամը փոխանցեց՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս:

ԿԻՐԱԿԻ, 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2022: Դ. ՅԻՍՆԱԿԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագէց եւ քարոզէց՝ Գերպ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Վարդանեան:

ԿԻՐԱԿԻ, 25 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2022: Ե. ՅԻՍՆԱԿԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագէց եւ քարոզէց՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան: